Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
Շաբաթօրյա դպրոցի համար

ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ

Բյորգե Ծանտց

Բովանդակություն

Դաս 1. 27.06–03.07 ԱՍՏԾՈ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ 4
Դաս 2. 04.07–10.07 ԱԲՐԱՀԱՄ. ԱՌԱՋԻՆ ՄԻՍԻՈՆԵՐԸ 13
Դաս 3. 11.07–17.07 ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԻՍԻՈՆԵՐԸ 22
Դաս 4. 18.07–24.07 ՍԱԳԱ ՀՈՎՆԱՆԻ ՄԱՍԻՆ 31
Դաս 5. 25.07–31.07 ԳԵՐԻ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ 40
Դաս 6. 25.07–31.07 ԵՍԹԵՐՆ ՈՒ ՄՈՒՐԹՔԵՆ 49
Դաս 7. 08.08–14.08 ՀԻՍՈՒՍԸ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ Է 58
Դաս 8. 15.08–21.08 ՄԻՋՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ. 66
Դաս 9. 22.08–28.08 ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԸ 75
Դաս 10. 29.08–04.09 ՓԻԼԻՊՈՍԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՍԻՈՆԵՐ. 84
Դաս 11. 05.09–11.09 ՊՈՂՈՍ. ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԿԱՆՉՎԵԼԸ 93
Դաս 12. 12.09–18.09 ՊՈՂՈՍ. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼՈՒՐԸ 102
Դաս 13. 09.09–25.09 ՊԵ՞ՏՔ Է ԼՍԻ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ 112

ԵՐԵՎԱՆ
2015

Մեծ հանձնարարությունը

«Եվ Հիսուսը մոտ գալով նրանց հետ խոսեց և ասաց. Ամեն իշխանությունն ինձ տրվեց երկնքում և երկրում. Ուրեմն գնացե՛ք բոլոր ազգերը աշակերտեցե՛ք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանց սովորեցնելով, որ ամենն, ինչ որ ձեզ պատվիրեցի, պահեն. և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհի վերջը» (Մատթեոս 28.18-20):

Ավելի պարզ ի՞նչ կա: Ահա Հիսուսը՝ հարություն առած Հիսուսը, այն Հիսուսը, Ում երկրպագում էին աշակերտները (համար 17), եկեղեցու պատմության արշալույսին Իր ժողովրդին կոչ է անում ծառայության և նրանց առջև խնդիր է դնում. աշակերտներ դարձրեք աշխարհի բոլոր ժողովուրդներին: Եվ վերջ:

Ավելին, ակնհայտ կապ է նկատվում Գալիլեայում տասնմեկ աշակերտներին ասված այդ բառերի և այն խոսքերի միջև, որ ասվեցին շատ տարիներ անց Հովհաննեսին՝ Պատմոս կղզում. «Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ հավիտենական ավետիք ուներ, որ ավետարաներ երկրի վրա բնակվողներին, և ամեն ազգի և ցեղի և ժողովրդի: Եվ մեծ ձայնով ասում էր. Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան, որովհետև նրա դատաստանի ժամը եկավ. և երկրպագեցեք երկինքը և երկիրը և ծովը և ջրերի աղբյուրները Ստեղծողին» (Հայտնություն 14.6,7, տե՛ս նաև 8-12 համարները):

Հայտնություն 14-րդ գլխի երեք հրեշտակների պատգամը, կարելի է ասել, Մեծ հանձնարարությունն է, որ տրվել է երկրային պատմության վերջին օրերի պատմության համատեքստում:

Այսպիսով մենք համոզվում ենք, որ Աստված Իր եկեղեցուն, Իր ժողովրդին հանձնարարել է գնալ և Ավետարանի լուրը տարածել ողջ աշխարհում: Ճշմարտությամբ կիսվելը Հիսուսի և այն մասին, ինչ Նա արել է (Հովհաննես 3.16), այժմ անում է (Հռոմեացիս 8.34) և անելու է ապագայում (Ա Թեսաղոնիկեցիս 4.16) մեզ համար՝ ահա՛ թե որն է մեր առաքելությունը:

Բուն «առաքելություն» բառը նշանակում է «ուղարկել կամ ուղարկվել՝ ծառայություն/պարտականություններ կատարելու համար»: Այսինքն՝ այդ մարդկանց հանձնարարված է ինչ-որ բան անել: Մեծ հանձնարարության դեպքում նրանց առաջադրանքն է՝ աշխարհում Ավետարանի ճշմարտության տարածումը:

Այս եռամսյակ մենք կքննարկենք առաքելությունը (միսիա)՝ առաջին հերթին որպես Աստծո միջոցներից մեկը՝ Ավետարանը հասցնել նրանց, ովքեր դեռ չգիտեն դրա մասին: Առաքելությունը Աստծո վիթխարի աշխատանքի հիմքն է՝ մարդկության փրկության համար: Մենք նաև իմանում ենք, թե ինչպես է ի կատար ածվել Աստծո մեծ նշանակումն աստվածաշնչյան հերոսների կյանքում, ում Նա հանձնարարեց միսիոներներ դառնալ մոլորյալների համար:

Ամփոփելով՝ նշենք, որ քրիստոնեական առաքելությունը Աստծո առաքելությունն է, ոչ թե մերը: Այն սկիզբ է առնում Տիրոջ սրտից: Այն հիմնված է Նրա սիրո վրա: Եվ օգտագործվում է Աստծո կամքով:

Այս եռամսյակի դասերին մենք կջանանք ավելի խորը հասկանալ Աստծո առաքելության բնույթը և դրան մասնակցելու կարևորությունը: Մենք դրանցում կքննարկենք նաև փրկության հետևյալ մոդելը.

1. Աստված արարել է տղամարդուն ու կնոջը և նրանց օժտել կամքի ազատությամբ:
2. Առաջին մարդիկ չարաշահեցին այդ ազատությունը՝ չհնազանդվելով Աստծուն, և նրանք ստիպված եղան հեռանալ դրախտից:
3. Աստված չէր կարող ստիպողաբար նրանց դրախտ վերադարձնել:
4. Նա ուղարկեց Իր Որդուն, որ Նա մահանա մարդկանց փոխարեն և այդպիսով նրանց հաշտեցնի Հոր հետ:
5. Աստծո առաքելությունը՝ առաջարկված փրկության մասին բոլոր մարդկանց պատմելն է՝ նրանց առջև բացելով փրկագնման ճանապարհը:

Առաքելությունը, ամենասկզբնական փուլում, ողջ աշխարհին պատմելն է Հիսուսի և հանուն մեզանից յուրաքանչյուրի Նրա կատարած սխրանքի մասին, ինչպես նաև այն մասին, ինչ Նա խոստանում է անել մեզ համար հիմա և հավերժության մեջ: Այլ խոսքերով՝ մենք, որ գիտենք այդ խոստումների մասին, կոչված ենք մյուսներին էլ պատմելու դրանց մասին:

Բյուրգե Ծանտց, փիլիսոփայության դոկտոր (Ֆուլլերի ինստիտուտի շրջանավարտ), դասավանդում է Լոմա-Լինդայի համալսարանում: Նա և իր կինը՝ Այրիսը, որպես միսիոներներ՝ 14 տարի ծառայել են Աֆրիկայում և Միջին Արևելքում:

Համահեղինակ Սթիվեն Ուեյն Թոմփսոնը մինչև թոշակի անցնելը եղել է (1984-1990) Անգլիայի Նյուբոլդի քոլեջի տնօրենը, աստվածաբանական ֆակուլտետի դեկանը, ինչպես նաև դասախոսել է Ավստրալիայի Ավոնդեյլյան քոլեջում (1991-2008):

Դաս 1
Հունիսի 27–հուլիսի 3

ԱՍՏԾՈ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Ծննդոց 1.26-28, 2.15-17, Ա Հովհաննես 2.16, Հովհաննես 3.14,15, Բ Կորնթացիս 5.21, Մատթեոս 5.13.14:

Հիշելու համարը.
«Ահա ես նրան ժողովուրդների վկա եմ դրել, ազգերի առաջնորդ և հրամանատար» (Եսայիա 55.4):

Այսօր մեր աշխարհում իշխում է անկարգությունը, և մենք՝ որպես մարդ, պատասխանատու ենք դրա համար: Մենք մեղավորներ ենք, ընկած արարածներ, ում էությունը մինչև ուղնուծուծը ներծծված է չարով: Որքան էլ մեզ դուր գա մեր մասին մտածել որպես կատարելագործվողների, զարգացողների, պատմությունը, անցյալ դարերը խոսում են հակառակի մասին: Դեռևս չապրելով այս դարի անգամ մեկ քառորդը՝ մենք մեր առջև ամենևին էլ ուրախալի պատկեր չենք տեսնում: Եթե անցյալը կանխորոշում է ապագան, ապա այն ամենը, ինչ մենք կարող ենք ակնկալել ապագայում, դա, ինչպես ասում էր անցյալի մի բրիտանացի քաղաքագետ. «Արյուն է, քրտինք և արցունքներ»:

Սակայն դեռ ամեն բան չէ, որ կորած է: Հիսուս Քրիստոսը մահացել է մեր մեղքերի համար, և Նրա մահվան շնորհիվ մենք փրկության, վերականգնման և լիակատար նորոգման հույս ունենք: «Եվ տեսա նոր երկինք և նոր երկիր, որովհետև առաջի երկինքը և երկիրն անցան, և էլ ծով չկա» (Հայտնություն 21.1):

Մենք *չենք* թողնվել ճակատագրի քմահաճույքին՝ սառն ու անտարբեր տիեզերքի անծիր տարածության մեջ, որպեսզի փորձենք ինքնուրույն ինչ-որ կերպ գոյատևել: Մենք երբեք չէինք կարող դա անել. մեր դեմ համախմբված ուժերը մեզանից անհամեմատ ավելի հզոր են: Հենց այդ պատճառով, դեռևս նախքան աշխարհի արարումը, Աստված մշակեց փրկության ծրագիրը, որպեսզի մեր փոխարեն անի այն, ինչ մենք երբեք չէինք կարողանա:

Միաշաբթի **Հունիսի 28**

Աստված արարեց տղամարդուն և կնոջը

Մարդկության տված մեծագույն հարցերից մեկը հետևյալն է. «Որտեղի՞ց եմ ես ծագում»: Աստվածաշնչի առաջին երկու գլուխներում (ինչպես և ողջ Աստվածաշնչում) մեզ տրված է այս, ինչպես շատերը կասեին, ամենակարևոր հարցի պատասխանը, որ մարդը կարող է տալ ինքն իրեն: Չէ՞ որ, թերևս, միայն իմանալով, թե որտեղից ենք մենք ծագում, մենք սկսում ենք հասկանալ, թե ովքեր ենք մենք, ինչի համար գոյություն ունենք, ինչպես պետք է ապրենք և ուր ենք գնում:

Կարդացե՛ք Ծննդոց 1-ին և 2-րդ գլուխները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Ծննդոց 1.26-28-ին: Ելնելով այս տեքստերից՝ ասացե՛ք, թե մարդու արարման գործընթացն ինչով է տարբերվում մնացած ողջ արարումից: Ի՞նչ առանձնահատուկ բան կարելի է նշել մարդու արարման գործընթացի մեջ: _____

_____

_____

1. Տղամարդն ու կինը արարվեցին վերջում, արարման շաբաթվա ավարտին: Նրանց հայացքի դիմաց բացվեց ողջ արարչագործությունը, որ նրանք պետք է ուսումնասիրեին և որի մասին պետք է հոգ տանեին:

2. Տղամարդու և կնոջ արարումը տարբերվում էր այլ էակների արարումից: Մինչ այդ պահը աստվածային հրամանն էր՝ «Թո՛ղ լինի» (լույս, հաստատություն, ջուր, ձկներ և թռչուններ, կենդանիներ և այլն): Իսկ հիմա հրամանը փոխարինվեց «մարդ ստեղծենք» համաձայնությամբ: Աստվածության բոլոր երեք Անձերը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, քննարկում էին դա: Չնայած այն բանին, որ այս երկու գլուխները նկարագրում են երկրի և այն ամենի արարումը, ինչով այն լեցուն էր, դրանց գլխավոր թեման մարդու արարումն էր:

3. Տղամարդն ու կինը արարվեցին Աստծո պատկերով ու նմանությամբ. այդպիսի բան ասված չէ ոչ մի ուրիշ արարածի մասին: Թեև այս համարը չի բացատրում, թե հատկապես ինչ է նշանակում արարված լինել Աստծո պատկերով և նմանությամբ, սա, ամենայն հավանականությամբ, նշանակում է, որ մարդիկ որոշակիորեն արտացոլում էին իրենց Արարչի էությունը: Քանի որ մարդիկ, ի տարբերություն մյուս արարածների, ունեին բարոյական հատկանիշներ (թիթեռները, թեկուզև հիասքանչ են, չեն տառապում

բարու և չարի հարցերով), կարելի է եզրակացնել, թե Աստծո պատկերով և նմանությամբ արարված լինելը նշանակում է որոշ չափով արտացոլել Աստծո բնավորությունը:

4. Տղամարդու և կնոջ համար նախատեսված էր տիրել և իշխել մյուս արարածներին՝ երկրի վրա ներկայացնելով Աստծուն: Այս կոչումը կապված է պատասխանատվության հետ:

Աստվածաշնչի առաջին գլուխը մեզ ներկայացում է մարդկանց, բայց ոչ մեկուսացված: Մենք գոյություն ունենք Աստծո հետ սերտ կապի մեջ: Մի՞թե սա չի խոսում այն մասին, որ մեր կյանքում Աստված պետք է դառնա գլխավորը: Մենք կարո՞ղ ենք առանց Նրա մեզ լիարժեք համարել: Տե՛ս նաև Գործք առաքելոց 17.28-ը:

Երկուշաբթի **Հունիսի 29**

Կամքի ազատությունը

Արարման նկարագրության մեջ հիշատակվում է Աստծո նախազգուշացումը՝ չուտել «բարու և չարի գիտության ծառից» (Ծննդոց 2.9): Այդպիսով, մենք տեսնում ենք, որ հենց սկզբից մարդն օժտված էր բարոյական հատկանիշներով, ինչը մենք չենք տեսնում այլ էակների մեջ: Ինչպես մենք խոսում էինք երեկ, բարոյական դատողության ընդունակությունը մարդկանց մեջ Աստծո պատկերի արտացոլման նշաններից մեկն է:

Ծննդոց 2.15-17-ն ի՞նչ է ասում մարդու կամքի ազատության մասին: _____

_____

_____

Աստված կարող էր մարդկանց արարել այնպիսին, որ նրանք ինքնաբերաբար հնազանդվեին Իր կամքին: Այդպես ստեղծվեցին մյուս արարածները, ինչպես լույսը, արևը, լուսինն ու աստղերը: Դրանք ենթարկվում են Աստծուն՝ առանց որևէ ընտրության: Դրանք Աստծո կամքը կատարում են ինքնաբերաբար՝ բնության օրենքների միջոցով, որոնք ղեկավարում են դրանց գործողությունները:

Սակայն տղամարդու և կնոջ արարումը առանձնահատուկ էր: Աստված նրանց արարել էր Իր համար: Տերը ցանկանում էր, որ հենց իրենք կատարեն իրենց ընտրությունը, որ իրենք ընդունեն Նրան ծառայելու որոշումը, առանց հարկադրանքի: Հակառակ դեպքում նրանք

չէին կարող սիրել Նրան, քանի որ սերը՝ ճշմարիտ սերը, պետք է դրսևորվի ազատորեն:

Մարդու կամքի ազատությունը ելնում է Աստծուց, Նա պաշտպանում և պահպանում է այն: Արարիչը չի միջամտում՝ տղամարդկանց և կանանց կողմից խորն ու հավերժական ընտրություն կատարելու հարցին: Սխալ ընտրությունն իր հետևից բերում է հետևանքներ, երբեմն՝ սոսկալի, սակայն մեր վսեմ Տիրոջ բնավորությունը հնազանդություն պարտադրելը չէ:

Մարդու ազատ կամքի սկզբունքն արտացոլվում է երեք դրսևորումներում.

Կրոնի մեջ - Ամենակարող Աստվածը չի կառավարում մարդու կամքն ու անձնական ընտրությունը:

Բարոյականության մեջ - մարդիկ բարոյական պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների համար:

Գիտության մեջ - մարմնի և ուղեղի արձագանքը ոչ լիովին է որոշվում պատճառներով և հետևանքներով: Այո՛, ֆիզիկայի օրենքները նկատելի են մեր արձագանքներում, սակայն կամքի ազատությունը նշանակում է, որ մենք ընտրություն ունենք մեր գործողությունների հարցում, հատկապես՝ բարոյականության հարցերում:

Ի՞նչ բարոյական որոշումներ պետք է ընդունեք դուք առաջիկա մի քանի ժամվա, օրվա, շաբաթվա ընթացքում: Դուք ինչպե՞ս կարող եք համոզվել, որ ճիշտ եք օգտագործում ընտրության ազատության սրբազան պարգևը: Խորհեցե՛ք այդ պարգևի սխալ օգտագործման հետևանքների մասին:

Երեքշաբթի **Հունիսի 30**

Մեղանչումը

«Եվ կինը տեսավ, որ ծառը լավ էր ուտելու համար, և թե հաճելի էր աչքերին, և փափագելի է ծառը նայելու համար, առավ նրա պտղից և կերավ, և իր հետ իր մարդին էլ տվեց, և նա կերավ: Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և իմացան, թե մերկ են, և թզենու տերևներ կարեցին, և իրենց համար ծածկոցներ շինեցին» (Ծննդոց 3.6,7):

Պտուղն ուտելը, ամեն տեսակ համատեքստից դուրս, մեղք չէ: Սակայն մենք պետք է ուշադրություն դարձնենք այն հանգամանքին,

թե երբ տեղի ունեցավ դա: Ադամն ու Եվան ազատ էին իրենց կամքի արտահայտության մեջ, քանի որ արարվել էին Աստծո կողմից՝ Նրա պատկերով: Դա ներառում էր ազատությունը, բայց նաև պարտականությունը՝ կատարել Աստծո հրամանները: Նրանք պտուղը կերան ոչ թե խիստ անհրաժեշտությունից ելնելով, այլ իրենց ընտրությամբ: Դա Ադամի ու Եվայի ազատ կամքի արտահայտությունն էր՝ չհնազանդվել Տիրոջ հստակ ու պարզ հրամաններին:

Նույն կերպ էլ մենք պետք է վճռենք մեզ համար՝ հետևե՞լ Աստծուն, պատվե՞լ Աստծո Խոսքը, թե՞ բացահայտորեն անտեսել այն: Աստված ոչ ոքի չի ստիպի հավատալ Իր Խոսքին: Նա մեզ երբեք չի հարկադրի հնազանդվել կամ սիրել Իրեն: Տերը մեզանից յուրաքանչյուրին թույլ է տալիս ընտրել, թե որ ճանապարհով գնալ: Սակայն արդյունքում մենք պետք է պատրաստ լինենք՝ ապրելու մեր ընտրության հետևանքներով:

Ճաշակելով պտուղը՝ դրանով իսկ Ադամն ու Եվան Աստծուն ասացին, որ Նա վատ կառավարիչ է: Նրա իշխանության լիակատարությունը դրվեց կասկածի տակ: Նրանք անհնազանդություն դրսևորեցին և արդյունքում մեղք և մահ բերեցին մարդկային ցեղին:

> **«Ուստի Եհովա Աստվածը հանեց նրան Եդեմի պարտեզից, որ երկիրը մշակի, որտեղից որ վերցվել էր: Եվ արտաքսեց Ադամին և Եդեմի պարտեզի դիմացի կողմից դրեց Քերովբեներին և ամեն կողմ դարձող բոցեղեն սուրը՝ կենաց ծառի ճանապարհը պահելու համար» (Ծննդոց 3.23,24):**

Ադամն ու Եվան ստիպված եղան լքել դրախտը: Դա անհրաժեշտ և միևնույն ժամանակ գթասիրտ հետևանք է: Տերն ապստամբած մարդկությանը թույլ չէր տա հասնել կենաց ծառին: Սիրելով և հոգ տանելով՝ Նա Ադամին ու Եվային մեկուսացրեց պտուղներից, որոնք անմահ կդարձնեին նրանց՝ դրանով իսկ հավերժացնելով այն սոսկալի վիճակը, որին նրանց հասցրել էր մեղքը: (Միայն պատկերացրե՛ք հավիտենական կյանքը ցավով ու տառապանքով լեցուն աշխարհում): Ադամն ու Եվան վտարվեցին հիասքանչ այգուց, որպեսզի մշակեն պակաս բերրի հողը՝ դրախտի սահմաններից դուրս:

> **Ա Հովհաննես 2.16-ը կարդացե՛ք այսօրվա դասի համատեքստում: Ի՞նչ նման պահեր ենք գտնում այս տեքստում և մեղանչման նկարագրության մեջ: Այս փորձություններն ինչպե՞ս են դրսևորվում մեր կյանքում, և ինչպե՞ս կարող ենք հաղթահարել դրանք:**

Չորեքշաբթի **Հուլիսի 1**

Աստծո նախաձեռնությունը մեր փրկության մեջ

Աստվածաշունչը ցույց է տալիս, որ մեր նախածնողների մեղանչումից հետո հենց Աստված գնաց նրանց որոնելու, և ոչ թե նրանք՝ Աստծուն: Ավելին, տղամարդն ու կինը փորձեցին թաքնվել Տիրոջ ներկայությունից: Որքա՜ն ուժեղ փոխաբերություն է մարդկային ցեղի անկման խորությունը նկարագրելու համար. նրանք փախան Նրանից, Ով որոնում էր իրենց, միակից, Ով կարող էր փրկել իրենց: Ադամն ու Եվան դա արեցին Եդեմում, և այսօր մարդիկ նույնն են անում՝ չնայելով Սուրբ Հոգու ազդեցությանը:

Բարեբախտաբար, Աստված չհրաժարվեց մեր նախածնողներից, Նա չի հրաժարվում նաև մեզանից: Ադամին ու Եվային ուղղված առաջին կանչից՝ «Ո՞ւր ես», (Ծննդոց 3.9) մինչև այսօր էլ Նա դեռևս կանչում է մեզ: Իրականում Աստված դարձավ առաջին միսիոները:

«Աշխարհին աննման պարգև ուղարկելով՝ ի դեմս Իր Որդու, Աստված ողջ երկիրը շրջապատեց շնորհի մթնոլորտով՝ նույնքան իրական, որքան օդի մթնոլորտն է: Ամենքը, ովքեր ձգտում են գտնվել այդ կենսատու մթնոլորտում, կապրեն և կաճեն՝ մինչև Քրիստոս Հիսուսում կատարյալ հասակը» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 68):

Աստծո միսիոներական գործունեության մեծագույն դրսևորումը դարձավ, իհարկե, Հիսուսի մարմնավոր գալուստը և Նրա ծառայությունը: Ու թեև Քրիստոսը երկիր եկավ, որպեսզի շատ բան անի՝ հաղթի սատանային, ցույց տա, որ Աստծո օրենքը հնարավոր է կատարել, Նրա գալստյան հիմնական պատճառը խաչի մահն էր՝ հանուն մարդկության, նրան մեղքի անխուսափելի հետևանքից՝ մահից փրկելու ցանկությունը:

Ստորև բերված համարներից յուրաքանչյուրից ի՞նչ ենք իմանում մենք Հիսուսի մահվան մասին:

Հովհաննես 3.14,15 _____

_____

Եսայիա 53.4-6 _____

_____

Բ Կորնթացիս 5.21 _____

_____

Աստված Նրան, որ «մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց»: Ահա՛ այն բանի գինը, որ մենք «Աստծո արդարությունը լինենք նրանում»:

Այդ ծրագիրն անվանվեց «քավչարար զոհ». Հիսուսն Իր վրա է վերցնում մեր մեղքերը և տառապում է որպես մեղավոր, որպեսզի մենք, մեղսավոր լինելով, կարողանանք արդար համարվել Տիրոջ առջև, ինչպես Քիստոսն Ինքը:

Հինգշաբթի **Հուլիսի 2**

Առաքելության խորհրդանիշները

Առաքելությունը մարդկության փրկության համար Աստծո նախաձեռնությունն է: Տիրոջ փրկարար առաքելությունը պայմանավորված է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Նրա տածած սիրով: Չկա առավել խորը պատճառ: Աստված Քրիստոսին ուղարկեց ողջ աշխարհին փրկություն բերելու առաքելությամբ: Հովհաննու Ավետարանում բովանդակվում է Հիսուսի առաքելության վիթխարի մասշտաբի ավելի քան քառասուն նկարագրություն: (Տե՛ս, օրինակ, Հովհաննես 3.17, 12.47): Ինչպես Հիսուսն ուղարկվեց Հոր կողմից, որպեսզի փրկի աշխարհը, այնպես էլ Նա ուղարկում է Իր աշակերտներին՝ ասելով. «Ինչպես Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհաննես 20.21):

Կարդացե՛ք Մատթեոս 5.13,14: Առաքելության ի՞նչ երկու խորհրդանիշներ ենք մենք գտնում այդ տեքստերում, և ի՞նչ են նշանակում դրանք: _____

_____

_____

Աղն ու լույսը խորհրդանշում են՝ մարդկության վրա քրիստոնեական ազդեցության հիմնական գործառույթները: Այն դեպքում, երբ աղն աշխատում է ներսից՝ միավորվելով սննդի հետ, լույսն արտաքին ազդեցություն է գործում՝ լուսավորելով ամեն բան, ինչ ընդգրկում է: *Հող* բառը աղի հետ փոխաբերությամբ խորհրդանշում է տղամարդկանց և կանանց, ում հետ պետք է շփվեն քրիստոնյաները, իսկ *աշխարհի լույս* արտահայտությունը վերաբերում է այն աշխարհին, որ լի է խավարի մեջ ապրող մարդկանցով, ովքեր լուսավորման կարիք ունեն:

Իսրայելի զավակները կանչված էին ապրելու համաձայն Աստծո տված բարոյական նորմերի և առողջության սկզբունքների: Նրանք պետք է լինեին լույս, որ լուսավորում և գրավում էին՝ դուք «աշխարհի լույսն եք» (Եսայիա 49.6): Նրանց ընդհանուր բարգավաճումը՝

առողջության, հարստության և շաբաթը՝ որպես Տիրոջ օր պատվելու, ինչպես նաև մյուս պատվիրանների մեջ, պետք է շրջակա ժողովուրդներին վկայեին Տիրոջ վիթխարի գործերի և փրկության մասին: Այդ բարգավաճումը տեսած ժողովուրդները կմտերմանային նրանց հետ և կիմանային Տիրոջ մասին (այդպիսին էր սկզբնական ծրագիրը):

Գալով մեր աշխարհը՝ Հիսուսը բացահայտեց նաև *աղի* խորհրդանիշի մեկ այլ տեսանկյունը վկայության նշանակության մեջ: Աշխարհի վրա իրենց ազդեցությամբ քրիստոնյաները պետք է կանխարգելեն դրա քայքայումը: Ոչ քրիստոնյաներին չար գործերից հաճախ հետ են պահում բարոյական սկզբունքները, որոնք պայմանավորված են քրիստոնեական ազդեցությամբ: Քրիստոնյաներն աշխարհի վրա բարենպաստ ազդեցություն են գործում ոչ միայն իրենց ներկայությամբ, նրանք նաև համագործակցում են մարդկանց հետ՝ նրանց հետ կիսվելով փրկության լուրով:

Լույս և/կամ աղ լինելով՝ դուք և ձեր եկեղեցին որքանո՞վ եք լավ վկայում շրջապատող աշխարհին: Ձեր լույսը հազիվ է առկայծում, իսկ աղը կորցրե՞լ է իր համը: Եթե այդպես է, չարժե՞ արդյոք վերածնունդ և բարեփոխում սկսել սեփական անձից:

Ուրբաթ **Հուլիսի 3**

Հետագա ուսումնասիրության համար

Մենք քննարկեցինք Աստծո միսիոներական էության որոշ տեսանկյուններ: Առաքելությունը եռամիասնական Աստծո խոշոր նախագիծն է: Առաքելությունը գերազանցապես կապված է Հիսուս Քրիստոսի հետ մարդկային մարմնով, Ում գալուստը քրիստոնեական հավատի ու ծառայության գլխավոր թեման է: Իր կյանքով և մահվամբ Հիսուսը շարունակեց փրկության ուղին ողջ մարդկության համար: Մենք՝ որպես Նրա հետևորդներ, Նրա միսիոներներ, պետք է մարդկանց հասցնենք բարի լուրն այն մասին, ինչ Քրիստոսն արել է նրանց համար:

«Երկրի վրա Քրիստոսի եկեղեցին ստեղծվեց միսիոներական նպատակներով, և Տերը ցանկանում է տեսնել, թե ինչպես է ողջ Եկեղեցին ուղիներ և միջոցներ որոնում, որոնց օգնությամբ նշանավոր և հասարակ մարդիկ կարող էին լսել ճշմարտության լուրը: Բոլորը չէ, որ կոչված են անձամբ աշխատանք կատարելու արտասահմանյան

դաշտերում, բայց բոլորը կարող են իրենց ներդրումն ունենալ այդ աշխատանքում՝ աղոթքներով և զոհաբերություններով՝ ի օգնություն միսիոներական աշխատանքի» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, 29):

Հարցեր քննարկման համար

1. Մտորե՛ք ծագման թեմայի մասին: Ինչո՞ւ է ծագումն այդքան կարևոր: Այս հարցի ճիշտ ըմբռնումն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու, թե ովքե՞ր ենք մենք, ո՞րն է մեր գոյության նպատակը:
2. Հետևյալ մեջբերումն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու, որ մեր աշխարհում գոյություն ունի ընտրության ազատություն, սեր և չարիք: «Այսպիսով, եթե Աստված ցանկանում է սիրող էակներ արարել (որպես Իր կատարյալ սիրո նախակերպար), հարկավոր է, որ Նա ազատ էակներ արարի, ովքեր իրենց ընտրությամբ կարող են տառապանք և չարիք բերել աշխարհ: Սիրո և ազատության փոխհարաբերությունները ենթադրում են, որ Աստված բարեհաճորեն թույլ կտա մեզ՝ աճելու սիրո մեջ մեր մարդկային ազատության միջոցով: Փաստորեն գոյություն ունի միայն երկու ճանապարհ. կա՛մ ազատ էակներին թույլ տալ ընտրելու սիրո բացակայության գործողությունները, կա՛մ էլ լիովին ազատվել սիրո արարածների ստեղծումից» (Ռոբերտ Ջ. ՇպիցերՍ, Աստծո գոյության նոր ապացույցներ. ժամանակակից ֆիզիկայի և փիլիսոփայության համագործակցությունը, 233):
3. Հիսուսի մահը սոսկ տեղական իրադարձություն էր, որը տեղի ունեցավ մի փոքրիկ ժողովրդի մեջ՝ հսկայական Հռոմեական կայսրությունում, գրեթե երկու հազար տարի առաջ: Սակայն այդ իրադարձությունը հավիտեական նշանակություն ունի յուրաքանչյուր մարդ էակի համար: Ինչպիսի՞ պատասխանատվություն ունենք մենք, որ գիտենք այդ իրադարձության ու դրա նշանակության մասին, նրանց առջև, ովքեր չգիտեն դա: Այլապես նրանք ինչպե՞ս կարող են իմանալ այդ մասին, եթե մենք չպատմենք նրանց:

Դաս 2
Հուլիսի 4-10

ԱԲՐԱՀԱՄ. ԱՌԱՋԻՆ ՄԻՍԻՈՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 12.1-3, 14.8-24, Եբրայեցիս 11.8-19, Գաղատացիս 3.6, Ծննդոց 12.6,7, 18.18,19:

Հիշելու համարը.

«Ինչպես որ Աբրահամը հավատաց Աստծուն, և այն նրա համար արդարություն համարվեց: Ուրեմն իմացե՛ք, թե նրանք, որ հավատից են, նրանք են Աբրահամի որդիներ: Գիրքն էլ առաջուց գիտենալով, որ Աստված հավատից է արդարացնում հեթանոսներին՝ առաջուց Աբրահամին խոստացավ, թե՝ Քեզանում պիտի օրհնվեն բոլոր ազգերը» (Գաղատացիս 3.6-8):

Երեք հիմնական համաշխարհային կրոնները՝ հուդայականությունը, քրիստոնեությունն ու մահմեդականությունը, հենց այնպես չէ, որ անվանվում են «աբրահամական». չէ՞ որ երեքից յուրաքանչյուրն, այսպես թե այնպես, արմատներով գնում են դեպի Աստծո այդ մեծ մարդը:

Թեև սովորաբար Աբրահամին համարում են հավատարմության հայտնի օրինակ, այս շաբաթվա դասին մենք նրա հավատարմությունը կդիտարկենք մեկ այլ տեսանկյունից: Մենք ցանկանում ենք նրան ներկայացնել որպես միսիոներ, ով կանչվեց Աստծո կողմից՝ գնալու մեկ այլ երկիր և մարդկանց վկայելու ճշմարիտ Աստծո, Արարչի ու Փրկչի մասին:

Աստված Աբրահամին ու նրա ընտանիքին նրանից հետո (տե՛ս Գաղատացիս 3.29) եռակի հանձնարարություն տվեց. (1) լինել Աստծո թագավորության մասին աստվածային ճշմարտության ստացողներն ու պահպանողները, ճշմարտություն, որ մարդկությունը կորցրել էր իր պատմության արշալույսին, (2) լինել միջոց, որը կապահովի Փրկչի գալուստը պատմության մեջ, և (3) որպես Աստծո հավատարիմ ծառաներ՝ լույս լինել ժողովուրդների համար, լույս նրանց համար, ում հարկավոր է իմանալ Տիրոջ մասին:

Միաշաբթի **հուլիսի 5**

Աբրահամի կանչվելը

«Եվ Եհովան ասաց Աբրահամին. Գնա՛ քո երկրից, և քո ազգականներից, և քո հոր տանից այն երկիրը, որ ես քեզ ցույց կտամ: Եվ ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ, և քեզ օրհնեմ, և քո անունը մեծացնեմ, և դու օրհնյալ կլինես: Եվ քեզ օրհնողներին կօրհնեմ և քեզ անիծողներին կանիծեմ. և երկրի բոլոր ազգերը քեզանով կօրհնվեն» (Ծննդոց 12.1-3):

Աբրամը, ում անունը նշանակում էր «բարձր հայր», իսկ հետո փոխվեց Աբրահամ՝ «բազմությունների հայր», մեծացել էր Ուրում, որ այսօր ժամանակակից Իրաքի տարածքն է: Աստված նրան կանչեց, որ դուրս գա իրեն քաջածանոթ սոցիալական ու կրոնական միջավայրից և վերաբնակվի անծանոթ մի երկրում, որտեղ Տերը հարյուր տարի վերափոխեց նրան՝ վերածելով «բոլոր հավատավորների հոր»: Գտնվելով ընտանեկան ու անձնական փորձությունների հորձանուտում՝ Աբրահամը դարձավ միսիոների նախակերպար, ով ծառայում էր մարդկանց մի քանի խմբերի, և հարգված առաջնորդ, ով վկայում էր Աստծո հանդեպ իր հավատի մասին:

Կարդացե՛ք Ծննդոց 12.1-3-ը: Մեզանից յուրաքանչյուրի համար կոնկրետ իրավիճակում կիրառելի ո՞ր սկզբունքներն ենք մենք գտնում այս համարներում: Մասնավորապես, ի՞նչ վերապրեց Աբրահամը, ինչը յուրովի կարող ենք վերապրել նաև մենք: Տե՛ս նաև Եբրայեցիս 11.8-10: _

_____

_____

_____

_____

Նահապետը կանչվեց, որպեսզի անցյալը թողնի հետևում և հավատի քայլ անի՝ հավատալով այն բանին, ինչն անհավանական էր թվում, անելու այն, ինչին իրեն կանչում էր Աստված: Եվ եթե նա հավատարմություն դրսևորի, աշխարհի բոլոր ժողովուրդներն օրհնություն կստանան:

Մեզանից շատերը, Աբրահամի նման, ենթակա են փորձությունների: Հնարավոր է՝ մենք չենք լսում Աստծո ձայնը, որ ուղղակիորեն դիմում է մեզ, բայց Նա մեզ է դիմում Իր Խոսքի դասերի և Իր նախախնամությամբ տեղի ունեցած իրադարձությունների միջոցով: Մեզանից

կարող է պահանջվել թողնել կարիերան, ապահովվածության հեռանկարն ու բարի համբավը, հնարավոր է՝ մենք ստիպված լինենք խզել լավ ու ձեռնտու կապերն ու բաժանվել ընտանիքից. ավելին, մենք, հնարավոր է, ստիպված լինենք ոտք դնել ինքնուրացության, դժվարությունների ու զոհերի ճանապարհին: Բայց կարելի՞ է չարձագանքել Տիրոջ կանչին:

Ծննդոց գրքում հրեան բառացի կկարդա. «Եվ Տերն ասաց Աբրահամին. գնա՛ քեզ համար քո երկրից»: Նրան ասվել էր գնալ «իր համար»՝ հանուն սեփական բարօրության: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ խոսքերը և դրանք կիրառենք մեր կյանքում:

Երկուշաբթի **Հուլիսի 6**

Աբրահամը վկայում է արքաներին

Աբրահամի ազգական Ղովտը շատ թափառումների ընթացքում էր ուղեկցել նրան: Բնակություն հաստատելով ջրի աղբյուրներով հարուստ Հորդանանի հովտում՝ նա հայտնվեց Սոդոմի այլասերված բնակիչների հասարակության մեջ (Ծննդոց 13.1-13): Ավելի ուշ նրան փրկեց Աբրահամը (Ծննդոց 14.11-16), իսկ հետո՝ երկու հրեշտակները (Ծննդոց 19):

Լսելով, որ իր ազգական Ղովտը փորձության մեջ է, Աբրահամը վճռեց օգնել նրան: Աբրահամը իր ենթականերից երեք հարյուր հոգիանոց ջոկատ հավաքեց Ղովտի փրկության համար: Սոդոմի կողմից բազմաթիվ թագավորներ էին մարտնչում, սակայն Աբրահամը հաղթող դուրս եկավ:

Կարդացե՛ք Ծննդոց 14.8-24-ը: Աբրահամի գործողություններն ի՞նչ են ասում մեզ նրա բնավորության, նրա հավատի և նրա Աստծո մասին: _____

_____

_____

_____

Հաղթված թագավորներին Աբրահամը հայտնեց Աստծո զորությունը: Անգամ այդ փրկարար գործողության ժամանակ «հավատացյալների հայրը» չկորցրեց ժողովուրդների համար օրհնություն լինելու իր կոչումը:

«Եհովայի երկրպագուն ոչ միայն մեծ ծառայություն մատուցեց երկրին, այլ նաև իրեն դրսևորեց որպես քաջարի մարտիկ: Ամենքը համոզվեցին, որ արդարությունը վախկոտություն չէ, և որ Աբրահամի հավատը նրա մեջ խիզախություն էր սերմանել՝ ճնշվածների իրավունքների պաշտպանության ժամանակ: Նրա հերոսական արարքը փառավորեց նրան բոլոր շրջակա ցեղերի մեջ, նրա վերադարձին Սոդոմի թագավորը ընդառաջ եկավ նրան, որ ողջունի հաղթողին: Նա պնդում էր, որ Աբրահամը ողջ ավարն իրեն վերցնի, և խնդրում էր միայն գերիներին վերադարձնել: Թեև, համաձայն սովորության, ավարտը պատկանում էր հաղթողին, Աբրահամը, որ այդ արշավանքը ձեռնարկել էր ոչ հանուն հարստության, հրաժարվեց իր համար օգուտ քաղել ուրիշների դժբախտություններից և միայն պայմանավորվեց, որ տրվի՝ իրավամբ իր դաշնակիցներին պատկանող մասը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 135):

Խորհեցե՛ք շրջապատողների հետ ձեր փոխհարաբերությունների մասին: Այդ մարդիկ ի՞նչ կարող են պատմել ուրիշներին ձեր հավատի մասին:

Երեքշաբթի **Հուլիսի 7**

Հավատի չափանիշը

Թեև Աբրահամին հազիվ թե կարելի է կատարյալ անվանել, սակայն նա Աստվածաշունչ մտավ որպես Աստծո մարդ, իսկ Նոր Կտակարանում նրա կյանքը հիշատակվում է որպես օրինակ հավատարմության և այն բանի, թե ինչ է նշանակում լինել հավատով արդարացված (տե՛ս Ծննդոց 15.6, Գաղատացիս 3.6):

Կարդացե՛ք Եբրայեցիս 11.8-19-ը: Այս տեքստերը ի՞նչ են ասում մեզ Աբրահամի հավատի մասին: Այս լուրը որքանո՞վ է կարևոր նրանց համար, ով ցանկանում է ավետարանել՝ ներդնելով բոլոր ջանքերն ու հնարավորությունները: _____

_____

_____

_____

_____

Տերը ցանկանում էր օգտագործել Աբրահամին, բայց նախ վերջինս պետք է թողներ իր անցյալը: Մենք ամենքս պետք է յուրացնենք այս

դասը, և հատկապես նրանք, ում անցյալը ներդաշնակ չի եղել Աստծո կամքին և օրենքին, իսկ դա, ըստ էության, մեզանից յուրաքանչյուրն է:

Ապշեցնում է նաև այն փաստը, որ Աբրահամը դուրս եկավ և «գնաց առանց գիտենալու, թե ուր է գնում» (Եբրայեցիս 11.8): Ժամանակակից միսիոներների մեծ մասը գիտի, թե ուր է գնում, գոնե՝ աշխարհագրական առումով: Բայց երբ մեզանից յուրաքանչյուրը հավատի հսկայական թռիչք է կատարում և իր սիրտը լիովին նվիրաբերում է Աստծուն, մենք իրականում չգիտենք (գոնե մոտ ապագայում), թե որտեղ կհայտնվենք (թեև երկարաժամկետ հեռանկարում մենք լիակատար վստահություն ունենք): Եթե մենք իմանայինք, այդքան հավատ չէր պահանջվի, հետևաբար՝ չիմացությունը հավատով կյանքի անհրաժեշտ պայմանն է:

Եվս մեկ կարևոր հանգամանք է այն, որ Աբրահամը սպասում էր «այն հիմունքով հաստատված քաղաքին, որի ճարտարապետը և արարիչն Աստված է» (համար 10): Մտքում Աբրահամը տեսնում էր ողջ պատկերը, նա գիտեր. ինչ էլ իրեն հանդիպի այստեղ, ինչ դժվարություններ և ճակատամարտեր էլ վերապրի, վերջում դա կգնահատվի:

Նա նաև գիտեր, որ պարզապես եկվոր չէր «խոստացված երկրում», այլ մեկը բազմաթիվ «օտարներից և պանդուխտներից երկրում» (համար 13): Այս աշխարհը և մեր կյանքն այստեղ, որքան էլ այժմ արժեքավոր թվան (չէ՞որ դա ամենն է, ինչ մենք ունենք), սա դեռ բոլորը չէ, ոչ էլ երկարատև հեռանկարում:

Եվ, իհարկե, Հին Կտակարանում հավատի մեծագույն օրինակը դարձավ այն, ինչ Աստծո ցուցումով պատրաստ էր անել Աբրահամը Մորիա սարի վրա:

Դուք գիտե՞ք անձնական օրինակով, թե ինչ է նշանակում հավատի քայլ անել և ինչպես: Ի՞նչ դժվարությունների եք դուք բախվել: Ի՞նչ ուրախություններ եք ունեցել: Իմանալով այն, ինչ դուք գիտեք հիմա, այն ժամանակ դուք ի՞նչը այլ կերպ կանեիք:

Չորեքշաբթի **Հուլիսի 8**

Պանդուխտ Աբրահամը

Աբրահամի կյանքն ուսումնասիրելիս մենք հայտնաբերում ենք, որ նրա հավատը անցել է կասկածների և Աստծո զորության հան-

դեպ անվստահության դեմ պայքարի բարդ ճանապարհ: Աբրահամի նախնիները կռապաշտ էին (Հեսու 24.4), և, հնարավոր է, դա բացատրում է Աստծո զորության նկատմամբ նրա ոչ լիարժեք վստահությունը: Երկու անգամ նա վախկոտություն դրսևորեց և Սառային խնդրեց ասել կիսաճշմարտությունը (Ծննդոց 12.11-13, 20.2): Նա ծիծաղեց (Ծննդոց 17.17), երբ իրեն ասվեց, որ ինքն ու Սառան որդի կունենան: Չնայած սխալներին՝ Տերը, միևնույնն է, օգտագործեց Աբրահամին, որովհետև վերջինս ցանկանում էր օգտագործվել Նրա կողմից, և այդպիսով Տերը կարող էր ձևավորել նրա բնավորությունը:

Աբրահամի՝ որպես բարենորոգչի և միսիոների բնավորության հղկման ևս մեկ եղանակ էին բազում թափառումները: Ճանապարհորդությունն ուսուցողական է ինքնին: Նա մարդու համար նոր գաղափարներ և փոփոխությունների հնարավորություններ է բացահայտում: Դեպի Երուսաղեմ ուխտագնացությունները հրեաների կրոնական կյանքի կարևոր մասն էին: Ուխտագնացները փոփոխություններ էին ապրում՝ անցնելով երկար տարածություններ, գիշերում էին տարբեր վայրերում, ուտում էին անսովոր սնունդ, ծանոթանում էին այլ կլիմայի և հանդիպում էին տարբեր մարդկանց. այս խոցելիությունը ամրապնդում էր նրանց հավատը: Զոհաբերությունների և ընծաների համակարգ, սրբազան պարեր և սաղմոսների սերտում ներառող երկրպագությունն օգնում էր Աստծո ժողովրդին՝ պահպանելու սեփական անհատականությունն ու ավանդույթները: Իր ծննդավայր Ուրից մինչև Քեբրոնում թաղվելն ընկած թափառումների ճանապարհին Աբրահամը տասնհինգ աշխարհագրական մարզ այցելեց: Կարևոր բեկումնային պահերի և միսիոներական դրվագների մեծ մասը նրա կյանքում կապված է հենց ճանապարհորդությունների հետ:

Ի՞նչ հոգևոր դասեր յուրացրեց Աբրահամը հետևյալ վայրերում:

Սյուքեմի ծովը (Ծննդոց 12.6,7) _____

_____

Քեբրոն (Ծննդոց 13.18-14.20) _____

_____

Մամբրե (Ծննդոց 18.1,20-33) _____

_____

Մորիա սար (Ծննդոց 22.1-14) _____

_____

Հինգշաբթի **Հուլիսի 9**

Աբրահամը որպես միսիոներ՝ իր սեփական տանը

«Ըստ որում, Աբրահամը մի մեծ և զորավոր ազգ է լինելու և երկրի բոլոր ազգերը նրանով օրհնվելու են: Որովհետև ես ճանաչեցի նրան, որ իր որդիներին և իրենից հետո իր տանը կպատվիրի, և նրանք Եհովայի ճանապարհը կպահեն, արդարություն և իրավունք անելու համար, որպեսզի Եհովան Աբրահամի վրա բերի այն, ինչ որ ասել է նրան» (Ծննդոց 18.18,19): Հավատարմության և Աստծուն ծառայելու մասին ի՞նչ կարևոր դասեր ենք տեսնում մենք այս տեքստերում: _____

_____

_____

«Աստված Աբրահամին կանչել էր ուսուցիչ լինելու, Նա նրան ընտրել էր որպես մեծ ժողովրդի հայր, որովհետև կանխատեսել էր, թե ինչպես է Աբրահամը իր զավակներին և իր ընտանիքը ուսուցանելու Աստծո Օրենքը: Աբրահամի ուսմունքի արդյունավետությունը բացատրվում էր իր սեփական կյանքի օրինակով: Նրա հսկայական ընտանիքը միավորում էր ավելի քան հազար մարդու, նրա անդամներից շատերը դարձի էին եկել հեթանոսությունից» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 187):

Միսիոներական գործունեությունն առավել հաջողակ կլինի, եթե ընտանեկան կյանքը համապատասխանի Աստծո մտահղացումներին: Աստվածաշնչյան պատմությունները և եկեղեցու պատմությունը վկայում են այն մասին, որ վաղ քարիտոնեական համայնքներն ստեղծվում էին ընտանիքների հիման վրա և առավել ընտանեկան էին: Աստծո կողմից Աբրահամին ընտրելու պատճառներից մեկն այն էր, որ Նա նրա մեջ ընդունակություն տեսավ՝ երեխաներին և ընտանիքի անդամներին ուղղորդելու դեպի Տիրոջ ճանապարհը: Ընտանիքների վերաբերյալ Աստծո մտադրությունը նույնն է, ինչ օրհնության վերաբերյալ, մասնավորապես՝ «արդարություն և իրավունք գործելը» (Առակաց 21.3):

Աբրահամի ընտանեկան կյանքի ո՞ր օրինակներն են ցույց տալիս, որ նրա ընտանիքի անդամները հավատարիմ էին Տիրոջը: Տե՛ս, օրինակ, Եբրայեցիս 11.11,20-ը:

Անշուշտ, Աստվածաշնչում կան բարեպաշտ մարդկանց օրինակներ, ում ընտանիքները չէին հետևում Տիրոջ ճանապարհներին: Սակայն վերը բերված հիմնական միտքը պարզ է. Աբրահամի հավատի օրինակը բավականաչափ ուժեղ էր, որպեսզի նրա ընտանիքի անդամները սովորեին «Տիրոջ ճանապարհները պահել» (Ծննդոց 18.19):

«Տիրոջ ճանապարհը պահել». այս խոսքերն ի՞նչ են նշանակում ձեզ համար: Մենք ինչպե՞ս կարող ենք «պահել Տիրոջ ճանապարհը»:

Ուրբաթ հուլիսի 10

Հեպագա ուսումնասիրության համար

«Աստված կանչեց Աբրահամին, օրհնեց և փառավորեց նրան, մեծարեց, և նահապետի հավատարմությունը լույս էր մարդկանց համար ամենուր, որտեղ նա ապրում էր: Աբրահամը իրեն մարդկանցից հեռու չէր պահում: Նա ընկերական փոխհարաբերություններ էր պահպանում շրջակա ժողովուրդների կառավարիչների հետ, և նրանցից ոմանք մեծ հարգանքով էին վերաբերվում նրան: Նրա ազնվությունը, անշահախնդրությունը, քաջությունն ու առատաձեռնությունը ներկայացնում էին Աստծո պատկերը: Միջագետքի, Քանանի, Եգիպտոսի և անգամ Սոդոմի բնակիչներին երկնային Աստված բացահայտում էր Իրեն՝ Իր ներկայացուցչի միջոցով» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 368):

Հարցեր քննարկման համար

1. Մորիա սարի վրա Աբրահամի և Իսահակի պատմությունը հազարավոր տարիներ ակնածանք է առաջացրել և փորձել հավատավորներին՝ ծաղր և հեգնանք առաջ բերելով նրանց կողմից, ովքեր լոկ դաժանություն և բարբարոսություն էին տեսնում: Ծննդոց 22-րդ գլխում ևս մեկ անգամ կարդացե՛ք այդ պատմությունը: Մենք ի՞նչ կարևոր դասեր կարող ենք քաղել մեզ համար: Այս պատմությունն ի՞նչ է ասում խաչի և մեղքի սոսկալի գնի մասին: Մենք դրանից ի՞նչ ենք իմանում այն մասին, թե ինչ կբերի իր հետևից հավատի քայլը: Ինչո՞ւ է շատերի համար գայթակղության քար հանդիսանում այս պատմությունը:

2. Կարդացե՛ք Ծննդոց 12.11-13, 20.2: Այս երկու հատվածներում նկարագրված է, թե ինչպես Աբրահամը՝ Աստծո մարդը, ցույց տվեց հավատի պակասը: Մենք մեզ համար ի՞նչ կարող ենք դուրս բերել այս պատմությունից:
3. Աստվածաշնչի ամենահայտնի տեքստերից մեկը Ծննդոց 15.6-ն է: Ի՞նչ է ասում այն: Ի՞նչ համատեքստում է այն մատուցվում: Այս տեքստն ինչպե՞ս է օգտագործված Նոր Կտակարանում (տե՛ս Հռոմեացիս 4.3, Գաղատացիս 3.6, Հակոբոս 2.23): Այն մեզ ի՞նչ է ասում հավատի, գործերի և փրկության մասին:
4. Հիշե՛ք մի քանի խոշոր կրոնական գործիչների, ում երեխաները «չէին գնում Աստծո ճանապարհներով»: Նրանց օրինակից մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել մեզ համար՝ պայքարելով, որ մեր ընտանիքի անդամները հավատարիմ լինեն Տիրոջը:

Դաս 3 ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԻՍԻՈՆԵՐԸ

Հուլիսի 11-17

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Դ Թագավորաց 5, Մարկոս 1.40-45, Դ Թագավորաց 2.1-15, Հովհաննես 15.5, Հռոմեացիս 6.4-11, Հռոմեացիս 6.1:

Հիշելու համարը.

«Եվ շատ բորոտներ կային Իսրայելի մեջ Եղիսե մարգարեի ժամանակ. և նրանցից ոչ ոք չսրբվեց, բայց միայն Նեեման ասորին» (Ղուկաս 4.27):

Թագավորաց գիրքը նկարագրում է իսրայելյան թագավորների պատմությունը ՔԱ 970-560 թվականներին: Այնտեղ նկարագրված են հետաքրքրաշարժ ու հուզիչ պատմություններ, ինչպես նաև ճակատագրական քաղաքական հեղաշրջումներ, որ պատահել են Աստծո ժողովրդի կյանքում: Այս նկարագրություններին միահյուսված է Եղիայի և Եղիսեի՝ Աստծո խիզախ մարգարեների մասին պատմությունը, ում կենսափորձերը ցանկացած տարիքում ապշեցնում են երեխաների և մեծահասակների երևակայությունը:

Հետաքրքիր զուգահեռներ կարելի է անցկացնել Եղիսեի և Հիսուսի ծառայությունների միջև: Երկուսի ծառայության ժամանակ էլ մեռելները հարություն առան, բորոտները մաքրվում էին, իսկ քաղցածները կերակրվեցին սննդի ոչ մեծ քանակով:

Այս շաբաթվա դասին կխոսվի հենց այդ հրաշքներից մեկի՝ Նեեմանի ապաքինման մասին, մի հարուստ, հզոր և շատ հպարտ կռապաշտի, ով իր վրա զգաց կենդանի Աստծո զորությունը: Իսկ դա կատարվեց շատ անսպասելի միսիոների վկայության շնորհիվ:

Բազմաթիվ հոգևոր ճշմարտությունների թվում, որ կարելի է քաղել այս պատմությունից, մենք կարող ենք հատկապես նշել միջազգային վկայության օրինակը՝ միջազգային հակամարտության և ազգերի դիմակայության սրացման թեժ պահին: Այս պատմության մեջ մենք կարող ենք տեսնել նաև օրինակն այն բանի, թե ինչպես է աշխատում փրկության ծրագիրը:

Նա ուներ ամեն բան: Բայց...

«Եվ ասորիների զորագլուխ Նեեմանը մի մեծ և հարգելի մարդ էր իր տիրոջ առջև, որովհետև Տերը նրա միջոցով փրկություն էր տվել ասորիներին. և այս մարդը քաջ զորավոր էր, բայց բորոտ էր» (Դ Թագավորաց 5.1):

Այս համարում մի քանի մակդիրներ են գործածված այն հատկանիշները նկարագրելու համար, որոնք Նեեմանին բերեցին սիրիական կամ նույնիսկ արամեական հասարակության բարձրագույն շրջանները: Նա մեծ ազդեցություն ուներ Արամ արքայի վրա, նրան բարձր պատիվներ էին մատուցում, նա թագավորի աջ ձեռքն էր կրոնի, ինչպես և ռազմական հարցերով (համար 18): Նաև ուներ հարստություն (համար 5):

Այնուամենայնիվ, առաջին իսկ համարում մենք մի մեծ «բայց» ենք տեսնում: Նեեմանի ողջ իշխանությունը, պատիվներն ու քաջությունը խամրում էին այն ժամանակվա ամենասարսափելի հիվանդության՝ բորոտության առջև: Հենց դրանով էլ հիվանդ էր այդ դժբախտ տղամարդը, դա մի խոշոր «բայց» էր, որ ստվեր էր նետում նրա բոլոր նվաճումների վրա: Այդ տկարությունը, սակայն, նրան հանդիպեցրեց Աստծո մարգարեին, և այդ հանդիպման շնորհիվ նա հավատաց ճշմարիտ Աստծուն:

Կարդացե՛ք Մարկոս 1.40-45, Ղուկաս 8.41-56 և Մարկոս 2.1-12-ը:

Անմիջապես աչք է ծակում, որ այս բոլոր հատվածներում նկարագրված են Հիսուսի կողմից կատարված հրաշալի ապաքինումները, բայց է՞լ ինչն է միավորում այս տեքստերը: Բոլոր այդ մարդկանց ի՞նչն էր բերել Հիսուսի մոտ: _____

_____

_____

Անձնական կյանքի խնդիրները, ողբերգություններն ու բեկումնային պահերը կարող են մարդուն առավել բաց դարձնել հոգևոր ճշմարտությունների ընկալման հանդեպ և դրդել՝ որոնելու Աստծուն: Ֆիզիկական, հոգեբանական, քաղաքական և այլ ճգնաժամերը կարող են մարդու համար բացահայտել աստվածայինի իրական լինելը: Անձնական կորուստները, ազգային աղետները և պատերազմները այն հիմնական գործոններն են, որոնք դրդում են մարդկանց՝ որոնե-

լու ուժ, ավելին, քան իրենց սեփականն է: Եկեղեցին վաղուց գիտի, որ մարդկանց փրկության ուղղությամբ տարվող աշխատանքը առավել արդյունավետ է այն շրջաններում, որտեղ մարդիկ ուժեղ անձնական կամ սոցիալական ցնցումներ են ապրել:

Մի կողմից, Նեեմանն ուներ ամեն բան, բայց մյուս կողմից նա հուսաբեկված մարդ էր՝ առանց առանձնահատուկ հույսերի: Արդյո՞ք այդպես է նաև մեր կյանքում, երբ լավը սերտորեն միահյուսվում է վատի հետ: Ինչպե՞ս սովորել ապրել այնպես, որպեսզի և՛ մեկը, և՛ մյուսը մեզ մերձեցնեն Աստծուն:

Երկուշաբթի **Հուլիսի 13**

Անսպասելի ավետաբերը

Կարդացե՛ք Դ Թագավորաց 5.1-7-ը: Ի՞նչ տեղի ունեցավ: Ինչպե՞ս հանկարծ ասորեստանցիներն ականջ դրեցին այն բանին, ինչ ասաց նրանց ստրուկ գերուհի աղջիկը: Այստեղ ի՞նչ է գրված տողատակում: _____

_____

_____

Աստվածաշունչը ոչինչ չի ասում այն մասին, թե այդ փոքրիկ աղջնակն ինչպես էր պահում իրեն տիրոջ տանը, բայց, ակներևաբար, նրա մեջ կար այն, ինչ գրավել էր այդ ընտանիքի ուշադրությունը: Միայն պատկերացրե՛ք. գերի աղջկա՝ իր ստրկուհիներից մեկի խոսքով հարուստ ու մեծազոր զորապետը գնում է իր թագավորի մոտ, փոխանցում է նրա խոսքերը և թույլտվություն է ստանում՝ մեկնելու մեկ այլ, թշնամաբար տրամադրված երկիր: Ավելին, նա բեռնում է ընծաներ այլ կրոնի մարգարեի համար: Ակնհայտ է, որ խոսակցություններն ու գործողությունները շատ ավելին են եղել, քան շարադրված է վերը բերված տեքստերում: Ինչ էլ լինի, Աստծո միջնորդը, որ ճշմարտության սերմեր էր ցանել Ասորեստանի կառավարող շրջանակներում, դարձավ անանուն մի հրեուհի՝ գերուհի, ստրկուհի, ում հայրենի տանից փախցրել էր ասորական զինվորների մի ջոկատ: Մշտապես իրեն պատճառված չարիքի, դաժանության և անիմաստության, իր ստրկական կյանքի ծանրության մասին մտածելու փոխարեն՝ նա կիսվում էր Տիրոջ զորության հանդեպ իր աներեր հավատով, որ Եղիայի միջոցով գործել էր Սամարիայում, զորություն,

որ ի զորու է փոխել կյանքը (համար 3): Այդպիսով, այդ աղջիկը, ինչպես Դանիելը և նրա ընկերները Բաբելոնում, կարողացավ իր դժբախտությունները վերածել Աստծուն փառաբանելու միջոցի, իսկ Աստված նրա գերությունը վերածեց իր հավատի մասին պատմելու հնարավորության: Ինչպես գրում է Էլեն Ուայթը, «Ստրկուհի աղջնակի կյանքը հեթանոս տանը և նրա վարքն այնտեղ՝ անվիճելի վկայություն է ծնողական տանը երեխաների վաղ դաստիարակության տված օգուտի» (Մարգարեներ և թագավորներ, 245):

Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե ինչպես կարող են մեր հավատը, կենսակերպն ու արարքները գրավել շրջապատողներին և նրանց ցույց տալ մեզ վստահված ճշմարտությունները: _____

_____

_____

Այս պատմության մեջ ուշադրության արժանի է նաև Իսրայելի թագավորի պատասխանը նամակին: *Մի՞թե ես Աստված եմ: Մի՞թե ես կարող եմ բժշկել բորոտությունը:* Նրա խոսքերը ցույց են տալիս, թե այն ժամանակ որքա՜ն էին վախենում այդ հիվանդությունից, և միայն հրաշքը կարող էր ապաքինել: Հայտնի չէ, թե ինչու էր թագավորին թվացել, թե նամակը ենթադրում է, որ հենց *ինքը* պետք է բժշկի բորոտին: Նա գիտեր, որ դա անհնար է, և այդ պատճառով վախենում էր, որ դա խարդավանք կդառնա նոր ռազմական կոնֆլիկտի համար:

Երեքշաբթի **Հուլիսի 14**

Եղիսե մարգարեն

ՔԱ իններորդ դարում Եղիսե մարգարեի ծառայության նկարագրությունը մեզ է հասել տասնութ հատվածից բաղկացած շարքով, որոնք տեղի են ունեցել հիսուն տարի ժամանակահատվածում: Նրա աշխատանքը հիմնականում մարգարեների դպրոցի կառավարումն էր, և նրա ծառայությունը հրապարակային էր: Նա նշաններ և հրաշքներ էր գործում ինչպես անձնական, այնպես էլ ազգային մակարդակով: Եղիսեին խորհրդի և օգնության համար դիմում էին ինչպես թագավորները, այնպես էլ հասարակ ժողովուրդը:

Կարդացե՛ք Դ Թագավորաց 2.1-15-ը: Այս տեքստերում ի՞նչ է ասված Եղիսեի կոչման և ծառայության մասին: ____

_____

Անկասկած, Եղիսեն կանչված էր Աստծուց. նրա հետ անհավատալի իրադարձություններ էին տեղի ունենում, որոնք ամրապնդում էին նրա համոզվածությունը, որ ինքը կանչված է ծառայության: Ավելին, «կրկնապատիկ» Հոգին ստանալու նրա խնդրանքը ցույց է տալիս, որ նա վստահ էր, որ այն ծառայությունը կատարելու համար, որին ինքը կանչված էր, իրեն հարկավոր կլինի աստվածային զորությունը, և առանց դրա ինքը ոչինչ չի կարողանա: «Ես որթն եմ՝ դուք ճյուղերը. նա, որ ինձանում մնում է, և ես նրանում, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհաննես 15.5): Այստեղ դաս կա, որը յուրացնելը կարևոր է բոլորի համար՝ անկախ Աստծուն ծառայելու մեջ ունեցած դիրքի բարձրությունից:

Ինչպես տեսնում ենք Եղիսեին կանչելու պատմության հետագա ընթացքի մեջ, այդ զորությունն իսկապես տրվեց նրան: Այդպիսով, Եղիսեն սեփական դերի և կոչման առողջ ու հստակ ըմբռնում ցույց տվեց, երբ ասաց թագավորին. «Թո՛ղ Նեեմանը գա և իմանա, որ մարգարե կա Իսրայելի մեջ» (Դ Թագավորաց 5.8):

Հավանաբար, հետաքրքիր էր այդ տեսարանը, երբ զորապետն իր ողջ շքախմբով, իր ողջ փառքով հայտնվեց Եղիսեի դռան մոտ, որը, ամենայն հավանականությամբ, շատ փոքրիկ և համեստ էր Նեեմանի շքեղ կալվածքների համեմատությամբ: Այնուամենայնիվ, Եղիսեին բացարձակապես չշփոթեցրեցին ո՛չ Նեեմանը, ո՛չ էլ նրա շքախումբը: Նա անգամ նեղություն չքաշեց անձամբ դուրս գալ մեծազոր այցելուին դիմավորելու, այլ դրա փոխարեն նրա մոտ ուղարկեց իր ծառային՝ հրամանով: Դամասկոսից անցած երկար ճանապարհի միակ պարգևատրումը դարձան հետևյալ խոսքերը. «Գնա և յոթն անգամ լողացիր Հորդանանում»: Սակայն այդ հրամանն ուղեկցվեց խոստմամբ՝ «և մաքուր կլինես» (համար 10):

Իհարկե, այդ ազդեցիկ մարդու հպարտությունը տուժեց: Սակայն, հնարավոր է, հենց դրա մեջ էր իմաստը:

Չորեքշաբթի **Հուլիսի 15**

Նեեմանի ապաքինումը

Կարդացե՛ք Դ Թագավորաց 5.11-14-ը: Այս հատվածից ի՞նչ ենք իմանում մենք Նեեմանի և նրա յուրացրած դասերի մասին: Ի՞նչ դաս կարող ենք քաղել մեզ համար: _____

_____

Եթե Եղիսե մարգարեն անձամբ դուրս գար իր անվանի հյուր Նեեմանի մոտ և սկսեր ձեռքերով բժշկել նրան՝ այդ ամենն ուղեկցելով հմայություններով և այլ ծեսերով, որոնք այդքան տարածված են հեթանոսության մեջ, Նեեմանը չէր կասկածի: Բայց ցուցաբերված ընդունելության մեջ երկու հանգամանք վիրավորեց նրան. մարգարեն ոչ միայն դուրս չեկավ տանից, որ դիմավորի իրեն, այլև դեռ իրեն էլ ապաքինվելու համար ուղարկեց Հորդանան գետը:

Քաղաքավարության տեսակետից Նեեմանն իրավացի էր: Եղիսեն պետք է դուրս գար տանից և ողջուներ նրան: Իսկ Դամասկոսի գետերն իսկապես ավելի լավն էին. չէ՞ որ դրանց ջրերը շատ ավելի մաքուր էին, քան տղմոտ Հորդանանինը: Սակայն Աստված Եղիսեի միջոցով Նեեմանին ուղարկեց հենց իսրայելյան Հորդանան գետի մոտ: Ապաքինման ողջ ընթացքը կառուցված էր ցույց տալու, նախ, որ Իսրայելում կա ճշմարիտ Աստծո մարգարեն, և երկրորդ, որ Աստված պարգևատրում է հավատով հնազանդությունը:

Նեեմանի շքախումբը համոզեց նրան՝ ականջալուր լինել այդ նոր աստվածային «հրամանատարին» և գոնե փորձել: Նրանց փաստարկը, որ եթե մարգարեն ապաքինման առավել բարդ եղանակ առաջարկեր, իրենց տերը հաստատ կհամաձայներ, համոզեց նրան: Հավանաբար, Նեեմանի համար հեշտ չէր անտեսել սեփական հպարտությունն ու լսել նախ ստրկուհի աղջկան, հետո էլ՝ օտարերկրացի մարգարեին, ով, թվում է, առանձնապես շահագրգռված չէր իր վիճակով, և, վերջապես, լսել սեփական ծառաներին: Սակայն նա հուսահատ կերպով կարիք ուներ ապաքինվելու:

«Եվ նա վայր իջավ և յոթն անգամ թաղվեց Հորդանանի մեջ Աստծո մարդու խոսքին համեմատ. և նրա մարմինը հետ դառավ իբրև մի փոքր տղայի մարմին, և մաքրվեց» (Դ Թագավորաց 5.14):

Նեեմանի ապաքինման հիմնական պայմանները հավատն ու հնազանդությունն էին: Հենց որ նա հաղթահարեց իր հպարտությունը և հնազանդվեց Աստծո հրամանին՝ յոթ անգամ ընկղմվելով պղտոր Հորդանանի մեջ, բժշկվեց:

Կարդացե՛ք Հռոմեացիս 6.4-11-ը: Նեեմանի պատմության մեջ ինչպե՞ս են արտացոլված այստեղ նկարագրված սկզբունքները: Դուք զգացե՞լ եք Քրիստոսում «նոր կյանքի» իրողությունը: Ինչի՞ մեջ է դա դրսևորվել:

Նորադարձը

«Ահա իմացա, որ բոլոր երկրի վրա Աստված չկա, բայց միայն Իսրայելում. և հիմա խնդրեմ՝ ծառայիցդ մի ընծա ընդունիր» (Դ Թագավորաց 15.5, համարի երկրորդ մասը): Այստեղ ինչպե՞ս է արտացոլված փրկությունն ընդունելու փորձառությունը: Տե՛ս Հայտնություն 14.12, Ա Հովհաննես 5.2,3, Հռոմեացիս 6.1-ը:

Նեեմանը կարող էր ապաքինումից անմիջապես հետո վերադառնալ Դամասկոս: Սակայն, ի նշան երախտագիտության, նա իր ողջ շքախմբով վերադարձավ մարգարեի տուն: Այս անգամ նրանք արդեն անձամբ հանդիպեցին Եղիսեի հետ: Ընդունելը, որ Իսրայելի Աստվածը ողջ աշխարհի Տիրակալն է, Աստվածաշնչի հիմնական թեման է: Հեթանոսների բերանից հնչած այս խոսքերը Հին Կտակարանի բարձրագույն հայտնությունն են: Նեեմանի խոսքերը ցույց տվեցին, որ նա գիտակցում էր, որ իր բժշկման փորձառությունը կատարվել էր Իսրայելի Աստծո կողմից: Մարգարեն իսրայելացի էր, գետը ամենակարևորն էր Իսրայելում, իսկ յոթ թիվը Աստծո արարչագործության ակներև խորհրդանիշն էր:

Նեեմանի դեպքում մենք տեսնում ենք, թե ինչպես է աշխատում ճշմարիտ հավատը. Նեեմանն ստացավ այն, ինչ երբեք չէր կարող ստանալ իր ուժերով: Եղիսեի հրաժարվելը ընծաներն ընդունելուց (Դ Թագավորաց 5.16) միջոց էր՝ ցույց տալու, որ փրկությանը հնարավոր չէ արժանանալ կամ գնել, այն տրվում է բացառապես Աստծո ողորմությամբ: Միևնույն ժամանակ Նեեմանի ցանկությունը՝ ինչ-որ բան անել Եղիսեի համար՝ այն բանի դիմաց, ինչ նա արել էր իր համար, ցույց է տալիս նրա հավատն ու երախտագիտությունը՝ պարգևված ապաքինման համար: Եղիսեն հրաժարվեց պարգևներից: Նա հետևեց Աբրահամի օրինակին, ով հրաժարվել էր պարգևատրումից՝ հեթանոս թագավորներին ցուցաբերած օգնության դիմաց, որպեսզի ոչ ոք չասեր. «Ես հարստացրեցի Աբրահամին» (Ծննդոց 14.23): Եղիսեն գիտեր, որ եթե ընդունի ընծան, դասը, որ պետք է յուրացներ Նեեմանը: Ապաքինումն Աստծո ձեռքի գործն էր, շնորհի պարգև:

«Թո՛ղ յուրաքանչյուրի գիտակցության մեջ խորապես արմատավորվի հետևյալ միտքը. եթե մենք ընդունում ենք Քրիստոսին՝ որպես մեր Փրկիչ, պետք է ընդունենք Նրան նաև որպես մեր Իշխան: Մենք

չենք կարող Քրիստոսի հանդեպ վստահություն և լիարժեք ապավինումն ունենալ՝ որպես մեր Փրկիչ, քանի դեռ մենք Նրան չենք ընդունել որպես Թագավոր և հնազանդ չենք Նրա բոլոր պատվիրաններին: Այդպիսով մենք վկայում ենք Աստծո հանդեպ ունեցած մեր հավատարմության մասին: Մենք ունենք ճշմարիտ հավատ, քանի որ այն գործուն հավատ է: Այդ հավատը գործում է սիրով» (Է. Ուայթ, Հավատը և գործերը, 16):

Նայելով ձեր կյանքին՝ կարո՞ղ են շրջապատի մարդիկ Աստծո հանդեպ սիրո դրսևորում տեսնել այնտեղ՝ այն բանի համար, ինչ Նա արել է ձեզ համար խաչի վրա:

Ուրբաթ **Հուլիսի 17**

Հետագա ուսումնասիրության համար

«Բժշկված Նեեմանի տուն՝ Ասորեստան վերադառնալուց ամբողջ հարյուրամյակներ անց Փրկիչը նրա հրաշալի հավատն օրինակ բերեց բոլոր նրանց, ովքեր հայտարարում են, թե սիրում են Աստծուն: «Եվ շատ բորոտներ կային Իսրայելի մեջ Եղիսե մարգարեի ժամանակ, և նրանցից ոչ ոք չսրբվեց, բայց միայն Նեեման Ասորին» (Ղուկաս 4.27): Աստված անցավ Իսրայելի բազմաթիվ բորոտների կողքից, քանի որ թերահավատությունը նրանց համար փակել էր շնորհի դռները: Հեթանոս զորագլուխը, ով հավատարիմ էր իր համոզմունքներին, օգնության կարիք ունենալով, Աստծո աչքերում առավել արժանի գտնվեց օրհնությունների, քան Իսրայելում գտնվող այլ տառապյալները, ովքեր մերժել էին Աստծո կողմից իրենց տրված առավելությունները: Տերը ջանում է նրանց համար, ովքեր գնահատում են Իր շնորհն ու ընկալում երկնքից հեղվող լույսը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 252):

Հարցեր քննարկման համար

1. «Երկար տարիներ անզիջում բանավեճեր են մղվում այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Նեեմանի ապաքինումից հետո: Դ Թագավորաց 5.17-19-ում Նեեմանը հավատի հզորագույն վկայություն է անում. «Եվ Նեեմանն ասաց. Հիմա որ ոչ, թող ծառայիդ երկու ջորու բեռ հող տրվի, որովհետև ծառադ այլևս բացի Եհովայից ուրիշ աստվածների ողջակեզ կամ զոհ չի անելու» (համար 17): Սակայն անմիջապես էլ նա հայտարարում է. «Այս բանը միայն

թող ների Եհովան քո ծառային, այսինքն երբ որ իմ տերը Ռեմոնի տունը մտնի այնտեղ երկրպագություն անելու համար, և նա կռթնի մի ձեռքին, և ես կռանամ Ռեմոնի տանը, այն ժամանակ այս բանի համար՝ այսինքն Ռեմոնի տանը իմ կռանալու համար՝ թող Տերը ների քո ծառային» (համար 18): Սրան ի՞նչ պատասխանեց Եղիսեն և ինչո՞ւ: Ի՞նչ չափով պետք է միսիոներ քրիստոնյաները հանդուրժողականություն դրսևորեն նորադարձների հանդեպ, ովքեր սերում են այլ կրոններից և մշակույթներից:

2. Որքա՞ն արագ պետք է տեղի ունենա նորադարձների մուտքը քրիստոնեական մշակույթ: «Սարեփթացի այրին և Նեեմանն ապրում էին՝ առաջնորդվելով իրենց լուսավորած լույսի առաջնորդությամբ, և այդ պատճառով նրանք առավել արդար ճանաչվեցին, քան Աստծո ընտրյալ ժողովուրդը, որ նահանջել էր Տիրոջից և զոհաբերել էր իր սկզբունքները հանուն շահի և երկրային պատիվների» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 416):
3. Ապաքինումն ու փրկությունը Նեեմանին պարգևվեցին գործերում դրսևորված հավատի համաձայն: Քննարկե՛ք հավատի և գործերի նման հարաբերակցությունը: Ինչո՞ւ է այդքան կարևոր այդ տարրերից յուրաքանչյուրի կարևորությունն ու դերը մեր փրկության մեջ:

Դաս 4

Հուլիսի 18-24

ՍԱԳԱ ՀՈՎՆԱՆԻ ՄԱՍԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովնան 1-4, Դ Թագավորաց 14.25, Եսայիա 56.7, Եսայիա 44.8, Մատթեոս 12.40, Հայտնություն 14.6-12:

Հիշելու համարը.

«Պետրոսը իր բերանը բանալով ասաց. Ճշմարտությամբ հասկանում են, որ Աստված աչառ չէ, այլ ամեն ազգում, ով որ վախեում է նրանից և արդարություն է գործում, ընդունելի է նրան» (Գործք առաքելոց 10.34,35):

Հովնանի սագան պատմություն է հրեա մարգարեի մասին, ով աշխատում էր իր հարմարավետության գոտու սահմաններից շատ հեռու: Ապրելով Հերոբովամ Երկրորդի կառավարման ժամանակներում՝ մոտավորապես ՔԱ 750 թվականին (Դ Թագավորաց 14.25), Հովնանը Հին Կտակարանի մեզ հայտնի միակ մարգարեն է, ով անմիջականորեն կանչվեց միսիոներ դառնալու օտար երկրում: Ճշմարտությունն այն մասին, որ բոլոր ռասաներն Արարողը չէր ծրագրել փրկությունը սահմանափակել միայն Իր ընտրյալ ժողովրդով, անդադար կրկնվում է Հին Կտակարանում, հատկապես՝ Եսայիա մարգարեի գրքում և Սաղմոսներում, չնայած այն բանին, որ Հովնանի ժամանակներում հրեաների ընդունված աստվածաբանությունը չէր ընդունում, որ, համաձայն Աստծո ծրագրի, հեթանոսները նույնպես պետք է ժառանգեն փրկությունը: Անգամ Նոր Կտակարանի ժամանակներում հրեաների համար դժվար էր յուրացնել այդ ճշմարտությունը: Հովնանի գրքի չորս գլուխներում մենք կարդում ենք անկեղծ պատմություն Հովնանի ինչպես դրական, այնպես էլ բացասական փորձառության մասին, ով այրվում էր օտար երկրում միսիոներության առաջամարտիկը դառնալու ցանկությունից: Սա մարդկանց միանգամայն բնորոշ արձագանք է Աստծո կոչին, ինչպես նաև բարձրաձայն հայտարարություն՝ արտասահմանում միսիոներների կարիքի մասին: Այս գրքում նաև որոշ խորհուրդներ կային օտարերկրյա միսիոներների և նրանց համար, ովքեր վկայում են այլ մշակույթների ներկայացուցիչներին:

Միաշաբթի **Հուլիսի 19**

Սխալված մարգարեն

Կարդացե՛ք Դ Թագավորաց 14.25-ը: Այս տեքստն ի՞նչ է ասում մեզ Հովնանի մասին: Նա ինչպե՞ս է ներկայացված այստեղ: _____

_____

Բացի Հովնանի գրքից, մարգարեն հիշատակվում է ևս մեկ հինկտակարանյան տեքստում՝ Դ Թագավորաց 14.25-ում: Այստեղ նա նշված է որպես մարգարե, ով կանխասում է Իսրայելի կողմից Ասորեստանի նվաճած տարածքի վերադարձը:

Հովնանը ծնվել է Գեթքոփերում (ինչը եբրայերեն նշանակում է գինու հնձան ջրարբի մոտ)՝ Զաբուղոնի քաղաքում, հյուսիսային Իսրայելում, որը գտնվում էր Նազարեթից մի քանի մղոն հեռավորությամբ: Սա նշանակում է, որ ինչպես Հիսուսը, այնպես էլ Հովնանը ծագում էին Գալիլեայից, նրանց բաժանում էր 750 տարի:

Կարդացե՛ք Հովնան 1.1-3,9,12, 3.3-10, 2.1-9-ը: Ի՞նչ պատկերացում են տալիս մեզ այս տեքստերը մարգարեի մասին: _____

_____

_____

Հովնանն իր գրքում ներկայացված է ուժի և թուլության մի տարօրինակ համադրությամբ. անհնազանդ և համառ, բայց պատրաստակամ՝ լսելու և սովորելու: Նա հավատարիմ էր Աստծուն, արի էր ու հավատում էր աղոթքի զորությանը, բայց նաև սահմանափակ էր, եսասեր ու քինախնդիր: Թեև Դ Թագավորաց 14.25-ում նա անվանված է Աստծո ծառա, իր անունը կրող գրքում նա մասամբ տխուր և ողբերգական տպավորություն է թողնում: Հենց դրանում է Աստվածաշնչի անաղարտությունն ու հուսալիությունը. նա ուղղակի և անաչառ կերպով է խոսում մարդկանց մասին: Մարդկայնորեն գրողը, բնականաբար, կջանար քողարկել և թաքցնել աստվածաշնչյան հերոսների ամենաանհրապույր հատկանիշները: Բայց Աստծո ներշնչանքով Աստվածաշնչի հեղինակները ներկայացնում են մարդկանց քաջարիությունը սայթաքումների հետ մեկտեղ, որպեսզի լուսաբանեն հետևյալ ճշմարտությունը. որքան էլ թույլ և տհաճ լինեն այդ հերոսները, Աստված կարող է գործել նրանց միջոցով, եթե նրանք դա ցանկանան:

Է՞լ որ աստվածաշնչյան հերոսներին է օգտագործել Աստված՝ չնայած նրանց անձնական թերություններին: Մենք մեզ համար ի՞նչ հույս կարող ենք քաղել այն փաստի հիման վրա, որ Աստված Իր աշխատանքում օգտագործում է վատաբարո ու ամենևին էլ ոչ անթերի մարդկանց, որպեսզի նրանք քարոզեն ուրիշներին:

Երկուշաբթի **Հուլիսի 20**

Առաջին միսիոներներից մեկը

«Գնա՛ Նինվե», - Հովնանին հրամայեց Աստված: Հին Կտակարանում ժողովուրդներին սովորաբար կանչում էին «գալ Սիոն»: Իսրայելի համար Աստծո սկզբնական ծրագիրն այն էր, որ նրանք ապրեն իրենց կրոնի համաձայն՝ իրենց ժողովրդին դարձնելով այնքան հրապուրիչ, որ մյուս ժողովուրդները խորհրդի և առաջնորդության համար գան նրանց մոտ (Եսայիա 56.7):

Հովնանը՝ որպես Նոր Կտակարանում Քրիստոսի աշակերտների նախորդ (Մատթեոս 28.18-20), հրաման ստացավ գնալ Նինվե, որը նրան կռապաշտության, դաժանության և ամբողջատիրության նողկալի կենտրոն էր թվում: Հովնանը ամեն բան նախապատրաստել էր մանրակրկիտ կերպով, որպեսզի ծովով ուղևորվի արևմուտք, թեև Աստված ցամաքով արևելք էր ուղարկում նրան: Հովնանը՝ այդ համառ մարգարեն, փախչում էր հակադիր ուղղությամբ:

Կարդացե՛ք Հովնան 1.3-17-ը: Ի՞նչ դասեր կարող ենք քաղել մենք այդ զարմանալի պատմությունից: _____

_____

_____

Հովնանի փախուստին Աստված պատասխանեց ուժեղ փոթորիկով: Քամիները հնազանդվում են իրենց Արարչին՝ ի տարբերություն մարգարեի (Մարկոս 4.41): Հովնանը քնում է փոթորկի ժամանակ, իսկ հեթանոսներից բաղկացած նավի անձնակազմը աղոթում է (Հովնան 1.14): Հովնանն ազնվորեն խոստովանում է, որ այդ աղետի պատճառն ինքն է, և վկայում է ճշմարիտ Աստծո և Արարչի մասին: Ուշադրությո՛ւն դարձրեք նրա պատասխանին՝ «Ես հրեա եմ», ինչը վերաբերում էր ինչպես նրա կրոնին, այնպես էլ ազգությանը: Փոթորկի մոլեգնությունից ավաբեկված՝ հեթանոս նավաստիները փորձում էին փրկել իրենց և նավի ուղևորներին և կարեկցանք դրսևորեցին

Հովնանի հանդեպ՝ նրա ցուցումով իրեն նավից ցած նետել չցանկանալով: (Համառ մարգարեն պատրաստ էր զոհաբերել իրեն, որպեսզի փրկի ուրիշներին): Երբ նրանք վերջապես համաձայնեցին, փոթորիկը հանդարտվեց, և ծովը հանգստացավ: Ապշած նավաստիները դարձան առաջին մարդիկ, ովքեր Հովնանի շնորհիվ դարձի եկան դեպի նրա Աստծուն, Ով Իր մարգարեի միջոցով գործում էր անգամ այն ժամանակ, երբ վերջինս փախչում էր Աստծո կոչից:

Հովնանի փրկությունը նույնպիսի հրաշք էր, ինչպես և նավի փրկությունը: Աստված «մեծ ձուկ» էր նախապատրաստել: Բնագրում այս եբրայերեն բառը հստակ կերպով ցույց չի տալիս, թե հատկապես ինչ ձուկ է փրկել Հովնանին՝ կուլ տալով նրան: Հովնանը ձկան որովայնում՝ սա, անկասկած, այս պատմության ամենահայտնի մասն է, սակայն այն չպետք է ստվերի այդ գրքի առավել խորը իմաստը այն մասին, որ Աստված սիրում, հոգ է տանում և ցանկանում է փրկել բոլոր մարդկանց:

Ի վերջո, կա միայն մեկ Աստված՝ երկնքի և երկրի Արարիչը (տե՛ս Եսայիա 44.8, 45.5,6): Մնացածը, ինչին երկրպագում են մարդիկ, կռապաշտություն է և մոլորություն: Ցանկացած այլ «աստված», որին աղոթում են մարդիկ, հորինվածք և խաբեություն է: Ինչո՞ւ է մեզ համար կարևոր այդ ճշմարտությունը գիտակցելն ու յուրացնելը, հատկապես մեր առաքելության համատեքստում:

Երեքշաբթի **Հուլիսի 21**

Ձկան որովայնում

Ձկան որովայնում երեք օր լինելը դարձավ Քրիստոսի մահվան և հարության նախակերպարը (Հովնան 1.17-2.10, Մատթեոս12.40): Աստված էր նախապատրաստել և ուղարկել այդ ձկանը: Թեև գոյություն ունեն պատմություններ մարդկանց մասին, ովքեր ողջ են մնացել, երբ կետերը կուլ են տվել նրանց, մենք պետք է հիշենք, որ Աստված ուղարկել էր հենց այդ ձկանը, ինչպես նաև հրաշալի զորություն, որ պահպանեց Նրա ծառային, քանի դեռ նա գտնվում էր ձկան ներսում: Այսինքն՝ դա վերջին հաշվով հրաշք էր, որ տեղի ունեցավ միայն Տիրոջ գերբնական միջամտության շնորհիվ: Աստվածաշնչում Նա բացահայտվում է որպես անձնական Աստված, որ իրականում հրաշալի կերպով միջամտում է մարդկանց կյանքին:

Կան տվյալներ, որ «երեք օր և երեք գիշեր» արտահայտությունը խոսքի հին եբրայական ձև է, որը նշանակում է ժամանակահատված, որ պահանջվում էր դեպի «շեոլ» (մահացածների բնակվելու եբրայերեն անվանումը) երևակայական ճանապարհորդության համար: Հաշվի առնելով այն, ինչ տեղի ունեցավ Հովնանի հետ, նա փաստացի արդեն այս աշխարհի բնակիչ չէր:

Կետի որովայնում Հովնանն սկսեց աղոթել: Ավելի վաղ նավապետը նրան կոչ էր անում՝ «աղաղակիր քո Աստծուն» (Հովնան 1.6), բայց ապարդյուն: Այժմ, անելանելի դրության մեջ, Հովնանն սկսում է աղոթել և, ամենայն հավանականությամբ, անկեղծորեն: Միայն անտանելի դրությունը վերջիվերջո ստիպեց նրան՝ անել այն, ինչ նա պետք է աներ ամբողջ ժամանակ: Հովնանի աղոթքի համառոտ շարադրանքը պահպանվել է որպես շնորհակալության աղոթք: Այդպիսի սաղմոսները սովորաբար բաղկացած են լինում հինգ մասից. 1) ներածություն, 2) աղետի նկարագրությունը, 3) օգնության մասին աղերս առ Աստված, 4) տեղեկություն Աստծո գործողությունների մասին, 5) խոստում՝ կատարելու բոլոր ուխտերը և վկայելու այն մասին, թե ինչպես փրկեց Աստված: Այսինքն՝ *Տե՛ր, եթե Դու ինձ փրկես այս իրավիճակից, ես խոստանում եմ անել այս-այս բաները:* Մեզանից ո՞վ չի աղոթել այդպիսի աղոթքով: Բայց ահա՛ հարցը. դուք արե՞լ եք այն, ինչ խոստացել եք:

Կարդացե՛ք Մատթեոս 12.40-ը: Ինչպե՞ս է Հիսուսն Իր վերաբերյալ կիրառում Հովնանի պատմությունը: Տե՛ս նաև Հովհաննես 2.19-22: _____

_____

_____

Այս գլուխն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Եվ Տերը հրամայեց ձկանը, և նա Հովնանին փսխեց ցամաքը» (Հովնան 2.10): Աստծո այս հրամանը ձկանը Հովնանի համար արեց այն, ինչ չկարողացան անել բարյացակամ նավաստիները: Ինչպես Քրիստոսն Իր հարությունից հետո Իր աշակերտներին հրամայեց գնալ ողջ աշխարհը, այնպես էլ Հովնանը իր ստորջրյա արկածից հետո գնաց հեթանոսների մոտ և դարձավ Հին Կտակարանի ամենահաջողակ միսիոները: Հովնանի փրկությունը վկայում էր Աստծո փրկարար շնորհի մասին: Այն, որ նա հայտնվեց ծովափին՝ ամբողջովին տիղմի մեջ, վկայում էր՝ անգամ մեղավոր ասորեստանցիներին մահից փրկելու Աստծո մտադրության մասին:

Չորեքշաբթի **Հուլիսի 22**

Նինվեացիները

Կարդացե՛ք Հովնան 3-ը: Այստեղ ի՞նչ կարևոր լուր է բովանդակվում քարոզչության և ավետարանչության մասին:

_____

_____

_____

«Եվ Տիրոջ խոսքը երկրորդ անգամ եղավ Հովնանին ասելով. Վե՛ր կաց գնա՛ Նինվե մեծ քաղաքը և քարոզիր նրա դեմ այն քարոզությունը, որ ես քեզ կասեմ» (Հովնան 3.1,2): Այս տեքստում երկու կարևոր բայ կա: Նախ, արդեն երկրորդ անգամ Աստված ասում է. «Գնա՛»: Աստված չի հանձնվում: Նա երկրորդ հնարավորությունն է տալիս սխալվող մարդկանց: Այստեղ մենք կրկին հանդիպում ենք առաքելության հայեցակարգին՝ գնալ ազգերի մոտ՝ սպասելու փոխարեն, որ ժողովուրդները կգան մեզ մոտ:

Մեկ այլ կարևոր բայ է «քարոզիր»-ը: Քարոզը կարևոր էր աստվածաշնչյան ողջ պատմության ընթացքում: Եվ մինչև հիմա դա ավետարանի պատգամի տարածման ամենաարդյունավետ եղանակն է: Աստված, դիմելով Հովնանին, առանձնահատուկ շեշտ դրեց այն բանի վրա, որ նա պետք է քարոզեր՝ «որ ես քեզ կասեմ»: Այսինքն՝ մենք պետք է քարոզենք ոչ թե մեր առանձնահատուկ լուրը, այլ Աստծո լուրը, ընդ որում՝ ոչ սրբագրված, փոփոխված կամ զարդարված:

Աստծո լուրը սովորաբար սպառնալիք է և խոստում, դատաստան և Ավետարան: Նա կոշտ կերպով հայտարարեց. «Դեռ քառասուն օր կա, և Նինվեն պիտի կործանվի» (Հովնան 3.4): Սա դատաստանն է: Սակայն կար նաև հույսի, ազատագրման, փրկության խոստում (ըստ երևույթին՝ եղել է, որովհետև մարդիկ ականջալուր եղան այդ լուրին և փրկվեցին):

Անգամ երեք հրեշտակների պատգամի կենտրոնում (Հայտնություն 14.6-12) գտնվում է «հավիտենական Ավետարանը»: Այս հատվածը նույնպես նախազգուշացնում է դատաստանի մասին: Ավետարանն ու դատաստանը գնում են ձեռք ձեռքի տված: Ավետարանը մեզ առաջարկում է Աստծո ուղին՝ խուսափելու համար դատապարտումից, որն արդարացիորեն կկայացներ դատարանը մեզ բոլորիս համար:

Ավետարանի քարոզը երբեք արդյունավետ չի լինի, եթե բացակայում են այս տարրերը: Վտանգավոր է «քաղաքական զսպվածությա-

նը» դիմելը, որը տանում է այդ կոշտ տարրերի մեղմացմանը և կրոնների կամ անգամ տարբեր քրիստոնեական ավանդույթների միջև տարբերությունների հարթեցմանը: Թեև մենք մեր առաքելության մեջ պետք է մեր լուրը հարմարեցնենք այն մարդկանց, ում ջանում ենք քարոզել (կոնտեքստուալացում), մենք երբեք չպետք է դա անենք ի վնաս այն լուրի, որ Աստված մեզ հանձնարարել է հռչակել:

Ի՞նչ է տեղի ունենում Հովնան 3.5-10 հատվածում: Նինվեացիները հավատացին, վարվեցին համաձայն իրենց համոզմունքների, հավատ դրսևորեցին և փրկվեցին:

Աստված մեզ տվել է հրաշալի խոստումներ, ինչպես նաև խստագույն նախազգուշացումներ: Ի՞նչ պետք է սովորեցնի մեզ այս պատմությունը այդ խոստումների և նախազգուշացումների պայմանական բնույթի մասին:

Հինգշաբթի **Հուլիսի 23**

Հովնանի լացը

Հովնան 4.1-11-ը հաստատում է, որ առաքելության մեջ Իր մարգարեին ներգրավելու հարցում Աստծո համար մեծագույն խոչընդոտը ո՛չ տարածությունն էր, ո՛չ էլ քամին, նավաստիները, կետը կամ նինվեացիները: Դա ինքը՝ մարգարեն էր: Նինվեացիների հավատը հակադրված է Հովնանի անհավատությանն ու քինախնդրությանը: Հովնանը միակ մարդն է Աստվածաշնում, ով Աստծուն *մեղադրում է*, որ Նա բարի է և գթասիրտ, երկայնամիտ և բազմաողորմ, որ ցավում է դժբախտության համար: Թվում է՝ մարդկանց մեծամասնությունն ուրախ է, որ Աստված օժտված է այդպիսի հատկանիշներով:

«Երբ Հովնանն իմացավ Աստծո նպատակի մասին՝ խնայելու այն քաղաքը, որը, չնայած իր ամբարշտությանը, ապաշխարեց հող ու մոխրով, նա պետք է առաջին հերթին ուրախանար Աստծո զարմանահրաշ շնորհի համար, բայց դրա փոխարեն նա իր մտքին թույլ տվեց խորհել այն մասին, որ իրեն կարող են կեղծ մարգարե համարել: Նախանձախնդիր լինելով իր հեղինակության համար՝ նա աչքաթող արեց այդ արգահատելի քաղաքում եղած մարդկանց անհամեմատ մեծ արժեքը: Ապաշխարած նինվեացիների հանդեպ Աստծո դրսևորած կարեկցանքը «մեծ տրտմությունով տրտմեցրեց» Հովնանին, և նա «զայրացավ»» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 271):

Կարդացե՛ք Հովնան 4.10,11-ը: Այս տեքստերը ի՞նչ են սովորեցնում մեզ Աստծո բնավորության մասին՝ մարդկային մեղավոր էության համեմատությամբ: Ինչո՞ւ մենք պետք է ուրախանանք, որ Աստված և ոչ թե մեզ նման մարդիկ են դատելու մեզ: _____

_____

_____

Չորրորդ գլխում Հովնանը երկու անգամ դրսևորում է իր զայրույթը: Նա բարկացել էր, որովհետև Աստված միտքը փոխեց և փրկեց Նինվե քաղաքի ավելի քան հարյուր քսան հազար բնակիչներին: Նա նաև բարկացավ այն պատճառով, որ բույսը չորացավ: Հովնանը եսասեր էր, և հարկավոր էր, որ նա ճիշտ բաշխի գերակայությունները:

Աստված Հովնանին սովորեցնում էր գիտակցել, որ բոլոր մարդիկ եղբայրներ են՝ այն բանի հիման վրա, որ Աստված Հայր է: Մարգարեն պետք է ընդուներ, որ ինքը նույնպիսի մարդ է, ինչպես և այդ՝ թեկուզ ճանապարհից շեղված «օտարերկրացիները»: Մի՞թե 120000 մարդը բույսից ավելի կարևոր չէ:

Կրկին կարդացե՛ք Աստծո հանդիմանությունը Հովնանին: Ինչի՞ վերաբերյալ կարող էր Աստված ինչ-որ նման բան ասել մեզ: Այսինքն՝ որքանո՞վ ենք մենք առավել հաճախ մտահոգված լինում մեր անձնական խնդիրներով (որոնցից շատերը կարող են դատարկ բաներ լինել), քան կործանվող հոգիներով, ում փրկության համար Հիսուսը թափել է Իր արյունը:

Ուրբաթ *Հուլիսի 24*

Հետագա ուսումնասիրության համար

«Հովնան մարգարեի գիրքը կարևոր է առաքելության աստվածաշնչյան հիմքը հասկանալու համար. չէ՞ որ այն պատմում է Իր ժողովրդին Աստծո հրահանգի մասին՝ հեթանոս ազգերի վերաբերյալ, և այդպիսով որպես նախապատրաստական քայլ է ծառայում Նոր Կտակարանի միսիոներական հանձնարարության համար: Բայց նաև կարևոր է տեսնել, թե ինչ դիմադրության է հանդիպում այդ հանձնարարությունը Յահվեի հենց այն ծառաների կողմից, ում Նա ընտրել է՝ ողջ աշխարհում Իր հանձնարարությունը կատարելու համար» (Ջ. Վերկույլ, Ժամանակակից միսիոլոգիա, 96):

Հարցեր քննարկման համար.

1. «Նինվեի պատմության մեջ դաս կա, որը մեզ հարկավոր է ուշադիր ուսումնասիրել... Դուք պետք է իմանաք ձեր պարտքը ձեր անգետ ու պղծված մերձավորների նկատմամբ, ովքեր ձեր օգնության կարիքն ունեն» (Էլեն Ուայթ, Աշխատանքը հարավում, 80): Ո՞րն է մեր պարտքը այդ մարդկանց հանդեպ:
2. Ասորեստանը գերտերություններից մեկն էր և հին Մերձավոր Արևելքում գերիշխում էր մոտավորապես ՔԱ 885-625 թվականներին: Իսրայելն ու Հուդան բազմիցս տառապել էին նրա դաժան լծի ներքո: Իսրայելի Հեու թագավորը ստիպված էր հարկ վճարել այն ժամանակ գերիշխող ասորական Սալմանասար III թագավորին: Իսրայելը ասորական զորքերին վերջնականապես հանձնվեց ՔԱ 722 թվականին: Զարմանալի չէ, որ Հովնանն այդքան չէր ցանկանում գնալ Նինվե՝ Ասորեստանի չորս գլխավոր քաղաքներից մեկը և Աստարտի՝ սիրո և պատերազմի աստվածուհու երկրպագության կենտրոնը: Աստված նրան կոչ արեց այցելել թշնամական տարածքի հոգևոր կենտրոն, որպեսզի ռազմաշունչ ասորեստանցիներին ապաշխարության կոչ անի: Ի՞նչ դասեր են բովանդակվում այստեղ մեր առաքելության վերաբերյալ:
3. Մնացորդ եկեղեցին ինչպե՞ս կարող է խուսափել այն թյուր կարծիքից, թե Աստծո բոլոր խորհուրդներն ու օրհնությունները այնպիսի բնագավառներում, ինչպես շաբաթը, առողջությունն ու կրթությունն են, մեզ տրված են մեր սեփական օգտի համար, և ոչ թե բոլոր ազգերի օգտի համար: Կարդացե՛ք Հայտնություն 3.17,18-ը:
4. Հայտնություն 14.6-12-ի երեք հրեշտակների պատգամն ինչպե՞ս է արտացոլում նինվեացիներին Հովնանի տարած լուրը:
5. Որոշ մարդիկ մեքենայաբար հերքում են Հովնանի պատմությունը, հատկապես՝ այն մասը, որտեղ պատմվում է մեծ ձկան մասին: Ի՞նչ ելակետային նախադրյալներ են նրանց ստիպում անմիջապես հերքել այդ պատմությունը: Ի՞նչ ելակետային նախադրյալներ են պահանջվում՝ դրան հավատալու համար:

Դաս 5
Հուլիսի 25-31

ԳԵՐԻ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Դանիել 1.12, Եսայիա 39.5-7, Դանիել 2.44, Մատթեոս 24.14,15, Ծննդոց 41:

Հիշելու համարը.
«Եվ նրան տրվեց իշխանություն և պատիվ և թագավորություն, որ բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները նրան ծառայեն. նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և նրա թագավորությունը չի քանդվի» (Դանիել 7.14):

Որպես մարգարեության ժողովուրդ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստները հավատում են Քրիստոսի մոտալուտ գալստին: Նրա գալուստը վերջ կդնի այս աշխարհին, ինչպիսին մենք այն գիտենք, և ի վերջո կնշանավորի Աստծո հավիտենական թագավորության սկիզբը, որ նկարագրված է Դանիել մարգարեի գրքում. «Եվ թագավորությունն ու իշխանությունը և բոլոր երկնքի տակ եղող թագավորությունների մեծությունը պիտի տրվի բարձրյալի սուրբերի ժողովրդին. նրա թագավորությունը հավիտենական թագավորություն է, և բոլոր իշխանությունները պիտի նրան ծառայեն և հնազանդվեն» (Դանիել 7.27): Այդ թագավորությունը մեր հավատի գագաթնակետն է, դա այն է, ինչ Եբրայեցիս գիրքն անվանում է «ավետիքի» երկիր, որի գալստյանը հավատում էին բոլոր դարերի բոլոր Աստծո մարդիկ, «որի ճարտարապետը և արարիչն Աստված է» (Եբրայեցիս 11.10):

Բայց Դանիելի գիրքը նաև միսիոներական գործունեության դասագիրք է: Նրանից մենք կարող ենք դասեր քաղել այն մասին, թե Տերն ինչպես կարողացավ օգտագործել Իր մարդկանցից ոմանց, որ վկայեն նրանց, ովքեր թաղված էին հոգևոր ու աստվածաբանական անտեղյակության մեջ: Իրենց հավատարմության, ջանքերի և անսասան հավատի շնորհիվ այդ հավատացյալները կենդանի Աստծո իրողությունը բացահայտեցին նրանց համար, ովքեր ճանաչում էին միայն կեղծ աստվածների, և հեթանոսներին նույնպես հնարավորություն տվեցին՝ տեղ ստանալու հավիտենական թագավորության մեջ:

Բաբելոնի գերությունը

Կարդացե՛ք Եսայիա 39.5-7 և Դանիել 1.1,2-ը: Ինչպե՞ս են կապակցված այս տեքստերը: _____

_____

_____

Դանիելը, ում անունը նշանակում է «Աստված իմ դատավորն է», բռնությամբ հաղթված Երուսաղեմից տեղափոխվել էր Բաբելոնի մայրաքաղաք: Դանիելի գիրքը որոշ պատկերացում է տալիս նրա կյանքի մասին՝ Բաբելոնի ու Պարսկաստանի արքունիքներում: Բաբելոնում երեք տարվա ուսումնառությունից հետո Դանիելը ծառայության վերցվեց որպես պետական ծառայող և արքունի խորհրդական: Գերի լինելով հանդերձ, Աստծո զորության շնորհիվ՝ նա բարձրաստիճան միսիոներ դարձավ երկու գերտերությունների համար:

Դանիելի գիրքը լոկ մարգարեական գրականության գանձ չէ: Ընթերցողը ծանոթանում է որոշ դժվարությունների, որոնց բախվեցին այլ մշակույթի մեջ ապրող հրեաները, ինչը ոչ մի կերպ չէր նպաստում Իսրայելի Աստծո հանդեպ նրանց հավատարմությանը, իսկ երբեմն էլ բացահայտորեն թշնամական էր: Գիրքը նաև ներկայացնում է հիասքանչ պատկերը այն տղամարդկանց, ովքեր սովորել էին՝ ճշմարտությանն իրենց նվիրվածությունը կենսագործել տաճարի, քահանաների և զոհաբերությունների բացակայությամբ:

Կարդացե՛ք Դանիել 1.8-13, 5.12, 6.4, 9.3-19-ը: Այս տեքստերը ի՞նչ են ասում մեզ Դանիելի բնավորության մասին, ով այդքան ականավոր միսիոներ դարձավ: _____

_____

_____

_____

«Յուրաքանչյուր հաստատություն, որի անվան մեջ կա «ադվենտիստական» բառը, պետք է այս աշխարհի համար լինի նույնը, ինչ Հովսեփն էր Եգիպտոսի և Դանիելն ու իր ընկերները՝ Բաբելոնի համար: Համաձայն Աստծո նախախնամության՝ այդ մարդիկ գերի ընկան, որպեսզի հնարավորություն ստանան՝ հեթանոս ժողովուրդներին տանելու ճշմարիտ Աստծո մասին գիտությունը: Նրանք պետք է դառնային Աստծո ներկայացուցիչները մեր աշխարհում: Նրանք իրավունք չունեին փոխզիջման գնալու հեթանոս ազգերի հետ, որոնց

հանդիպել էին հանգամանքների բերումով, այլ պետք է հավատարիմ մնային իրենց կրոնին՝ կրելով երկինքն ու երկիրն արարող Աստծուն երկրպագողների անունը՝ որպես առանձնահատուկ պատիվ» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 8, 153):

Խորհեցե՛ք, թե Դանիելի համար որքան հեշտ կլիներ փոխզիջման գնալը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքները, որոնցում գտնվում էր ինքը: Ի՞նչ է ասում նրա օրինակը մեր փոխզիջումների «անհրաժեշտության» մասին:

Երկուշաբթի **Հուլիսի 27**

Վկաները (Դանիել 2-5)

Դանիել 2-րդ գլխում Դանիելին հնարավորություն ընձեռվեց հանգամանքների բերումով վկայել ճշմարիտ Աստծո զորության մասին՝ ի հակակշիռ Բաբելոնի կեղծ աստվածների: Իր հայրենակից հրեաների հետ փառաբանության օրներգ երգելով և փառաբանելով Աստծուն՝ իրենց աղոթքներին պատասխանելու համար (Դանիել 2.20-23)՝ Դանիելը մեկնեց թագավորի երազը և վկայեց Աստծո վեհության և բոլոր երկրային թագավորությունների հանդեպ Նրա տիրակալության մասին:

Թագավորի ո՞ր խոսքն է ցույց տալիս, որ նա ինչ-որ բան իմացավ ճշմարիտ Աստծո մասին: Տե՛ս Դանիել 2.47-ը:

Դանիելն առանձնապես ընտրության հնարավորություն չուներ. կա՛մ թագավորին տալ այն, ինչ նա ցանկանում էր, կա՛մ էլ մահ: 3-րդ գլխում, ընդհակառակը, նրա երեք ընկերները կարող էին փրկվել շիկացած վառարանից, եթե պարզապես հնազանդվեին թագավորի հրամանին: Բայց դրա փոխարեն նրանք իրենց հավատարմությամբ կարողացան վկայել ճշմարիտ Աստծո զորության մասին:

«Որտեղի՞ց գիտեր Նաբուգոդոնոսորը, որ չորրորդ երիտասարդի տեսքը նման է Աստծո Որդուն: Աստծո Որդու մասին նա ավելի վաղ լսել էր հրեա գերիներից, ովքեր իր թագավորությունում էին: Նրանք բերել էին կենդանի Աստծո իմացությունը, Ով կառավարում է ամեն բան» (Է. Ուայթ, Adventist Rewiew and Sabbath Herald, 1892թ. մայիսի 3):

Է՞լ ինչ իմացավ Նաբուգոդոնոսոր թագավորը Դանիելի վկայության շնորհիվ: Տե՛ս Դանիել 4.34-ը: _____

_____

_____

Դանիել 5-րդ գլխում մենք վերջին անգամ ենք Դանիելին հանդիպում Բաբելոնի արքունիքում, ուր նրան հրավիրել էին՝ մեկնելու Բաղդասարի պալատի պատի անսովոր գրառումը, որը կանխագուշակում էր բաբելոնյան կայսրության անկումը մարերի և պարսիկների կողմից: Անշուշտ, թեև Բաղդասարը տպավորված էր Դանիելի արածով, արդեն չափազանց ուշ էր որևէ բան փոխելու համար. թագավորի ճակատագիրը վերջնականապես վճռված էր: Ցավալի է այն, որ, համաձայն Աստվածաշնչի (տե՛ս Դանիել 5.17-23), նախկինում Բաղդասարն ունեցել էր ճշմարտությունն իմանալու և խոնարհվելու հնարավորություն: Ինչպես գիտենք, նա այդ հնարավորություններից չօգտվեց:

Որքա՜ն կարևոր է, որ մենք, նայելով մեր կյանքին, հարցնենք ինքներս մեզ. ի՞նչ վկայություն է տանում իմ կյանքն աշխարհին: Ինչի՞ մասին է խոսում ձեր պատասխանը:

Երեքշաբթի **Հուլիսի 28**

Դանիելը Պարսկաստանում

«Եվ երբ որ գուբին մոտեցավ, Դանիելին կանչեց տրտում ձայնով. թագավորը խոսեց և ասաց Դանիելին. Ո՛վ Դանիել՝ կենդանի Աստծո ծառա, քո Աստվածը, որին դու պաշտում ես անդադար, կարողացա՞վ քեզ ազատել առյուծներից» (Դանիել 6.20): Թագավորը Դանիելին անվանեց «կենդանի Աստծո ծառա»: Ի՞նչ են նշանակում այս խոսքերը: _____

_____

_____

_____

Դանիել 6-ում թեև իշխանությունը փոխվել էր, Դանիելը դեռևս զբաղեցնում էր իր պաշտոնը և անգամ ծառայողական առաջխաղացում ունեցավ՝ դառնալով այն երեք իշխաններից մեկը, ում ենթարկվում էին 120 սատրապները: Դարեհ արքան անգամ մտածում էր՝

նրան ողջ թագավորության վեզիր նշանակելու մասին, ինչն առաջ բերեց մյուս իշխանների ու սատրապների թշնամանքը: Նրանք դրդեցին թագավորին՝ հրաման արձակելու ողջ կայսրության համար, որն իրականում ուղղված էր միայն Դանիելի դեմ: Նրան նետեցին առյուծների գուբը, բայց Աստված հրաշալի կերպով միջամտեց իրադրությանը, որը չէր կարող փոխել անգամ Դանիելի հանդեպ բարեհաճորեն տրամադրված թագավորը: Դանիելի փրկությունն այնպես ուրախացրեց թագավորին, որ նա Դանիելի Աստծուն մեծարող հրովարտակ արձակեց:

«Սրանից հետո Դարեհ թագավորը ողջ երկրում բնակվող բոլոր ազգերին, ցեղերին և լեզուներին գրեց. «Ծատանա ձեր խաղաղությունը: Ինձանից հրաման դուրս եկավ, որ իմ թագավորության բոլոր իշխանության մեջ վախենան և դողան Դանիելի Աստծո երեսից, որ նա է կենդանի Աստվածը և կա հավիտյան, և նրա թագավորությունը չի քանդվի, և նրա իշխանությունը մինչև վերջն է: Նա է ազատում և փրկում, և նշաններ ու հրաշքներ անում երկնքում և երկրի վրա, որ Դանիելին ազատեց առյուծների ձեռից» (Դանիել 6.25-27):

Կարդացե՛ք Դանիել 6-ը: Այս գլխում ինչպե՞ս է բացահայտվում այն, ինչ Դանիելը մինչև այդ էլ վկայել էր թագավորին: Թագավորի հրովարտակն ինչպե՞ս է ապացուցում, որ նա ավելի շատ բան գիտեր Դանիելի Աստծո մասին, քան կկարողանար իմանալ միայն Դանիելի հրաշալի փրկությունից: Ի՞նչ է ասում սա մեզ Դանիելի՝ թագավորին վկայելու մասին: _____

_____

_____

_____

Չորեքշաբթի **Հուլիսի 29**

Դանիելը և Աստծո հավերժական թագավորությունը

Դանիելը պարզապես ուրիշների խոսքերի մեկնիչ չէր, թեկուզև դա կարևոր է այս համատեքստում: Դանիել մարգարեի գրքի 7-12-րդ գլուխներում ասված է, որ նա ունենում էր նաև իր տեսիլքները, որոնք բացահայտում էին աշխարհի գերտերությունների ապագան: Դանիելի տեսիլքները հատկապես ընդգծում են, որ, չնայած երկրա-

յին տիրակալներին, նրանց ծրագրերին ու խարդախություններին, Աստված պահպանում է ժողովուրդների նկատմամբ վերջնական վերահսկողությունը: Ի վերջո, Նա և Իր թագավորությունը հաղթանակ կտանեն, և այդ հաղթանակը լիակատար կլինի (տե՛ս Դանիել 2.44):

Կարդացե՛ք Դանիել 7.13,14-ը: Ի՞նչ է նկարագրված այս տեքստերում, և դա ի՞նչ կապ ունի այն գաղափարի հետ, որ քրիստոնյաները կոչված են՝ աշխարհին տանելու Ավետարանը:

Ուրիշ ինչի մասին էլ խոսեն այս տեքստերը, կենտրոնական հարցը Աստծո հավիտենական թագավորության հաստատումն է, որ վրա կհասնի միայն Հիսուսի վերադարձից հետո: Իսկ Իր՝ Հիսուսի խոսքերով ո՞ր գործոնն է կարևոր Նրա վերադարձի համար:

«Եվ արքայության ավետարանը բոլոր տիեզերքում կքարոզվի ամեն հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը: Արդ՝ երբ որ տեսնեք ավերածի պղծությունը, Դանիել մարգարեի ձեռով ասվածը, սրբության տեղում կանգնած. կարդացողը մտածի. այն ժամանակ նրանք, որ Հրեաստանում են, թող փախչեն սարերը» (Մատթեոս 24.14-16):

Մատթեոս 24-ում աշխարհի վերջի մասին Հիսուսի մարգարեությունները կապված են Դանիելի մարգարեությունների հետ: Դանիելի կանխասած «ավերածի պղծությունը» (Դանիել 11.31, 12.11) Հիսուսի կողմից հետագայում էլ բացատրվեց և կիրառվեց Իր օրվա վերաբերյալ: Հարցն այն է, որ Հիսուսը Դանիելի գիրքը սերտորեն կապում էր աշխարհի վերջի հետ, ինչն, իհարկե, զարմանալի չէ, քանի որ Դանիելը շատ տեղերում իսկապես մատնանշել է ժամանակի վերջը (Դանիել 8.17,19, 11.35, 12.4,13): Եվ, Հիսուսի խոսքերով, վերջը վրա չի հասնի, քանի դեռ չի քարոզվել «արքայության այս ավետարանը բոլոր տիեզերքում» (Մատթեոս 24.14):

Ավետարանը պետք է քարոզվի «ողջ տիեզերքում, և միայն հետո կգա Քրիստոսը: Եվ հենց մենք ենք կոչված՝ քարոզելու այն: Այդ դեպքում, առարկում են ոմանք, Հիսուսը չի կարող գալ, քանի դեռ մենք մեր աշխատանքը չենք կատարել: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք մեր դերը Քրիստոսի գալու ժամանակը «սահմանելու» մեջ կամ, այլ խոսքերով, մենք ազդո՞ւմ ենք երկրորդ գալստյան ամսաթվի վրա: Շաբաթ օրը ձեր պատասխանով կիսվե՛ք դասարանում:

Այլ վտարանդի միսիոներներ

Դանիելը հրեա է, ով բռնությամբ վերաբնակեցվել էր Իսրայելից, ինչպես Հովսեփն ու Մովսեսը՝ Եգիպտոսում, Նեեմիան՝ Բաբելոնում, իսկ Եսթերը՝ Պարսկաստանում: Նրանց կյանքը ցույց է տալիս, որ կարելի է Աստծուն հավատարիմ մնալ այն միջավայրում, որը հոգևորապես ու մշակութային առումով հակադրվում է հավատին: Աստծո առաջնորդությամբ նրանք կարողացան անգամ բարձր ղեկավար պաշտոններ ստանձնել իրենց համար խորթ այդ միջավայրում: Նրանցից յուրաքանչյուրն ապրում էր ստեղծագործ ու հագեցած կյանքով՝ հմտորեն հարթելով բարդ կրոնական, սոցիալական, քաղաքական և տնտեսական հակամարտությունները, որոնք օտար էին իրենց հարազատ մշակույթին: Նրանք ոչ միայն աքսորում հրեական համայնքի հավատարիմ անդամներ էին, այլ նաև Աստծո՝ յուրովի արդյունավետ միսիոներներ էին՝ սերված հրեա ժողովրդից:

Աքսորում վկայությունը ներառում էր ինչպես պասիվ ներկայությունը, այնպես էլ ակտիվ քարոզը:

Եսթեր	Դանիել
1. Չէր բացահայտում իր ազգային պատկանելությունը: 2. Թաքցնում էր իր կրոնը: 3. Աստված պաշտպանեց նրան և նրա հարազատներին: 4. Վկայում էր բարձրաստիճան անձանց, որպեսզի փրկի իր, ինչպես նաև իր ժողովրդի կյանքը: 5. Օգնեց՝ սահմանելու կրոնական ազատություն և կրոնական փոքրամասնության ինքնապաշտպանության իրավունքը:	1. Չէր թաքցնում իր ազգությունը: 2. Հայտարարում էր իր կրոնական համոզմունքների մասին: 3. Աստված պաշտպանեց նրան և նրա ընկերներին: 4. Վկայում էր բարձրաստիճան անձանց, որպեսզի փրկի իր կյանքը, ինչպես նաև այլ մարդկանց կյանքը: 5. Անուղղակիորեն ազդեց Կյուրոս արքայի վրա, որպեսզի վերջինս թույլ տա հրեաներին՝ վերականգնելու Երուսաղեմի տաճարը:

Կարդացե՛ք Ծննդոց գրքի 41-րդ գլուխը: Հովսեփն ինչպե՞ս կարողացավ վկայել եգիպտացիներին: Նրա պատմությունն ինչո՞վ է նման Դանիելի և նրա ընկերների պատմությանը՝ Բաբելոնում: _____

Դուք ինչպե՞ս կարող եք վկայել հավատի մասին այն իրավիճակներում, որոնցում հայտնվում եք: Դուք պասի՞վ, թե՞ ակտիվ վկայություն եք տանում, միգուցե և՛ մեկը, և՛ մյո՞ւսը: Դուք ի՞նչ կարող եք ասել կամ անել՝ Աստծո բարության և սիրո վերաբերյալ առավել հզոր տպավորություն թողնելու համար:

Ուրբաթ **Հուլիսի 31**

Հետագա ուսումնասիրության համար

«Ծատերը կկանչվեն՝ ընդարձակ ծառայություն կատարելու համար: Ողջ աշխարհը բաց է Ավետարանի համար... Մեր աշխարհի բոլոր անկյուններից հասնում են մեղքից խոցված սրտերի աղաղակները, որ ծարավ են Աստծո սերը ճանաչելու... Մենք, որ ճանաչում ենք Աստծուն, մեր զավակների հետ մեկտեղ, ում մենք կարող ենք տալ այդ գիտելիքները, պետք է պատասխանենք այդ աղաղակներին: Յուրաքանչյուր տան և յուրաքանչյուր դպրոցի, յուրաքանչյուր ծնողի, ուսուցչի և երեխայի առջև, ում վրա շողում է Ավետարանի լույսը, այս ճգնաժամային պահին ծառանում է այն հարցը, որ ծառացել էր Եսթեր թագուհու առջև՝ Իսրայելի պատմության ճգնաժամային պահին. «Ո՞վ գիտի, գուցե մի այսպիսի ժամանակի համար ես դու թագուհության հասել» (Է. Ուայթ, Քրիստոնեական տուն, 484, 485):

Հարցեր քննարկման համար

1. Քննարկե՛ք Դանիելի գրքի մարգարեությունները, հատկապես՝ 2, 7 և 8-րդ գլուխները: Դրանք համոզիչ կերպով վկայում են ոչ միայն Աստվածաշնչի մարգարեական հուսալիության, այլ նաև այն մասին, որ Աստված գիտի ապագան, այնպես չէ՞: Օրինակ, ուշադրությո՛ւն դարձրեք, որ 2, 7 և 8-րդ գլուխներում անվանված են չորս համաշխարհային թագավորություններից երեքը: Դա ինչպե՞ս պետք է օգնի մեզ, որպեսզի սովորենք վստահել Աստծո Խոսքին և մեզ համար՝ Նրա խոստումներին:
2. Դանիելի գրքում և մի քանի այլ պատմություններում (օրինակ՝ Հովսեփի պատմությունը) նկարագրված են հրաշքներ, որոնք, իհարկե, համոզեցին հեթանոսներին, որ նրանց պատմածները ճշմարտություն են: Բայց այդ աստվածաշնչյան հերոսների բնավորության ո՞ր գծերն էին է՛լ ավելի մեծ համոզչություն հաղորդում

նրանց վկայությանը: Այսինքն՝ ինչպե՞ս կարող են բնավորությունն ու հավատարմությունը առավել հզոր վկայություններ լինել Աստծո իրական լինելու և այն բանի, ինչ Նա կարող է անել մեզ համար, քան նշաններն ու հրաշքներն են:

3. Ինչպես մենք տեսանք չորեքշաբթի օրվա դասում, Մատթեոս 24.14-ում ասվում է, որ Ավետարանը պետք է քարոզվի ամբողջ աշխարհում, և այդ ժամանակ կգա վերջը: Դա նշանակո՞ւմ է, որ Հիսուսը չի գա, մինչև որ մենք չկատարենք այն աշխատանքը, որ Նա հանձնարարել է մեզ: Քննարկե՛ք ձեր պատասխանները:

Դաս 6
Օգոստոսի 1-7

ԵՍԹԵՐՆ ՈՒ ՄՈՒՐԹՔԵՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եսթեր 1-10, Ա Կորնթացիս 9.19–23, Հովհաննես 4.1-26, Գործք առաքելոց 17.26, Մատթեոս 22.21, Հռոմեացիս 1.18.20:

Հիշելու համարը.

«Եվ եթե դու այս միջոցին լռես, մի ուրիշ տեղից հրեաների համար ազատություն և փրկություն վեր կկենա, բայց դու և քո հոր տունը կկորչեք, և ո՞վ գիտի, գուցե մի այսպիսի ժամանակի համար ես դու թագուհության հասել» (Եսթեր 4.14):

Եսթերը առանձնահատուկ առաքելություն իրականացրեց թագավորի պալատում՝ պարսկական կայսրության բուն սրտում: Նրա պատմությունը ապշեցուցիչ հակադրությունների մի շարք է: Ազգային և կրոնական արհամարհված փոքրամասնությունից սերած որբ աղջիկ լինելով՝ նա դարձավ Պարսից կայսրության՝ այն ժամանակվա գերտերության թագավորի կինը: «Բախտը բերեց» արտահայտությունը Եսթերի հետ կապ չունի: Ակնհայտ է, որ Եսթերը մեծարվեց ու նախապատրաստվեց առանձնահատուկ առաքելություն իրականացնելու համար: Նախ նա պետք է գործեր գաղտնի, բայց հետո նա, այնուամենայնիվ, ստիպված եղավ բացահայտել իր ազգային և կրոնական պատկանելությունը:

Մուրթքեի աջակցությամբ Եսթերը խիզախորեն վկայում էր խարդավանքներով լի պարսից արքունիքում, և նրա վկայությունը փրկեց իր ժողովրդին, փոխեց հրեաների ցածր սոցիալական կարգավիճակը և նրանց դարձրեց ողջ կայսրության հիացմունքի առարկան:

Նրա հավատարմության արդյունքում ճշմարիտ Աստծո մասին լուրը լայնորեն տարածվեց հեթանոսների մեջ: Թեև այդ միսիոներական պատմությունը չի կարելի տիպային համարել, Եսթերի ու Մուրթքեի պատմությունը ներկայացնում է որոշ հետաքրքիր սկզբունքներ, որոնք օգնում են հասկանալու, թե ինչ է նշանակում վկայել ոչ սովորական հանգամանքներում:

Միաշաբթի **Օգոստոսի 2**

Եսթերը Պարսկաստանում

Կարդացե՛ք Եսթեր 1.2-20-ը: Ի՞նչ իրադրություն է նկարագրված այստեղ: Ժամանակակից մարդու համար ի՞նչն է դժվար հասկանալ այս պատմության մեջ: (Ընթերցելիս հիշե՛ք, որ շատ մանրամասներ բացակայում են): _____

_____

_____

Յոթնօրյա խնջույքը, որ Ասուերոս արքան կազմակերպել էր իր իշխանների և մերձավորների համար, վատնող ու մսխող էր անգամ նրա համար, ով գտնվում էր քաղաքական իշխանության գագաթին, և քրիստոնյաների մեծ մասն այն անընդունելի կհամարեր: Ալկոհոլային խմիչքների անսահմանափակ օգտագործումը (Եսթեր 1.7,8) արտասովոր երևույթ էր, քանի որ հին ժամանակներում պաշտոնական խնջույքների ժամանակ խմիչքի քանակը սովորաբար կարգավորվում էր սովորույթով և ծիսակարգով: Տվյալ դեպքում ալկոհոլը թագավորի բանականությունը մթագնել էր այն աստիճան, որ նա հրամայեց բերել իր կին Վաշթիին, որպեսզի զվարճացնի տղամարդկանց հարբած հասարակությանը: Դա անհամեմատ ավելի ցածր էր նրա արժանապատվությունից՝ որպես ամուսնացած կին և որպես արքայական տոհմի ներկայացուցիչ: Ինչպիսին էլ լիներ նրա պատասխանը, նրան կարգավիճակի կորուստ էր սպառնում, իսկ բռնակալ տիրակալի ստոր ցանկությունների առաջ սեփական արժանապատվությունը պահպանելու նրա համարձակ որոշումն օգնում է ընթերցողին՝ հասկանալու այն ներքին ուժի մեծությունը, որ ուներ այդ կինը և որ կարող է դրսևորել սկզբունքային կինը անգամ թագավորական պալատում, ուր գերիշխում են տղամարդիկ:

Այդ ընթացքում պատումի թատերաբեմ է դուրս գալիս Եսթերը: Եսթեր 2.3-ը օգնում է հասկանալ, որ այդ կանայք կամավորներ չէին: Թագավորը հրաման էր արձակել, Եսթերն ստիպված էր հնազանդվել: Եթե նա հրաժարվեր, ո՞վ գիտի՝ ինչով կավարտվեր այդ ամենը:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 9.19-23-ը: Այս տեքստերում շարադրված սկզբունքն ինչպե՞ս կարելի է կիրառել Եսթերի պատմության վերաբերյալ: Եվ կարելի՞ է արդյոք: _____

_____

_____

Մինչ այս՝ այդ պատմության իսկական հերոսուհին Վաշթին էր, ով հետո անհետանում է պատումից: Նրա համեստությունն ու հավատարմությունը սկզբունքներին դուռ բացեցին Եսթերի համար: Թեև հարկավոր է ընդունել, որ երբեմն սկզբունքներին հետևելը կարող է չհանգեցնել ակնհայտ բարիքի, ինչո՞ւ մենք պետք է սկզբունքային դիրք զբաղեցնենք, անգամ եթե չգիտենք մեր գործողությունների հետևանքները:

Երկուշաբթի **Օգոստոսի 3**

Եսթերը թագավորի պալատում

Կարդացե՛ք Եսթեր 2.10,20-ը: Ի՞նչ իրավիճակում կարող էր հայտնվել Եսթերը՝ թաքցնելով, անգամ ժամանակավորապես, իր ազգային և կրոնական պատկանելությունը:

_____

_____

Կարդացե՛ք Հովհաննես 4.1-26-ը՝ Հիսուսի և կնոջ պատմությունը ջրհորի մոտ: Ինչո՞ւ է Հիսուսն այդքան բացահայտորեն ասում նրան, որ Ինքը Մեսիան է, այն դեպքում, երբ Իր սեփական ժողովրդի մեջ Նա այդքան անկեղծ չէր: Այս պատմությունն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու Մուրթքեի հրահանգը ուղղված Եսթերին: _____

_____

_____

Մուրթքեն հրամայել էր Եսթերին՝ չբացահայտել, թե ինչ ազգության է պատկանում ինքը և ինչ ընտանիքից է: Որոշ մեկնաբաններ տարակուսում են այս առիթով և կասկածում են այդպիսի ծածկամտության անհրաժեշտությանը, հատկապես այն ժամանակ, երբ հրեա ժողովրդին ոչինչ չէր սպառնում: Մի՞թե նա չէր կարող իր Աստծո մասին վկայել այդ հեթանոսներին, եթե բացահայտորեն ասեր, թե ով է ինքը և որ Աստծուն է երկրպագում: Թե՞ հրեական ծագումը կարող էր անվստահություն առաջ բերել պարսկական արքունիքում և նրան կխանգարեր մոտենալ թագավորին, երբ նա աղաչում էր իր ժողովրդի համար: Սակայն, ըստ երևույթին, դեռևս վտանգի ծագելուց առաջ Մուրթքեն Եսթերին նախազգուշացրել էր չբացահայտել, թե

ով է ինքը: Բանն այն է, որ Աստվածաշունչը չի բացատրում նրա այդ խոսքերի պատճառները, սակայն, ինչպես մենք տեսնում ենք Հիսուսի օրինակով, հարկ չկա միշտ ամեն բան անմիջապես բացահայտել ցանկացած պարագայում: Խելամտությունն ու շրջահայեցությունը առաքինություններ են:

Եվ, այնուամենայնիվ, ինչո՞ւ էր Հիսուսն այդքան բացեիբաց խոսում ջրհորի մոտի կնոջ և ոչ թե Իր ժողովրդի հետ:

«Քրիստոսը անհամեմատ ավելի զուսպ էր նրանց հետ զրույցներում: Եվ ահա այն, ինչ ծածկված է հրեաներից, այժմ հայտնվեց կնոջը: Հիսուսը տեսնում էր, որ նա անպայման կօգտագործի իր գիտելիքը, որպեսզի ուրիշներն էլ կարողանան շփվել Նրա շնորհի հետ» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 190):

Դուք երբևէ եղե՞լ եք այնպիսի իրավիճակում, երբ սեփական համոզմունքների մասին չափավոր խոսելը խելամիտ է եղել: Դուք ի՞նչ պատճառներ եք ունեցել դրա համար: Հետ նայելով՝ դուք կվարվեի՞ք այլ կերպ: Եթե՝ այո՛, ապա ի՞նչ կերպ:

Երեքշաբթի Օգոստոսի 4

«Գուցե մի այսպիսի ժամանակի համար...» (Եսթեր 2.19-5.8)

Եսթեր 3.1-5-ում սկսվում է այս պատմության հանգուցալուծումը: Մուրթքեն՝ կռապաշտությունն արգելող պատվիրանին հետևող մի հրեա, հրաժարվում է երկրպագել հասարակ մարդ Համանին: Կատաղած Համանը հասցված վիրավորանքի համար հատուցելու եղանակ է որոնում: Այդպիսով, Մուրթքեն իր արարքներով այդ հեթանոսներին վկայում էր ճշմարիտ Աստծո մասին:

Ի՞նչ պատրվակով էր Համանը փորձում կայսրությունը մաքրել հրեաներից: Որքա՞ն հեշտ է, որ մշակութային տարբերություններն այնքան կուրացնեն մեզ, որպեսզի մենք մոռանանք, որ բոլոր մարդիկ պատկանում են մեկ մարդկային ընտանիքի: Եսթեր 3.8-13, տե՛ս նաև Գործք առաքելոց 17.26-ը: _____

_____

Երբ Համանի դավադրությունը հայտնի դարձավ. Մուրթքեն տեսանելի կերպով արտահայտեց իր տրտմությունը՝ օգտագործելով

միակ հրեական ծեսը, որ հիշատակված է Եսթերի գրքում. «Պատռեց իր հանդերձները և քուրձ հագավ ու մոխիրը ցանեց իր վրա... և մեծ ու ողբալի ձայնով աղաղակեց» (Եսթեր 4.1): Այդ ժամանակ Եսթերը պատրաստվում էր անել այն, ինչի մեջ հենց Համանը մեղադրում էր հրեաներին: Նա՝ հրեուհին, հուսալով խափանել Համանի դավադրությունը, կխախտի պարսից արքայի հրամանը՝ հերոսաբար գնալով նրա մոտ՝ առանց հրավերի: Թագավորը նրան թույլ տվեց ներս մտնել և ընդունեց միասին ճաշելու նրա հրավերը: Այժմ Եսթերն իր վրա է վերցնում նախաձեռնությունը՝ ցանկանալով թույլ չտալ ողջ Պարսկաստանի հրեա գերիներին սպառնացող ողբերգությունը: Այս պատմության մեջ Եսթերը դրսևորում է անձնուրացություն և հերոսություն (Եսթեր 4.16), նրբանկատություն (Եսթեր 5.8) և արիություն (Եսթեր 7.6):

«Եսթեր թագուհու միջոցով Տերը կատարեց Իր ժողովրդի մեծազոր ազատագրումը: Այն ժամանակ, երբ թվում էր, թե ոչ մի զորություն չի կարող փրկել նրանց, Եսթերն ու իր հետ կապված կանայք ծոմով, աղոթքով ու անհապաղ գործողություններով լուծեցին խնդիրն ու փրկություն բերեցին իրենց ժողովրդին:

Ուսումնասիրելով կանանց գործունեությունը Աստծո գործի մեջ հինկտակարանյան ժամանակներում՝ մենք դաս ենք քաղում, որը մեզ ընդունակ կդարձներ լուծելու անհետաձգելի հարցերն այսօրվա աշխատանքում: Հնարավոր է՝ մենք այդպիսի ճգնաժամային ու հայտնի վայրում չենք հայտնվի, ինչպես Աստծո ժողովուրդն էր Եսթերի ժամանակներում, բայց հաճախ նվիրված կանայք կարող են կարևոր դեր խաղալ առավել համեստ իրավիճակում» (Է. Ուայթի մեկնությունները ՅՈԱ աստվածաշնչյան մեկնություններում, հատոր 3, 1140):

Կարդացե՛ք Եսթեր 4.14-ը, Եսթերին ուղղված Մուրթքեի նշանավոր խոսքերը. «Եվ ո՞վ գիտի, գուցե մի այսպիսի ժամանակի համար ես դու թագուհության հասել»: Այժմ ինչպե՞ս կարելի է կիրառել այս սկզբունքը ձեր առումով:

Չորեքշաբթի **Օգոստոսի 5**

Մուրթքեն և Համանը

Համաձայն Եսթեր 5-8-ի՝ Եսթերը ինչպե՞ս կարողացավ փրկել իր ժողովրդին: _____

Եսթերի երկու խնջույքների մասին պատումը ողջ պատմության գագաթնակետն է: Այստեղ նաև խոսվում է ազգի ոչնչացման ծրագիրը չեղյալ հայտարարելու մասին: Բացի դրանից, Եսթերի պատմությունը ցույց է տալիս, թե ճշմարիտ փառքն ինչպես է տարբերվում ինքնափառաբանությունից, այստեղ նկարագրված է նաև դավադրի պատիժը: Այս պալատական խարդավանքները հեռուն գնացող հետևանքներ ունեին: Դրանք մեզ հնարավորություն են տալիս տեսնելու բացարձակ միապետի և նրա պալատականների անդրկուլիսյան գործողությունները: Եսթերն ու Մուրթքեն օգտագործեցին իրենց դիրքը, մշակույթի իմացությունը, որտեղ իրենք գտնվում էին, և իր ժողովրդին փրկություն բերելու Աստծո խոստման հանդեպ հավատը:

Չնայած այն բանին, որ Մուրթքեն ծառայության խաղաղ կյանք էր վարում, նա իր հավատը հայտնի դարձրեց, թեկուզ հենց նրանով, որ հրաժարվեց խոնարհվել Համանի առջև: Մարդիկ նկատում էին դա և նախազգուշացնում էին նրան, բայց նա որոշեց փոխզիջման չգնալ (Եսթեր 3.3-5): Դա, իհարկե, վկայություն էր շրջապատողների համար:

Կարդացե՛ք Եսթեր 6.1-3-ը: Սա մեզ ի՞նչ է ասում Մուրթքեի մասին: Ի՞նչ դասեր կարող ենք քաղել մենք այն բանի վերաբերյալ, թե Աստծո ժողովուրդը ինչպես կարող է ապրել և անգամ վկայել օտար երկրում: _____

_____

_____

_____

_____

Թեև Մուրթքեն, ակներևաբար, հնազանդ էր Տիրոջը, նա, սակայն, նվիրվածություն ցուցաբերեց այն ժողովրդի առաջնորդի հանդեպ, որտեղ ապրում էր: Հրաժարվելով խոնարհվել մարդու առջև՝ նա, այնուամենայնիվ, իրեն դրսևորեց որպես բարեխիղճ քաղաքացի, երբ բացահայտեց թագավորի դեմ ուղղված դավադրությունը: Այն փաստից, որ նա չպարգևատրվեց այդ արարքի համար, կարելի է եզրակացնել, որ, դավադրության մասին նախազգուշացնելով, նա պարզապես հեռացավ՝ չսպասելով որևէ պարգևատրության: Սակայն ժամանակի ընթացքում, ինչպես ցույց է տալիս այս պատմությունը, նրա բարի արարքն ավելի քան պարգևատրվեց: Նրա պատմության վերջաբանը կարող են հանդիսանալ հետևյալ բառերը. «Կայսրինը տվեք կայսրին, Աստծունը՝ Աստծուն» (Մատթեոս 22.21):

Երբ մի քանի հեթանոս հրեա դարձան

Կարդացե՛ք Եսթեր 8-ը և առանձնահատուկ ուշադրություն դարձրեք 17-րդ համարին: Մենք ինչպե՞ս կարող ենք հասկանալ այս տեքստը՝ քարոզի և վկայության համատեքստում:

Իհարկե, Եսթերի գիրքը քարոզի և վկայության բնորոշ պատմություն չէ: Սակայն մենք տեսնում ենք, որ հեթանոսների՝ հուդայականության դարձի գալը այստեղ ևս տեղի է ունենում: Հրեաների օգտին թագավորի հրովարտակի արդյունքում «այն երկրի ժողովրդից շատերը հրեա էին դառնում, որովհետև հրեաների վախն ընկել էր նրանց վրա» (Եսթեր 8.17): Որոշ մեկնաբաններ կասկածում են նրանց ապաշխարության անկեղծությանը, քանի որ վախն ու անհանգստությունը տեղ չունեն ճշմարիտ դարձի մեջ: Թեև դա ճիշտ է, ով գիտի՝ վերջին հաշվով այդ մարդիկ, ինչ դրդապատճառներ էլ ունենային սկզբում, կարող էին արձագանքել Սուրբ Հոգու ազդեցությանը, հատկապես այն բանից հետո, երբ տեսան հսկայական տարբերությունը իրենց նախկին հավատի և միակ ճշմարիտ Աստծո հավատի ու երկրպագության միջև:

Կարդացե՛ք Հռոմեացիս 1.18-20-ը: Այստեղ ներկայացված գաղափարներն ինչպե՞ս կարող էին գործել Եսթերի դարաշրջանի մարդկանց կյանքում: _____

_____

_____

Հրեաների դեմ ուղղված սկզբնական հրովարտակում թույլատրվում էր ոչ միայն սպանել նրանց, այլ նաև «նրանց ավարը հափշտակել» (Եսթեր 3.13): երբ հրեաներին թույլատրվեց սպանել իրենց թշնամիներին, նրանց նաև ասվեց, որ նրանք կարող են «հափշտակել» իրենց թշնամիների ունեցվածքը (Եսթեր 8.11): Սակայն Եսթերի գրքում (9.10,15,16) երեք անգամ որոշակիորեն ասվում է, որ հրեաները «ավարին ձեռք չերկարացրեցին»: Թեև տեքստերում ասված չէ, թե ինչու, այն փաստը, որ դա հիշատակվում է երեք անգամ, ցույց է տալիս այդ արարքի կարևորությունը: Ամենայն հավանականությամբ, նրանք ձեռնպահ մնացին դրանից, որովհետև ցանկանում էին, որ բոլորն իմանան. իրենք գործում են ինքնապաշտպանության դրդումներից, ոչ թե հանուն ագահության:

Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ մեր քարոզի և շրջապատողներին վկայելու միջոցով մենք այնպիսի բան չենք անում, ինչը կդրդի մարդկանց՝ կասկածելու մեր դրդապատճառներին: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:

Ուրբաթ Օգոստոսի 7

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, գլուխ «Եսթեր թագուհու օրերին», 598-606:

«Հրովարտակը, որ վերջում կհրապարակվի Աստծո ժողովրդի դեմ, շատ նման կլինի նրան, որ հրեաների դեմ հրապարակել էր Ասուերոսը: Այսօր ճշմարիտ եկեղեցու թշնամիները շաբաթը պահող մարդկանց ոչ մեծ խմբի մեջ տեսնում են դարպասի մոտ նստած Մուրթքեին: Աստծո օրենքի հանդեպ Նրա ժողովրդի երկյուղածությունը մշտական հանդիմանություն է նրանց համար, ովքեր դեն են նետել Աստծո երկյուղն ու տրորում են Նրա շաբաթը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 605):

Հարցեր քննարկման համար.

1. Մենք ի՞նչ զուգահեռներ կարող ենք անցկացնել հրեաների դեմ հրապարակված հրովարտակի և նրա միջև, որ հրապարակվելու է վերջին օրերին, երբ «գազանի դրոշմի» հարցը դառնա առաջնահերթ:
2. Ինչպես հրեաները, այնպես էլ քրիստոնյաները վիճարկել են հինկտակարանյան կանոնի մեջ մտնելու՝ Եսթերի գրքի իրավունքը: Այն չի եղել Հին Կտակարանում, որ օգտագործվում էր կումրանյան համայնքում, ինչպես նաև՝ Հին Թուրքիայի և Սիրիայի եկեղեցիների Հին Կտակարանում: Եսթերի գրքում չի հանդիպում Աստծո անունը, այն դեպքում, երբ մոտ 190 անգամ հիշատակվում է հեթանոս թագավորը: Այստեղ ոչինչ չի ասվում աղոթքի, զոհաբերության, տաճարի կամ Աստծուն երկրպագելու մասին, թեև հիշատակվում է ծոմը: Սակայն Տերը համարեց, որ այն հարմար է կանոնի մեջ ներառվելու համար: Ինչո՞ւ: Ի՞նչ կարևոր հոգևոր դաս կա այն բանում, թե ինչպես Աստված կարող է գործել մեր կյանքում՝ ի բարօրություն մեզ, անգամ այն իրավիճակներում, որ թվում են անելանելի:

3. Ավելի շատ խորհեցեք այն մասին, թե ինչու երբեմն միսիոներներն ու այլ ավետարանիչներ բացահայտորեն չեն խոսում այն մասին, թե ովքեր են իրենք և ինչով են զբաղվում: Ի՞նչ ծանրակշիռ պատճառներ ունենք մենք (եթե ունենք)՝ վարվելու նույն կերպ, հատկապես՝ առաքելության համատեքստում: Միսիոներները երբեմն չեն շտապում պատմել, թե ովքեր են իրենք, հատկապես ոչ քրիստոնեական երկրներում: Եթե Աստված մեզ դրդում է անմիջապես չբացահայտել, թե ովքեր ենք մենք, մենք ինչպե՞ս կարող ենք դա անել՝ չխաբելով և մոլորության մեջ չգցելով:

Դաս 7
Օգոստոսի 8-14

ՀԻՍՈՒՍԸ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք
Բ Տիմոթեոս 1.8,9, Եսայիա 42.1-9, Դանիել 9.24-27, Ղուկաս 2.8-14, Մատթեոս 10.5,6, Գործք առաքելոց 1.1-14:

Հիշելու համարը.
«Հիսուսը դարձյալ ասաց նրանց. Խաղաղությո՛ւն ձեզ, ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհաննես 20.21):

Համաձայն Սուրբ Գրքի՝ առաքելությունը Երրորդության գործունեության հիմնական տեսակն է: Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մասնակցում են մարդկության փրկությանը: Նրանց ծառայությունն սկսվեց մեղանչումից հետո և կշարունակվի մինչև երկրային պատմության ավարտը, որից հետո Հայրը, Որդին և Սուրբ Հոգին կվերականգնեն այդ փրկագնած աշխարհը՝ աստվածային կամքի հետ լիակատար միաբանության մեջ:

Ըստ Ավետարանների՝ Հիսուսը, ընդունելով մարդկային էություն, արմատական փոփոխություններ կրեց, որն անհրաժեշտ էր առաքելության հաջող իրականացման համար: Պատմությունն իմաստ է ստանում Հիսուս Քրիստոսում, Աստծո գործունեությունը երևում է ներդաշնակ, իսկ մարդկանց մեջ լրացվում է գոյության իմաստավորման խորը պահանջմունքը:

Նոր Կտակարանում մենք ծանոթանում ենք Հիսուս Քրիստոսի մարմնացման նպատակին: Մենք գտնում ենք Նրա առաքելության հիմնական սկզբունքները, մենք տեսնում ենք, թե Հիսուսն ինչպես էր վերաբերվում այլ երկրների և այլ դավանանքների պատկանող մարդկանց: Աստծո Խոսքը ցույց է տալիս, թե որքա՜ն ակտիվ է Աստծո ծառայությունը ընկած մարդկության փրկության համար:

Հիսուսը Հին Կտակարանում

«Ուրեմն ամոթ մի՛ համարիր մեր Տիրոջ վկայությունը, և ոչ էլ ինձ, որ նրա կապվածն եմ, այլ միասին չարչարվի՛ր Ավետարանի համար Աստծո զորության համեմատ» (Բ Տիմոթեոս 1.8,9):

Բացի այն բանից, որ այս տեքստերը խոսում են գործերով փրկության անօգուտ լինելու մասին, դրանք նաև բացահայտում են փրկության հավիտենական էությունը, դրանք ցույց են տալիս, որ մեր փրկության ծրագիրը կազմված է եղել մարդկության արարումից դեռ շատ առաջ:

Այնպես որ զարմանալի ոչինչ չկա, որ ողջ Հին Կտակարանի ընթացքում Հիսուս Քրիստոսն այս կամ այն կերպ հայտնում էր Իրեն: Հատկապես հզոր են այն մարգարեությունները, որոնց հստակ կերպով ցույց են տալիս, որ Հիսուսն իսկապես Մեսիան է:

Կարդացե՛ք հետևյալ հինկտակարանյան տեքստերը, որոնք կիրառելի են Հիսուսի նկատմամբ: Դրանք ի՞նչ են ասում Նրա և որպես Մեսիա՝ Նրա դերի մասին: Եսայիա 61.1, Դանիել 9.24-27, Եսայիա 7.14, 9.6, 42.1-9: _____

_____

_____

_____

_____

_____

Եսայիա մարգարեն Հիսուսի առաքելությունը նկարագրում է այսպիսի խոսքերով. «Ահա՛ իմ ծառան, որին ես հաստատել եմ, իմ ընտրածը, որին հավանել է իմ հոգին. ես իմ հոգին դրել եմ նրա վրա, նա իրավունքը պիտի հանի ազգերի համար... Ես՝ Տերս, կանչել եմ քեզ արդարությամբ, և բռնում եմ քո ձեռքը և քեզ պաշտպանում, և քեզ պիտի ժողովրդի ուխտ շինեմ և ազգերի լույս, կույրերի աչքերը բանալու, բանտարկյալներին բանտերից հանելու, և կապանքի տնից՝ խավարի տանը նստողներին» (Եսայիա 42.1,6,7):

Մտորեցե՛ք այս անհավատալի գաղափարի մասին. Հիսուսը՝ Արարիչը, Իր վրա վերցրեց մեր մարդկային էությունը, ապրեց և մահացավ որպես մարդ: Ի՞նչ մեծ հույս է մեզ պարգևում այս զոհն աշխարհում, որն ինքնին զուրկ է ամեն հույսից:

Երկուշաբթի **Օգոստոսի 10**

Դարերի փափագը

Հիսուս Քրիստոսը Տերն է և՛ եկեղեցու, և՛ համայն աշխարհի: Նրա գալուստը դարձավ հինկտակարանյան իղձերի իրականացումը փրկվածների ողջ հանրույթի, որոնց թվում կային ոչ միայն հրեա ժողովրդի ներկայացուցիչներ: Հիսուսի գալուստը, հատկապես Նրա տառապանքներն ու հարությունը, սկիզբ դրեցին մի նոր դարաշրջանի, որտեղ տեղ չկա հրեաների և հեթանոսների միջև խտրականության համար: Երուսաղեմը, գոնե որոշ ժամանակ, մնաց որպես ծառայության կենտրոն: Սակայն մեկնակետ դառնում է արդեն ոչ թե Հերովդեսի տաճարը Երուսաղեմում, այլ դարձի եկած հրեաները՝ կենդանի տաճարը: Այս քրիստոնյա հրեաները դարձան Իսրայելի հավատարիմ «մնացորդը»:

Քրիստոսի՝ որպես բոլոր ազգերի Փրկչի տիեզերական առաքելության հռչակումը ողջ աշխարհին՝ կրկնվեց Նրա ծնվելու ժամանակ, մանուկ հասակում և Նրա մկրտության ժամանակ:

Հետևյալ տեքստերն ի՞նչ են ասում աշխարհում Հիսուսի տիեզերական առաքելության մասին:

Ղուկաս 2.8-14 _____

_____

Ղուկաս 2.25-33 _____

_____

Ղուկաս 3.3-6 _____

_____

Հովհաննես 1.29 _____

_____

Կասկած չկա, որ Հիսուսը եկավ՝ որպես ողջ մարդկության Փրկիչ: *Այս ճշմարտությունը ի՞նչ է նշանակում մեզ համար միսիոներական ծառայության համատեքստում:*

«Անհրաժեշտ է մեր եկեղեցիներում վերածնել միսիոներական ոգին: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է մտածի այն մասին, թե ինչպես նպաստի Աստծո գործի առաջընթացին տեղական առաքելություններում և օտար երկրներում: Առայժմ անհրաժեշտ աշխատանքի հազիվ մեկ հազարերորդական մասն է կատարվում միսիոներական դաշտերում: Աստված Իր աշխատողներին կանչում է նոր տարածքներ ձեռք բերելու Իր համար: Կան արգասավոր դաշտեր,

որոնք մեծածավալ աշխատանք են պահանջում և սպասում են հավատարիմ աշխատողների» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 6, 29):

Երեքշաբթի **Օգոստոսի 11**

Միսիոներական ծառայությունը հրեաների համար

«Ես չեմ ուղարկվել, եթե ոչ Իսրայելի տան կորած ոչխարների մոտ» (Մատթեոս 15.24):

Քրիստոսի առաջին հրապարակային ելույթի և խաչելության միջև Հիսուսի ծառայությունը կենտրոնացված էր բացառապես հրեաների վրա, հատկապես՝ Գալիլեայում ապրող: Տերն առաջին հերթին դիմեց Իսրայելին: Մինչև խաչը շատ քիչ է գրված հեթանոսներին Բարի լուրը քարոզելու մասին: Ըստ երևույթին, Հիսուսը ցանկանում էր հրեա ժողովրդի մեջ արթնացնել ընկած մարդկության սեփական տեղի, նպատակի և դերի գիտակցումը Աստծո ընդհանուր ծառայության մեջ: Իսրայելը պետք է դառնար Աստծո վկան աշխարհի համար:

Կարդացե՛ք Մատթեոս 10.5,6-ը: Ինչո՞ւ է Հիսուսն աշակերտներին հրամայում հենց այդպես վարվել: Մենք ինչպե՞ս ենք հասկանում այդ խոսքերը՝ այն բանի համատեքստում, հանուն ինչի Քրիստոսը եկավ աշխարհ և միսիոներական ծառայության համատեքստում ամբողջությամբ: Այս տեքստը համեմատե՛ք Մատթեոս 28.19-ի հետ:

_____

_____

_____

_____

Երբ մենք ուսումնասիրում ենք Հիսուսի կյանքն ու ծառայությունը, մենք պետք է, մի կողմից, տեսնենք Նրա տեսլականը, բարձրագույն նպատակները, սկզբունքներն ու ծրագրերը, մյուս կողմից՝ թե ինչպես էր Նա հասնում Իր նպատակներին: Իր առօրյա կյանքում և ծառայության մեջ Նա Իրեն նույնականացնում էր հրեական մշակույթի հետ, ինչպես և Մեսիայի մասին ասված էր Հին Կտակարանում: Բայց Նրա մարմնավորման ազդեցությունը համաշխարհային նշանակություն ունի, քանի որ Իր մահվան և հարության միջոցով Նա Իր վրա առավ աշխարհի մեղքերը (Հովհաննես 1.29):

Մենք այստեղ ի հայտ ենք բերում միսիոներական ծառայության կարևոր աստվածաշնչյան մի սկզբունք: Առաջին քայլն ուղղված է կենտրոնի ստեղծմանը՝ ուժեղ և կայուն աշխարհագրական բազայի հիման վրա՝ Իսրայելը և հրեա ժողովուրդը: Երբ դա արված է, առաքելությունը պետք է ընդլայնվի կենտրոնից դեպի հեռավոր շրջանները (ծայրամասերը):

Մտորե՛ք ձեր տեղական եկեղեցու մասին: Որքանո՞վ է նա լավ իրագործում վերը շարադրված գաղափարները, այսինքն՝ նա հանդիսանո՞ւմ է այն ուժեղ և կայուն հիմքը, որը վերջին հաշվով կարող է Ավետարանի լուրով հասնել այլ մարդկանց: Ինչպե՞ս կարելի է խուսափել այն վտանգներից, որոնց բախվում են շատ եկեղեցիներ, մասնավորապես՝ առաջնորդվել միայն սեփական շահերով, անհանգստանալ սեփական կարիքների համար՝ վնաս հասցնելով վկայությանն ու միսիոներական ծառայությանը:

Չորեքշաբթի **Օգոստոսի 12**

Միսիոներական ծառայությունը հեթանոսներին

Թեև Հիսուսն Իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում հրեաների շրջանում՝ նրանց ծառայելով իրենց մշակութային համատեքստում, Նա Իր ուսմունքի և ծառայության մեջ հստակ կերպով հասկացրեց, որ Իր առաքելությունն ընդգրկում է ողջ աշխարհը: Ավետարանը պետք է քարոզվի բոլոր ժողովուրդներին՝ առջևում ունենալով Իսրայելը: Հեթանոսներին փրկությունը տանելը Աստծո ծրագրի մի մասն է: Դա մարմնավորվեց Հիսուսի ուսմունքի մեջ:

Հետևյալ տեքստերն ինչպե՞ս են ցույց տալիս, որ լուրն ուղղված է ողջ աշխարհին:

Մատթեոս 5.13,14 _____

_____

Մարկոս 14.9 _____

_____

Ղուկաս 14.10-24 _____

_____

Մատթեոս 13.36-16 _____

_____

Չնայած այն բանին, որ Հիսուսը ծառայությունն իրականացնում էր գլխավորապես հրեաների մեջ, Ավետարաններն իրավունք չեն վերապահում կասկածել այն բանին, որ Նրա առաքելությունն ի սկզբանե ուղղված էր ողջ աշխարհի փրկությանը: Քրիստոսի մկրտության ժամանակ Հովհաննես Մկրտիչը պարզորոշ հռչակեց դա. «Հետևյալ օրը Հովհաննեսը տեսնում է Հիսուսին իր մոտ գալիս, և ասում է. Ահա՛ Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29): *Աշխարհ* բառը (հունարեն՝ *կոսմոս*) Ավետարաններում հանդիպում է շուրջ հարյուր անգամ: Դրանց մոտ կեսը խոսում են Հիսուսի մասին՝ որպես Փրկիչ՝ համաշխարհային մասշտաբով:

Ղուկասի Ավետարանի 14.16-24-ում Հիսուսի պատմած առակում հրավիրյալները չգալու իրենց ցանկությունն արդարացնում էին տարատեսակ պատճառներով: Կրկի՛ն կարդացեք այդ պատրվակները: Մի կողմից, ոչ ոք անհիմն կերպով չի բացակայում, այդպես չէ՞: Ի՞նչ կարևոր դաս պետք է քաղենք մեզ համար այս պատմությունից:

Հինգշաբթի **Օգոստոսի 13**

Մեծ հանձնարարությունը

Հարությունից հետո և մինչև համբարձումը Հիսուսը երկրի վրա քառասուն օր անցկացրեց՝ աշակերտներին և Իր եկեղեցին նախապատրաստելով՝ ողջ աշխարհին ավետարանելու համար: Հիսուսի համբարձման մասին ամենահայտնի և ամենաշատ մեջբերվող հատվածը գրի է առնված Մատթեոսի Ավետարանում: Սակայն այդ շրջանում եղել էին նաև այլ հանդիպումներ, որոնց ընթացքում հարություն առած Հիսուսը կարող էր առավել մանրամասն տեղեկատվություն տալ ավետարանի ծառայության մասին: Երկու անգամ Նա Իր աշակերտներին հայտնվեց Երուսաղեմում, երկու անգամ՝ Գալիլեայում (մի հանդիպումը տեղի ունեցավ Տիբերյան ծովի մոտ, մյուսը՝ բլրի գագաթին), ինչպես նաև՝ եղավ Գործք առաքելոց 1.1-14-ում նկարագրված հանդիպումը:

Ավետարաններում վեց կառուցվածքային հանդիպում է նկարագրված, որոնցում Մեծ հանձնարարությունը դիտարկվում է տարբեր տեսակետներից. բլրի վրա՝ Գալիլեայում (Մատթեոս 28.18-20), ընթրիքի ժամանակ (Մարկոս 16.15-20), Էմմաուսի ճանապարհին (Ղուկաս 24.13-31), վերնատանը (Հովհաննես 20.19-31), լճի ափին (Հովհան-

նես 21.4-25) և համբարձման ժամանակ (Գործք առաքելոց 1.1-11): Ի՞նչ հիմնարար պարագաներով են միավորված այս բոլոր դեպքերը: _____

_____

_____

Գտնվելով Սուրբ Հոգու ազդեցության ներքո և հնազանդվելով Հիսուսի խոսքերին՝ առաքյալներն Ավետարանն արագորեն տարածեցին այն ժամանակվա ողջ աշխարհում: Պողոսը քարոզում էր Միջերկրական ծովի հյուսիսային ափին, Փիլիպոսը աշխատում էր Սամարիայում: Համաձայն վաղ քրիստոնեական ավանդության՝ Մատթեոսը ուղևորվեց Եթովպիա, իսկ Թովմասը՝ Հնդկաստան:

Իրենցից ներկայացնելով մարդկանց ոչ մեծ խումբ, ուժեղ դիմադրության արժանանալով՝ Աստծո ողորմության այդ հավատարիմ հետևորդներն ի վիճակի եղան Ավետարանի լուրը տարածելու ողջ աշխարհում: Ինչպիսի թերություններ ու թույլ կողմեր, վախեր, կասկածներ ու ներքին պայքար էլ նրանք ունենային, նրանք ընդունեցին մարտահրավերը և աշխատում էին հանուն աշխարհի փրկության: Այսինքն՝ նրանք ձգտում էին ուրիշների հետ կիսվել այն բանով, ինչ իմացել էին Հիսուսի մասին և ստացել էին Նրանից: Մի՞թե սրա մեջ չէ քրիստոնեության էությունը:

Դուք ի՞նչ եք ստացել Քրիստոսում: Այս հարցին ձեր պատասխանն ինչպե՞ս է ազդում ուրիշների վկայության ու միսիոներական ծառայության հանդեպ ձեր վերաբերմունքի վրա:

Ուրբաթ Օգոստոսի 14

Հետագա ուսումնասիրության համար.

Համաձայն Մատթեոսի Ավետարանի՝ Հիսուսը կանխասել է. «Եվ արքայության այս Ավետարանը բոլոր տիեզերքում կքարոզվի՝ ամեն հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը» (Մատթեոս 24.14): Միևնույն ժամանակ, Սուրբ Գիրքը հստակ կերպով շարադրում է նաև մեկ ուրիշ տեսակետ. «Իսկ այն օրվա և ժամի համար ոչ ոք չգիտի, ոչ էլ երկնքի հրեշտակները, բայց միայն իմ Հայրը» (Մատթեոս 24.36): Նաև ուշադրությո՛ւն դարձրեք Հիսուսի հետևյալ խոսքերին. «Ձեր բանը չէ գիտենալ ժամերը և ժամանակները, որ Հայրն Իր իշխանությունում դրեց» (Գործք առաքելոց 1.7):

Այսպիսով, այն ժամանակ, երբ Ավետարանի բարի լուրը քարոզվում է՝ ինչպես երբեք նախկինում, և մենք հավատում ենք Քրիստոսի շատ մոտալուտ գալստյանը, մենք պետք է զգույշ լինենք այդ թեմայով ամսաթվեր կանխագուշակելիս. «Հարկ չկա, որ մենք չարաշահությամբ զբաղվենք ժամանակների և ամսաթվերի վերաբերյալ, որ Աստված չի հայտնել մեզ: Հիսուսն Իր աշակերտներին հրամայեց «տեսնել», ոչ թե ժամանակը որոշել: Նրա հետևորդները պետք է լինեն մարդիկ, ովքեր հնազանդվում են իրենց Նավապետի հրամաններին. նրանք պետք է նայեն, սպասեն, աղոթեն և աշխատեն՝ մոտեցնելով Տիրոջ գալստյան ժամանակը» (Է. Ուայթ, Ռևյու ընդ հերալդ, 1892 թ. մարտի 22):

Հարցեր քննարկման համար

1. Չնայած Քրիստոսի գալստյան ժամկետ չսահմանելու հրամանին՝ ամեն տարի նորությունների մեջ մենք լսում ենք, թե ինչպես քրիստոնյաների այս կամ այն խումբը Նրա գալստյան տարբեր ժամկետներ է գուշակում: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են մարդիկ զբաղվում դրանով (բացի դրանով փող վաստակելու ցանկությունից): (Ի վերջո, եթե Հիսուսի գալուստն ակնկալվում է հաջորդ տարվա հունիսի 19-ին (կամ մեկ այլ օր՝ ձեր հայեցողությամբ), ապա հիմա ձեզ ի՞նչ օգուտ կա ձեր փողերից): Կեղծ ամսաթվերի սահմանումն ինչո՞ւ է վնասում քրիստոնեական վկայությանը:
2. Խորհեցե՛ք այն խոչընդոտների մասին, որ վերապրել են վաղ քրիստոնյաները՝ իրենց միսիոներական ծառայության առաջին տարիներին, հատկապես՝ ուշադրության առնելով նրանց սակավաթիվ լինելը: Ի՞նչ խոչընդոտների ենք մենք բախվում այսօր մեր միսիոներական ծառայության մեջ: Մենք ի՞նչ կարող ենք քաղել վաղ եկեղեցու փորձառությունից, որպեսզի հիշենք մեր կոչման մասին և կատարենք մեր առաքելությունը:

Դաս 8
Օգոստոսի 15-21

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Հովհաննես 4.4-30, Մատթեոս 8.5-13, Մարկոս 5.1-20, Մատթեոս 15.21-28, Ղուկաս 17.11-19, Հովհաննես 12.20-32:

Հիշելու համարը.
«Ահա՛ իմ ծառան, որին ես ընտրեցի, և իմ սիրելին, որին իմ անձը հավանել է. իմ Հոգին նրա վրա կդնեմ, և նա հեթանոսներին իրավունք կպատմի» (Մատթեոս 12.18):

Հետաքրքիր է, որ Հիսուսն Իր կյանքի վաղ տարիների մեծ մասն անցկացրեց Գալիլեայում, որը հայտնի էր որպես «հեթանոսների Գալիլեա» (Մատթեոս 4.15)՝ անկասկած, գավառում հրեական ազդեցության պատճառով: Նախքան հասարակական ծառայության սկիզբը՝ Հիսուսի կյանքի մեծ մասն անցավ այդ տարածաշրջանում՝ Նազարեթ քաղաքում: Նազարեթը գտնվում էր ոչ հեռու հիմնական առևտրային ճանապարհներից և ուղիներից, որոնցով տեղաշարժվում էր հռոմեական բանակը: Դրա շնորհիվ Հիսուսը կարող էր հանդիպել տարբեր ազգությունների պատկանող մարդկանց (չխոսելով արդեն Եգիպտոսում Նրա անցկացրած ժամանակի մասին):

Նազարեթում մերժվելուց հետո (Ղուկաս 4.16-31) Հիսուսն Իր ծառայությունը կենտրոնացրեց Գալիլեայի բազմազգ քաղաքում՝ Կափառնայումում: Հեթանոսների հետ շփումն ու նրանց աշխարհը նշանակալի ազդեցություն էին գործում Նրա ծառայության և ուսմունքի վրա: Ու թեև Նրա ծառայության կենտրոնում Իսրայելն էր, Նրան անհանգստացնում էր ողջ աշխարհի փրկությունը: Ավելի քան երեք տարվա ծառայության ընթացքում Հիսուսն առնվազն վեց անգամ ուղղակիորեն շփվեց այլ ազգությունների ներկայացուցիչների հետ: Այս շաբաթ մենք քննարկում ենք այդ շփումների ավետարանյան պատումները:

Սամարուհին

Հիսուսի ժամանակներում հին Իսրայելը բաժանված էր երեք նահանգի՝ Գալիլեա, Սամարիա և Հուդա: Սամարիան գտնվում էր Գալիլեայի և Հուդայի միջև: Սամարացիները երկրպագում էին Իսրայելի Աստծուն, ինչպես նաև հեթանոսական աստվածներին, որոնք փոխառնված էին այլ մշակույթներից: Որպես առաջին միսիոներական դաշտ՝ Սամարիան կատարյալ վայր էր առաքյալների ծառայության համար, քանի որ աշխարհագրական առումով գտնվում էր Իսրայելի կողքին:

Կարդացե՛ք Հովհաննես 4.4-30-ը: Այստեղ ի՞նչ է ասվում այն մասին, թե ինչպես էր Հիսուսը վկայում այլ ազգերի ներկայացուցիչներին: Ի՞նչ ավանդույթ խախտեց Հիսուսը՝ այդ կնոջ սրտին դիպչելու համար:

Սամարուհին զգաստ էր, նա լավ գիտեր իր ժողովրդի պատմությունն ու ճիշտ հարցեր էր տալիս: Սակայն Հիսուսը նրա հարցերից ու հայտարարություններից ընտրեց այնպիսիք, որոնք օգտակար էին կնոջ հոգևոր աճի համար: Միակ դեպքը, երբ Հիսուսը փոխեց զրույցի ընթացքը, տեղի ունեցավ այն ժամանակ, երբ խնդրեց նրան բերել իր ամուսնուն՝ իմանալով, որ կինն ամուսնացած չէ: Իհարկե, այդ խնդրանքը Նրան թույլ տվեց դիմելու նրան, որքան էլ կինն իրեն անհարմար զգար: Սակայն այդպես վարվելով՝ Նա կարողացավ կնոջն արդյունավետ կերպով վկայել ճշմարտությունը:

Բացի դրանից, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել իրադարձությունների հետագա զարգացմանը, որ գրի է առնված Հովհաննեսի Ավետարանի 4.27-ում: Աշակերտները զարմացան օտարերկրուհու հետ Հիսուսի զրույցից: Քրիստոսը մի քանի հրեական սովորույթ խախտեց. նախ, Նա սամարացի կնոջը դիմեց Իրեն ջուր տալու խնդրանքով, երկրորդ՝ Նա կնոջ հետ խոսում էր առանձին: Իսրայելում տղամարդը չէր կարող կնոջ հետ մենակ մնալ, եթե նա իր ընտանիքի անդամը չէր: Հիսուսը հետևում էր հրեական սովորույթներին, երբ Իսրայելում էր: Սակայն Սամարիայում Նա գտնվում էր հրեական տարածքից դուրս և այդ պատճառով կապված չէր հրեական սովորույթներով, թեև, ինչպես մենք արդեն տեսել ենք այլ տեղերում, Հիսուսը հստակ սահմանագիծ էր անցկացնում մարդկային ավանդույթների և Աստծո պատվիրանների միջև:

Որքանո՞վ եք դուք պատրաստ հեռուն գնալ ձեր «հարմարավետության գոտուց»՝ ուրիշներին ծառայելու համար: Որքա՞ն հեռուն է *անհրաժեշտ* գնալ:

Երկուշաբթի **Օգոստոսի 17**

Հռոմեացի հարյուրապետը

Կարդացե՛ք Մատթեոսի Ավետարանի 8.5-13-ը (տե՛ս նաև Ղուկաս 7.1-10-ը): Այս պատմությունն ինչպե՞ս է մեզ սովորեցնում, որ անգամ ամենախոշոր տարբերությունները կարող են խախտվել՝ հանուն Ավետարանի: _____

_____

_____

Կափառնայումում հռոմեացի հարյուրապետը (հարյուր տղամարդկանց հրամանատար) որոնում էր Հիսուսին: Հրեաները դժգոհում էին այն բանից, որ հռոմեական բանակը գրավել էր իրենց պետության տարածքը, շատ հռոմեացիներ էլ ատում էին հրեաներին: Բայց, չնայելով մշակութային և քաղաքական տարբերություններին, կարելի է տեսնել այս հռոմեացու սերտ կապը հրեաների հետ:

Ղուկասի Ավետարանում մենք կարդում ենք, որ հարյուրապետը գնաց «հրեաների ծերերի» մոտ (Ղուկաս 7.3), որպեսզի նրանք նպաստեն Հիսուսի հետ իր հանդիպմանը: Եվ, որ զարմանալի է, նրանք հենց այդպես էլ վարվեցին՝ Հիսուսին խնդրելով գալ և բժշկել այդ մարդու ծառային: Ովքե՞ր էին այդ ծառաները: Սուրբ Գիրքը մեզ չի պատմում այդ մասին, բայց, թվում է, Հիսուսի հանդեպ նրանց վերաբերմունքը տարբերվում էր այլ ղեկավարների վերաբերմունքից:

Ընդսմին հարյուրապետը, ակներևաբար, հավատի մարդ էր. Հիսուսին ուղղված նրա խոսքերը՝ «միայն մի խոսք ասա, և ծառաս կբժշկվի» (Մատթեոս 8.8), Նրա հանդեպ այդ մարդու հավատի անհավատալի վկայությունն է: «Հարյուրապետը չսպասեց, որ տեսնի, թե իրենք՝ հրեաներն, ընդունելո՞ւ են Նրան, Ով Իրեն նրանց Մեսիան էր անվանում: Երբ ճշմարտության Լույսը, «որ ամեն մարդու լուսավորում է, ով գալիս է աշխարհը» (Հովհաննես1.9), լուսավորեց նրան, հարյուրապետը, հեռվում գտնվելով հանդերձ, տարբերեց Աստծո Որդու փառքը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 317): Հարյուրապետը հասկանում և հարգում էր հրեաների կրոնական զգացմունքները: Նա գիտեր, որ, համաձայն նրանց օրենքի, հրեան չի կարող մտնել

հեթանոսի տուն, այդ պատճառով խնդրեց, որ Հիսուսը բժշկությունը գործի տարածության վրա: Ծառան բժշկվեց: Հեթանոս հարյուրապետի հավատը պարգևատրվեց: Հիսուսը ցույց տվեց, որ հարյուրապետն այն մեծ օրվա նախակերպարն է, երբ աշխարհի բոլոր ծայրերից, Գառի հարսանիքի խնջույքի ժամանակ, մարդիկ կմիանան Իսրայելի նահապետներին:

Բժշկության այս պատմությունից մենք կարող ենք տեսնել, որ հսկայական մշակութային տարբերություններն ի զորու չեն եղել այդ հռոմեացուն հետ պահելու հրեաների հետ շփումից: Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատմությունից և ինչպե՞ս կարող ենք սովորել հաղթահարել մշակութային տարբերությունները (լավ իմաստով), որպեսզի լուրով դիմենք ուրիշներին:

Երեքշաբթի **Օգոստոսի 18**

Դևերին վռնդելը

Կարդացե՛ք Մարկոս 5.1-20 և Մատթեոս 15.21-28-ը: Այս պատմությունն օգնում է մեզ՝ հասկանալու Հիսուսի վերաբերմունքը այլ ազգերի ներկայացուցիչների հանդեպ: Մենք ինչպե՞ս ենք հասկանում քանանացի կնոջն ասված Հիսուսի խոսքերը: Բացի դրանից, իրենց համար ի՞նչ դասեր պիտի քաղեին աշակերտները՝ դիտելով, թե ինչպես է Հիսուսը ծառայում նրանց, ովքեր չեն պատկանում ուխտի ժողովրդին: _____

_____

_____

_____

Գադարացիների մարզը Գալիլեական ծովի արևելյան ափին էր: Այդ տարածքը ձևականորեն գտնվում էր Հունաստանի տիրապետության ներքո, սակայն հռոմեական Հուդա նահանգի մի մասն էր: Այն մարդն, ում մասին պատմում է Ավետարանը, ակներևաբար, դիվահար էր, ինչը դրսևորվում էր նրա վարքում: Նա իսկապես Աստծո օգնության կարիքն ուներ, որը և ստացավ:

Այն, որ այդ փրկությունը տեղի ունեցավ մի տարածքում, որտեղ հեթանոսներն էին բնակվում, հաստատվում է խոզերի առկայությամբ: Հետաքրքիր է նշել մարդկանց արձագանքը տնտեսական կորուստներին. նրանք Հիսուսին խնդրեցին հեռանալ: Հիսուսն իր հերթին

բժշկվածին հանձնարարեց մնալ քաղաքում և ողջ ժողովրդին վկայել Հիսուսի մասին: Անկասկած, նրա վերափոխված կյանքը առավել հզոր վկայություն կլիներ, քան նրա խոսքերը:

Մեկ այլ դեպքում մի քանանացի կին «չարաչար դիվահարվում է» (Մատթեոս 15.22): Նրա մայր քանանուհին այն տարածաշրջանի բազմազգ բնակչության վառ նրկայացուցիչն էր: Նրա քանանացի նախնիները ստիպված էին եղել լքել իրենց հողերը, երբ Իսրայելը նվաճում էր դրանք Նավեյան Հեսուի առաջնորդությամբ: Այստեղ մենք կրկին տեսնում ենք, թե ինչպես է Հիսուսը վկայում նրանց, ովքեր չէին պատկանում Իսրայելի ժողովրդին:

Կնոջ հետ խոսակցության մեջ Հիսուսը մի քանի կտրուկ ձևակերպում օգտագործեց՝ նրա ժողովրդին նմանեցնելով շների, բայց նրա հավատը փորձված էր, և նա իր պատրաստակամությունն արտահայտեց ստանալու անհրաժեշտ օգնությունը:

«Փրկիչը բավարարված է նրա հավատի փորձությամբ: Կնոջ հանդեպ Իր վերաբերմունքով Նա ցույց տվեց, որ քանանացի կինը, ով օտար էր համարվում Իսրայելի համար, Աստծո զավակ է: Եվ, Աստծո զավակ դառնալով, նա Հոր պարգևներից օգտվելու արտոնություն ստացավ: Այժմ Քրիստոսը բավարարում է նրա խնդրանքը և Իր դասը հասցնում է ավարտին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 401):

Իսկ դասի էությունն այն էր, որ փրկությունը տարածվում է բոլոր ժողովուրդների և ոչ միայն հրեաների վրա, ինչպես կարծում էին աշակերտները:

Չորեքշաբթի **Օգոստոսի 19**

Տասը բորոտները

Կարդացե՛ք Ղուկաս 17.11-19-ը: Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատումից՝ անկախ մեր ազգությունից կամ ծագումից: _____

_____

Ամենից առաջ, ուշադրությո՛ւն դարձրեք այն փաստին, որ այս դժբախտները ճանաչում էին Հիսուսին: Նրանք Նրան դիմեցին անունով և տիտղոսով՝ օգնություն աղաչելով Նրանից: Հետաքրքիր է նշել, որ նրանք անմիջապես տեղում չմաքրվեցին: Նրանց ասվեց, որ գնան և ապաշխարեն քահանայապետի մոտ, ինչպես նշված է Ղևտացոց 14.2-ում: Այն փաստը, որ նրանք պարզապես հետ դարձան

ու գնացին, մատնանշում է հավատը՝ իրենց ապաքինելու Նրա իշխանության հանդեպ:

Սակայն միայն սամարացին վերադարձավ, որպեսզի արտահայտի իր երախտագիտությունն այն բանի համար, ինչ արեց Հիսուսը: Մնացած ինը չմոռացան գնալ քահանայապետի մոտ, սակայն հարկ չհամարեցին վերադառնալ և շնորհակալություն հայտնել իրենց Բժշկին: Համաձայն պատումի՝ սամարացին վերադարձավ՝ նախքան քահանաներին հասնելը: Թեև տեքստում ասված չէ, որ մյուս ինը հրեա էին, տվյալ թեմայի շարադրանքը այդ փաստը միանգամայն հավանական է դարձնում: Բացի դրանից, Ղուկասը հատուկ նշում է, որ այն բորոտը սամարացի էր, Հիսուսն ինքը նրան անվանեց «այս այլազգին» (Ղուկաս 17.18): Ելնելով սրանից՝ կարելի է եզրակացնել, որ մյուս ինը բորոտներն իսկապես հրեաներ էին: Թեև հրեաները սովորաբար չէին շփվում սամարացիների հետ, ընդհանուր հիվանդությունը վերացրել էր այդ խոչընդոտները: Ընդհանուր ցավն ու ողբերգությունը, որ Ալբերտ Ծվեյցերն անվանել է «բաժանված տառապանքներ», կոտրեցին ազգային պատնեշը: Մաքրվելու, բժշկելու և փրկվելու նրանց ընդհանուր պահանջմունքը նրանց միասին բերեց Հիսուսի մոտ:

Սակայն սամարացիներն ու այլ ազգերի ներկայացուցիչները Հիսուսի ծառայության մոտակա նպատակը չէին: «Ես չեմ ուղարկվել, եթե ոչ Իսրայելի տան կորած ոչխարների մոտ» (Մատթեոս 15.24): Ամենից առաջ Նա ծրագրում էր գործունեության ամուր հիմք դնել հրեաների մեջ: Սակայն Իր ծառայության ողջ ընթացքում Նա Իր հետևորդներին ներկայացնում էր ապացույցներն այն բանի, որ Ավետարանը պետք է ընգրկի ողջ աշխարհը: Թեև այս ճշմարտությունը լիովին հասկանալի դարձավ միայն Նրա հարությունից հետո, սակայն Հիսուսը ջանաց աշակերտների մտքերը բացել այն գաղափարի ընդունման համար, որ համաշխարհային միսիոներական գործունեությունը նրանց գլխավոր խնդիրն է:

Թեև բորոտները հավատ դրսևորեցին, միայն մեկը վերադարձավ և Տիրոջը շնորհակալություն հայտնեց ստացած բժշկության համար: Ի՞նչ է ասում սա մեզ՝ Աստծուն փառաբանելու և Նրան երախտապարտ լինելու կարևորության մասին՝ մեր հավատի ամրապնդման համար: Մենք ինչի՞ համար պետք է երախտապարտ լինենք: Խորհեցե՛ք, թե ձեր կյանքը որքանով ավելի երջանիկ կդառնա, եթե դուք

ձեր մեջ զարգացնեք շնորհակալության հոգին: Ի՞նչը կարող է ավելի լավ լինել Աստծուն անկեղծ շնորհակալություն հայտնելուց՝ Նրա բոլոր բարեգթությունների համար:

Հինգշաբթի **Օգոստոսի 20**

Հույները (Հելենները) և Հիսուսը

«Եվ կային ոմանք Հելենացիք՝ նրանցից, որ եկել էին այնտեղ, որ երկրպագեն այն տոնի ժամանակ: Նրանք եկան Փիլիպոսի մոտ, որ Գալիլեայի Բեթսայիդայից էր, նրան խնդրում էին և ասում. Տե՛ր, կամենում ենք Հիսուսին տեսնել: Փիլիպոսը գալիս է Անդրեասին ասում. Անդրեասը և Փիլիպոսը ասում են Հիսուսին: Հիսուսն էլ պատասխանեց նրանց՝ և ասաց. ժամը հասավ, որ մարդի Որդին փառավորվի» (Հովհաննես 12.20-23): Այս պատմությունն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու փրկության և հույսի մասին ողջ աշխարհի մարդկանց աղաղակը, ինչպես նաև կենսական հարցերին՝ Հիսուսի պատասխանն ստանալու նրանց ցանկությունը: _____

_____

_____

_____

_____

Ամենայն հավանականությամբ, այդ հույները դարձի էին եկել հուդաիզմից, քանի որ նրանց թույլ էր տրվել մտնել տաճարի բակը, առնվազն՝ հեթանոսների բակը: Աստվածաշնչյան մեկնաբանները նշում են, որ այդ հույները մոտեցան Փիլիպոսին, ով, հրեա լինելով, հունական անուն ուներ. հնարավոր է, դա նրանց հրապուրեց: Իսկապես, փորձը ցույց է տալիս, որ թեև օտարերկրացի միսիոներները, ովքեր հարգում են մշակույթը և հասկանում են մարդկանց առանձնահատկությունները, կարող են հոգիներ ձեռք բերել Քրիստոսի համար, այնուամենայնիվ, առավել արդյունավետ աշխատանքն իրականացվում է տեղաբնակների ներկայացուցիչների կողմից:

Հույները եկել էին Հիսուսի խաչելությունից ընդամենը մի քանի օր առաջ: Նրանք, անկասկած, ցնցվեցին տառապանքների, մահվան և հաղթանակի մասին Նրա խոսքերից: (Երկնքից ձայնը նույնպես

նրանց մտորելու նյութ տվեց): Հիսուսն ուրախ էր՝ Իրեն «տեսնելու» նրանց ցանկության համար: Նրանց մոտեցումը ազդանշան էր համաշխարհային առաքելության սկզբի մասին: Դա տեսան անգամ փարիսեցիները, ովքեր բացականչում էին. «Ահա՛ աշխարհը նրա հետևից գնաց» (Հովհաննես 12.19):

Այստեղ մենք տեսնում ենք հուդաիզմից հեռու տղամարդկանց, ովքեր ցանկանում են տեսնել Հիսուսին: Այս փաստն այն բանի նշանն է, որ աշխարհը պատրաստ էր Նրա քավչարար մահվանը: Այս հույները, որ ներկայացնում են աշխարհի ազգերը, ցեղերը և լեզուները, բերվեցին Նրա մոտ: Ծուտով Փրկչի խաչը Նրա մոտ կբերի բոլոր երկրների բնակիչներին և բոլոր հետագա ժամանակներում (համար 32): Աշակերտներին կդիմավորի ողջ աշխարհը՝ պատրաստ ընդունելու Ավետարանը:

Կարդացե՛ք Հովհաննես 12.20-32-ը: Ի՞նչ է նշանակում կորցնել կյանքը՝ այն կրկին ձեռք բերելու համար: Ինչո՞ւ Հիսուսն ասաց այս խոսքերը հատկապես այս համատեքստում: Դուք վերապրե՞լ եք այն փորձառությունը, որի մասի խոսում է Քրիստոսը:

Ուրբաթ **Օգոստոսի 21**

Հետագա ուսումնասիրության համար

«Եվ ասում եմ ձեզ, որ շատերը արևելքից և արևմուտքից կգան, և կնստեն Աբրահամի և Իսահակի և Հակոբի հետ երկնքի արքայությունում, իսկ արքայության որդիները դուրս կգցվեն դրսի խավարը. այնտեղ կլինի լացը և ատամների կրճտելը» (Մատթեոս 8.11,12): Թեև այս խոսքերը ասվել են որոշակի համատեքստում, որոշակի ազգի վերաբերյալ, մենք պետք է մեզ համար նշենք այն սկզբունքը, որ դրված է դրանց մեջ: Նրանք, ում տրված են առավել շատ առավելություններ՝ հոգևոր և աստվածաբանական ճշմարտությունների տեսակետից, պետք է զգույշ լինեն: Հեշտ է ընկնել ինքնագոհության գիրկը՝ ունենալով այսպիսի ճշմարտություններ, ճշմարտություններ, որոնք ուրիշ ոչ ոք չի քարոզում, և որոնք ուրիշ ոչ ոք չի սովորեցնում: Առաջին հերթին, մենք պետք է համոզված լինենք, որ այդ ճշմարտություններն իսկապես արմատավորվել են մեր սրտում: Երկրորդը, մենք պետք է պատրաստ լինենք՝ այդ ճշմարտությունները սովորեցնելու այն մարդկանց, ովքեր չգիտեն դրանք:

Հարցեր քննարկման համար

1. Խաչը մեզ ցույց տվեց ողջ մարդկության բացարձակ համընդհանուր բնույթը: Աստծո առջև մենք ամենքս մեղավորներ ենք, և մենք ամենքս փրկարար շնորհի կարիքն ունենք: Սակայն շատ էթնիկ խմբեր իրենց վեր են դասում մյուսներից: Նման մոտեցում մենք հաճախ ենք հանդիպում պատմության մեջ: Ի՞նչ ուշագրավ բան կա էթնիկ, սոցիալական, ֆինանսական կամ մշակութային խմբի մեջ, որին պատկանում եք դուք: Այն բանի գիտակցումը, որ դուք կարող եք նավահանգիստ (հյուրընկալ) լինել (և մի՛ խաբեք ինքներդ ձեզ. դուք իսկապես նավահանգիստ կամ հյուրընկալ եք ուրիշների համար), ո՞ր դեպքերում կարող է գերազանցության զգացում առաջ բերել ձեզանից տարբերվող մարդկանց նկատմամբ: Ի՞նչ սխալ բան կա տվյալ մոտեցման մեջ, և ի՞նչ կարող ենք սովորել մենք խաչի ստորոտին՝ այդ կարծիքը փոխելու համար:
2. Ջրհորի մոտի կինը վերադարձավ տուն և սկսեց իր ժողովրդին վկայել Հիսուսի մասին: Ի՞նչ է ասում սա մեզ միսիոներական ծառայության և Քրիստոսի համար հոգիներ ձեռք բերելու հարցում տեղի բնակչության ներկայացուցիչների պատկերացումներն օգտագործելու կարևորության մասին:
3. Հույները ցանկանում էին տեսնել Հիսուսին: Կասկած չկա, որ նրանք լսել էին Նրա և այն հրաշքների մասին, որ Նա գործում էր: Հիսուսն այժմ երկնքում է, իսկ Եկեղեցին՝ Նրա ժողովուրդը, Նրան է ներկայացնում այստեղ՝ երկրի վրա: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե ինչպիսին պետք է լինի մեր կյանքը և մեր վկայությունը:

Դաս 9
Օգոստոսի 22-28

ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Գործք առաքելոց 2.5-21, 10.1-8,23-48, Հռոմեացիս 2.14-16, Գործք առաքելոց 10.9-22, 11.1-10, 15.1-35:

Հիշելու համարը.
«Պետրոսն էլ նրանց ասաց. Ապաշխարեցե՛ք, և ձեզանից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք: Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է այս խոստմունքը, և այն ամեն հեռավորների համար, որոնց մեր Տեր Աստվածը կկանչի» (Գործք առաքելոց 2.38,39):

Պետրոսն առաջին առաքյալն էր, ով փրկությունը հռչակում էր Իսրայելի ժողովրդին չպատկանող մարդկանց: Նա շարունակում էր առաջատար դեր խաղալ եկեղեցում՝ նրա հիմնադրումից հետո մի քանի տարվա ընթացքում, անգամ այն բանից հետո, որ Պողոսը միսիոներ դարձավ գերազանցապես հեթանոսների համար: Պետրոսը Պողոսի հետ միասին վաղ եկեղեցուն և նրա ղեկավարներին, ովքեր հիմնականում հրեաներ էին, օգնում էր հասկանալու Մեծ հանձնարարության համընդհանուր բնույթը:

Պետրոսն աշխատում էր միասնական եկեղեցու ստեղծման ուղղությամբ, որը կմիավորեր դարձի եկած հեթանոսներին, ովքեր չգիտեին հրեական մշակույթի նրբությունների մասին, և դարձի եկած հրեաներին, ովքեր իրենց ծեսերն ընկալում էին որպես անխախտելի: Միսիոներական ծառայության բոլոր առաջամարտիկների նման Պետրոսն էլ ստիպված եղավ ցույց տալ սահմանը Աստծո անփոփոխ հրամանների ու մարդկային ավանդույթների միջև, որոնք հատուկ էին այս կամ այն մշակույթին և այնքան էլ կարևոր նշանակություն չունեին հավատացյալի կյանքի համար՝ հրեա թե հեթանոս: Այդպիսով, հենց Պետրոսը, Երուսաղեմի տիեզերաժողովի ժամանակ խոսելով դարձի եկած հեթանոսների մասին, հայտարարեց, որ Աստված «ոչինչ խտրություն չարեց նրանց և մեր միջև՝ հավատքով սրբելով նրանց

սրտերը» (Գործք առաքելոց 15.9), ինչը օգնեց լուծելու խնդիրը, որ սպառնում է վաղ եկեղեցու միաբանությանը:

Միաշաբթի **Օգոստսի 23**

Պետրոսը Պենտեկոստեի օրը

Համբարձումից առաջ Հիսուսի վերջին խոսքերը միսիոներական բնույթ էին կրում. «Եվ իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8): Այստեղ մենք կրկին հանդիպում ենք Ավետարանը ողջ աշխարհում տարածելու հրամանին: Միայն հիսուն օր անց է սկսվում այդ ծրագրի իրագործումը, որի ընթացքում Պետրոսը հիմնարար դեր է խաղում:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 2.5-21-ը: Այս իրադարձությունն ինչպե՞ս է արտահայտում Ավետարանի լուրով ողջ աշխարհն ընդգրկելու՝ Աստծո մտադրությունը և ցույց տալիս հրեաների դերը այդ աշխատանքում: _____

_____

_____

_____

Մեծ հանձնարարությունն սկսեց կատարվել Պենտեկոստեի օրը: Սուրբ Հոգու հեղման նպատակն աշխարհին ավետարանելն էր: Սուրբ Հոգու հեղումը՝ ի դեմս առաջին անձրևի, հիանալի արդյունքներ տվեց Պենտեկոստեի օրը: Սակայն դա անհամեմատ ավելի խոշոր արդյունքների լոկ կանխաձաշակումն էր, որ կվերապրի եկեղեցին հետագա տարիներին:

Պետրոսի քարոզը բովանդակում է որոշ հիմնական հանգամանքներ, որոնք այսօր էլ մնում են այժմեական:

Նախ, հինկտակարանյան մարգարեությունները և խոստումները կկատարվեն Քրիստոսի անունով (Գործք առաքելոց2.17-21), ճշմարտությունը բացահայտվում է համոզիչ հրաշքների և նշանների միջոցով, որոնք ուղեկցել են Նրա ծառայությանը, ինչպես նաև՝ Նրա մահվան և հարության միջոցով (համար 22-24):

Երկրորդ, Հիսուսը մեծարվեց, նստեց Հոր աջ կողմում և ներկայումս Քրիստոսը (Մեսիան) է և ամեն բանի Տիրակալը (համար 33-36): Բոլորը, ովքեր կապաշխարեն ու կմկրտվեն, Նրանում մեղքերի թողություն կստանան (համար 38,39):

Այստեղ մենք տեսնում ենք ակտիվ աշակերտ Պետրոսին, ով պատրաստ է պաշտպանել իր հավատն ու Հիսուսին: Նա կանչվեց Հիսուսի կողմից՝ ուժեղ առաջնորդ դառնալու եկեղեցու վաղ շրջանում: Թեև նա ոչ այնքան համաշխարհային, արդյունավետ ու այլ մշակույթների և կրոնների հարմարված էր, որքան Պողոս առաքյալը (տե՛ս Գաղատացիս 2.11-14), սակայն Պետրոսը ուղի հարթեց տասնհինգ ազգությունների՝ Ավետարանը քարոզելու համար, երբ քարոզում էր Երուսաղեմում հրեական սփյուռքի համար: Այդպիսով, նա շատ կարևոր կամուրջ օգտագործեց՝ Աստծո լուրն իր ժամանակի մերձավորարևելյան աշխարհին տանելու համար:

Պենտեկոստեի պատմությունը ի՞նչ է ասում մեզ Սուրբ Հոգու հանդեպ մեր պահանջմունքի մասին: Մենք ի՞նչ կարող ենք անել՝ ավելի լավ արձագանքելու համար Սուրբ Հոգու առաջնորդությանը:

Երկուշաբթի **Օգոստոսի 24**

Կոռնելիոսի դարձը, մաս 1

Կարդացե՛ք Գործք առաքելոց 10.1-8,23-48-ը: Այս պատմությունը հեթանոսի մասին, ով դառնում է Հիսուսի հետևորդը, ի՞նչ է պատմում մեզ փրկության և վկայության վերաբերյալ: _____

_____

_____

Կոռնելիոսի՝ հռոմեական սպայի և հեթանոսի դարձի գալը կարելի է հեթանոսական Պենտեկոստե անվանել: Այս կարևոր պատմությունը՝ գրի առված Գործք առաքելոց գրքում, հատկանշանակ է նրանով, որ շոշափում է ամենավիճելի հարցը, որին բախվել է վաղ եկեղեցին. կարո՞ղ է հեթանոսը դառնալ քրիստոնյա՝ նախապես չդառնալով հրեա:

Հռոմեական բանակի շտաբ-բնակարանը, որ վերահսկողություն էր իրականացնում ողջ Հուդայի նկատմամբ, գտնվում էր Կեսարիայում: Կոռնելիոսը այն վեց հարյուրապետերից մեկն էր, ովքեր հրամայում էին քաղաքում տեղավորված իտալական սերտախմբի վեց հարյուր զինվորներին: Նրա անունը ցույց է տալիս, որ նա նշանավոր հռոմեացի հրամանատարի սերնդից է, ով ճակատամարտում հաղթանակ էր տարել՝ տարիներ շարունակ Հռոմի դեմ հաջող կերպով

մարտնչող կարթագենացի զորավար Հաննիբալի դեմ պատերազմելիս: Որ ավելի կարևոր է, Հաննիբալն աստվածավախ մարդ էր, ով սիրում էր ընտանիքի հետ հոգևոր շփումը, կանոնավոր կերպով աղոթում էր և առատաձեռն էր կարիքավորների հանդեպ: Աստված լսեց նրա աղոթքները և հրեշտակ ուղարկեց՝ նրա համար առանձնահատուկ ուղերձով:

«Հավատալով Աստծուն՝ որպես երկնքի և երկրի Արարիչ, Կոռնելիոսը պատվում էր Նրան, ընդունում էր Նրա իշխանությունն ու Նրա խորհուրդն էր որոնում կյանքի բոլոր իրադրություններում: Նա Եհովային հավատարիմ էր ընտանեկան կյանքում և աշխատանքում: Նա իր տանը զոհասեղան կառուցեց Աստծո համար, որովհետև հնարավոր չէր համարում ո՛չ սեփական պարտականությունների կատարումը, ո՛չ որևէ որոշման ընդունումը՝ առաց Աստծո օգնության» (Է. Ուայթ, Գործք առաքելոց 133):

Նաև ուշադրություն դարձրեք այն բանին, թե ինչ տեղի ունեցավ, երբ Կոռնելիոսը վերջապես հանդիպեց Պետրոսին: Նա խոնարհվեց՝ ընկնելով նրա ոտքերի առջև. այս գործողությունը, հավանաբար, ապշեցրեց Պետրոսին: Այդպիսով, մենք կարող ենք նկատել, որ Աստծո ընտրած այդ հեթանոսին, աստվածավախ մարդուն անհրաժեշտ էր առավել խորը ճանաչել ճշմարտությունը, և նա, անկասկած, պատրաստ էր սովորելու:

Կոռնելիոսի ո՞ր հատկանիշները, չնայած նրա անտեղյակությանը, կարող են մեզ համար օրինակ լինել մեր հոգևոր կյանքում:

Երեքշաբթի **Օգոստոսի 25**

Կոռնելիոսի դարձը, մաս 2

«Պետրոսը իր բերանը բանալով ասաց. Ճշմարտությամբ հասկանում եմ, որ Աստված աչառ չէ, այլ ամեն ազգում, ով որ վախենում է նրանից և արդարություն է գործում, ընդունելի է նրան» (Գործք առաքելոց 10.34,35): Թեև մեզ այս բառերը այդքան հեղափոխական չեն թվում, սակայն Պետրոսը զարմանալի խոստովանություն արեց: Մենք պետք է հիշենք, թե ով էր Պետրոսը, որտեղից էր եկել և որոշ հարցերի վերաբերյալ ինչ դիրքորոշում ուներ (ինչը, ի դեպ, ջանում էր հաղթահարել) (տե՛ս Գաղատացիս 2.11-16): Անկասկած, Կոռնելիոսի հետ նրա փորձառությունը օգնեց նրան՝ գիտակցելու սեփական

սխալը և տեսնելու՝ այլ ազգերին Ավետարանը հռչակելու լիակատար պատկերը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 10.33-ը: Կոռնելիոսի պատասխանը Պետրոսին ինչպե՞ս է ցույց տալիս, որ չնայած նա ամբողջությամբ չգիտեր ճշմարտությունը, բայց գիտակցում էր Աստծո Խոսքին հնազանդվելու կարևորությունը: ___

___

___

Կարդացե՛ք Գործք առաքելոց 11.14-ը: Տվյալն հատվածն ի՞նչ է ասում այն մասին, որ Ավետարանն անհրաժեշտ է քարոզել անգամ այնպիսի բարեպաշտ մարդկանց, ինչպիսին Կոռնելիոսն էր: ___

___

___

Հռոմեացիս 2.14-16-ում գրի առնված խոսքերն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալու, թե ինչ տեղի ունեցավ Կոռնելիոսի հետ: ___

___

___

Ինչպես մենք տեսանք, Կոռնելիոսը հեթանոս էր, ով «աստվածավախ» էր (Գործք առաքելոց 10.2), թեև առաջվա նման նա դեռ շատ բան պետք է իմանար (ինչպես և մենք ամենքս): Սակայն նրա ծոմը, աղոթքներն ու բարեգործությունը ցույց տվեցին նրա սրտի բաց լինելը Տիրոջն ընդունելու համար: Այդ պատճառով, երբ ժամանակը եկավ, Աստված հրաշալի կերպով Իրեն դրսևորեց նրա կյանքում:

Կարևոր է հիշել, որ, թեև հրեշտակը հայտնվեց Կոռնելիոսին, հրեշտակը չքարոզեց Ավետարանը: Դրա փոխարեն՝ նա Կոռնելիոսին հայտնեց Պետրոսի հետ հանդիպելու անհրաժեշտության մասին, ով էլ նրան պատմեց Հիսուսի մասին (Գործք առաքելոց 10.34-44): Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես է Տերը օգտագործում մարդկանց՝ որպես աշխարհ ուղարկված լրաբերներ:

Չորեքշաբթի **Օգոստոսի 26**

Պետրոսի տեսիլքը

Երեքշաբթի օրվա դասում մենք նշեցինք, որ, նախքան Կոռնելիոսին հանդիպելը, Պետրոսի վերաբերմունքի մեջ՝ հեթանոսների նկատ-

մամբ, փոփոխություններ տեղի ունեցան, սակայն հրեաներից այլ հավատավորներ դեռևս չէին հասկանում այդ ճշմարտությունը (Գործք առաքելոց 10.44,45): Ի՞նչը Պետրոսին դրդեց փոխվել:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 10.9-22 և 11.1-10-ը: Տվյալ հատվածները մեզ ի՞նչ են ասում Պետրոսի նախապաշարմունքների մասին, որոնք այնքան էին արմատավորվել նրա գիտակցության մեջ, որ հատուկ տեսիլք պահանջվեց, որպեսզի առավել բաց դարձնի այն: _____

_____

_____

Կոռնելիոսի դարձն ու Ավետարանի քարոզի մեջ Պետրոսի դերն այնքան կարևոր էին եկեղեցու առաքելության համար, որ Աստված գերբնական ձևով շփվեց ինչպես միսիոների, այնպես էլ Կոռնելիոսի հետ. այն ժամանակ, երբ հրեշտակը հայտնվեց Կոռնելիոսին, Պետրոսին տրվեց տեսիլքը:

Բացի դրանից, Պետրոսը Հոպեում էր գտնվում՝ կաշեգործի տանը (Գործք առաքելոց 9.43, 10.6,32). սա մանրամասն է, որը չի կարելի անտեսել: Մշակված կաշին ու կաշեգործները նողկալի էին հրեաների համար՝ կենդանիների դիակների մշակման և այդ գործընթացում արտաթորանքների օգտագործման պատճառով: Կաշեգործներին ներս չէին թողնում քաղաքներ, ուշադրություն դարձրե՛ք, որ Սիմոնն ապրում էր «ծովի մոտ» (Գործք առաքելոց 10.6):

Կաշեգործի տանը Պետրոսի գտնվելը ցույց է տալիս, որ, նախքան իր տեսիլքը, Պետրոսը հասկացել էր, որ իր նախկին հայացքներից մի քանիսը չէին համապատասխանում Ավետարանին: Ե՛վ Պետրոսը, և՛ Կոռնելիոսի ընտանիքը պետք է կիսվեին որոշ մշակութային ժառանգությամբ: Բոլոր մարդիկ, ովքեր Պետրոսի տեսիլքում ներկայացված էին «ամեն կերպ չորքոտանիներով», Աստծո զավակներն են:

Պետրոսին տրված ճշմարտությունը վկայելու հրամանը ցույց է տալիս, որ թեև Աստված ընդունում է բոլոր մարդկանց, ոչ բոլոր կրոններն են ընդունելի: Կոռնելիոսն արդեն «աստվածավախ» մարդ էր, ինչպես և գրեթե բոլորը հին հասարակության մեջ: Որպես զինվոր՝ նա ծանոթ էր Միտրի երկրպագության պաշտամունքին, իսկ որպես սպա՝ նա մասնակցում էր կայսեր պաշտամունքին: Բայց այդ սովորույթը հաճո չէր Աստծուն:

Այստեղ դաս է բովանդակվում բոլոր նրանց համար, ովքեր դիմում են ոչ քրիստոնեական կրոններին՝ քրիստոնեությանը հավասար հա-

մարելով: Թեև դա երբեմն արվում է քաղաքական զսպվածության ոգուց ելնելով, այդպիսի մոտեցումը աստվածաշնչյան պնդումների նկատմամբ հանգեցնում է քրիստոնեության եզակիության և կատարելության մասին աստվածաշնչյան պնդումների արժեզրկմանը:

Ինչպե՞ս հարգանք դրսևորել այն մարդկանց հանդեպ, ում հավատը մենք սխալ ենք համարում, միևնույն ժամանակ չստեղծելով տպավորություն, ասես մենք ինքներս հարգում ենք այդ համոզմունքները: Ո՞րն է տարբերությունը մարդկանց հանդեպ հարգանքի և նրանց համոզմունքների հանդեպ հարգանքի միջև:

Հինգշաբթի **Օգոստոսի 27**

Երուսաղեմի տիեզերաժողովի որոշումները

Հեթանոսների մեջ առաքելության արագ հաջողությունը վաղ եղեղեցում կարևոր հարց բարձրացրեց դեպի աստվածաշնչյան հավատը դարձի եկած հեթանոսների աձի վերաբերյալ (Հռոմեացիս 11.17): Միշտ, երբ այլ կրոնների ու մշակույթների պատկանող մարդիկ միանում են հավատացյալների՝ արդեն ստեղծված հանրույթին, լարվածություն է ծագում: Տվյալ դեպքում քրիստոնյա հրեաները, մեծ հարգանք զգալով Հին Կտակարանի ծեսերի ու ավանդույթների հանդեպ, համարում էին, որ դարձի եկած հեթանոսները պետք է ընդունեն և պահպանեն այդ օրենքներն ու ծեսերը: Հիմնական ուշադրությունը սևեռվում էր թլփատության վրա, որը հիմնարար պահանջ էր հրեական համայնքին միացող տղամարդկանց համար: Պե՞տք է արդյոք, որ դարձի եկած հեթանոսները կատարեն թլփատության ծեսը: Հուդայում որոշ քրիստոնյաներ հենց այդպես էլ մտածում էին և հայտարարում էին իրենց համոզվածության մասին՝ օգտագործելով անհերքելի աստվածաշնչյան փաստարկներ. դա անհրաժեշտ է փրկության համար:

Ի՞նչ իրադարձություն օգնեց՝ լուծելու այս կարևոր հարցը Երուսաղեմի տիեզերաժողովում: Գործք առաքելոց 15.1-35: _____

_____

_____

Թեև թլփատության հարցը Երուսաղեմի տիեզերաժողովը հրավիրելու գլխավոր պատճառն էր, տիեզերաժողովը նաև քննարկեց

հրեական մշակույթին ներհատուկ այն ծեսերը, որոնց կատարումը ոչ պարտադիր էր դառնում քրիստոնեությանը դարձածների համար: Տիեզերաժողովը (համար 23-29) նաև ներկայացրեց ընդհանուր բանաձևը, որտեղ հրեությունից և հեթանոսներից դարձի եկած քրիստոնյաները կարող էին գոյակցել համայնքում: Պահպանվեցին հրեաների հիմնական արժեքները, բայց հեթանոսներին թույլատրվում էր չմասնակցել թլփատության ծեսին: Տիեզերաժողովի որոշումները որքան գործնական էին, նույնքան էլ աստվածաբանական: Այն օրինակ սահմանեց եկեղեցու համար, թե ինչպես լուծել հարցերն ու խնդիրները, նախքան է՛լ ավելի խոշոր տարաձայնությունների առաջ գալը: Փորձառու միսիոներները սովորեցին որոշել քրիստոնեական հավատի հիմնական հարցերը և ուշադրությունը կենտրոնացնել դրանց վրա՝ հավատի համար ոչ էական հարցերը լուծելու փոխարեն:

Երուսաղեմի տիեզերաժողովի օրինակն ինչպե՞ս կարող է օգնել ժամանակակից եկեղեցուն՝ լուծելու վիճելի հարցերը: Նրանց որոշումներն ու գործողությունները կարո՞ղ են որպես մոդել ծառայել մեզ համար:

Ուրբաթ Օգոստոսի 28

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Գործք առաքելոց» գրքից կարդացե՛ք «Հրեան ու հեթանոսը» գլուխը, 188-200:

«Պետրոսը պատմեց նաև այն զարմանքի մասին, որ նա զգացել էր, երբ Սուրբ Հոգին իջավ իր ունկնդիրների՝ ինչպես հեթանոսների, այնպես էլ հրեաների վրա, ովքեր Ավետարանի քարոզի ժամանակ հավաքվել էին Կոռնելիոսի տանը: Թլփատված հրեաների վրա հանգչած լույսն ու փառքն արտացոլվում էին նաև անթլփատ հեթանոսների դեմքերին: Սրանով Աստված նախազգուշացնում էր Պետրոսին, որ չի կարելի մեկին մյուսից ավելի նսեմ համարել, որովհետև Քրիստոսի արյունը կարող է մաքրել ամեն տեսակ անմաքրությունից:

Պետրոսի խոսքը նախապատրաստեց ժողովին, որ համբերատար կերպով ունկնդրեն Պողոսի ու Բառնաբասի պատմածը՝ հեթանոսների հանդեպ նրանց ծառայության մասին» (Է. Ուայթ, Գործք առաքելոց 193, 194):

Հարցեր քննարկման համար

1. Ոմանք Պետրոսի տեսիլքը կապում են մաքուր և անմաքուր սննդի հարցի հետ՝ պնդելով, որ դրանք այլևս անվավեր են: Բայց հարկավոր է հիշել, որ տեսիլքի նշանակությունը հստակ կերպով բացատրեց ինքը՝ Պետրոսը. «Ոչ մի մարդու էլ պիղծ կամ անմաքուր չասել» (Գործք առաքելոց 10.28): Այդ պատճառով տեսիլքը ոչ թե սննդի, այլ ուրիշ մարդկանց որպես Աստծո զավակներ ընդունելու մասին էր՝ անկախ նրանց էթնիկ պատկանելությունից, ազգությունից, մասնագիտությունից կամ կրոնից: Ինչո՞ւ, սակայն, մարդիկ այս դրվագն օգտագործում են որպես փաստարկ՝ սննդի օգտին: Որքանո՞վ պետք է զգույշ լինենք մենք Սուրբ Գրքի մեր մեկնաբանության մեջ:
2. Խորհեցե՛ք Հռոմեացիս 2.14-16 հատվածի մասին: Մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք այս գաղափարին՝ միսիոներական ծառայության տեսանկյունից: Ինչո՞ւ քարոզել նրանց, ովքեր, չունենալով գրված օրենքը, վարվում են օրենքին համապատասխան:
3. Հինգշաբթի օրվա մտորումներում մենք խոսեցինք այն մասին, որ Երուսաղեմի տիեզերաժողովը կարող է հանդես գալ որպես ժամանակակից եկեղեցու վարքի մոդել: Կարդացե՛ք տիեզերաժողովի մասին պատմող տեքստերը (Գործք առաքելոց 15.1-35): Ի՞նչ որոշակի քայլեր ձեռնարկվեցին, որոնք թույլ են տալիս խոսել այսօր նմանվելու օրինակի մասին: Օրինակ, ուշադրությունն դարձրեք հետևյալին. 1) անձնական վկայությունները, 2) Ավետարանի դերը, 3) Սուրբ Գրքի դերը, 4) միսիոներական ծառայության դերը և 5) տիեզերաժողովի ժամանակ մարդկանց վերաբերմունքը միմյանց հանդեպ:

Դաս 10

Օգոստոսի 29 – սեպտեմբերի 4

ՓԻԼԻՊՈՍԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՍԻՈՆԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Կորնթացիս 4.18, Գործք առաքելոց 2.44-47, 4.34-37, 6.1-7, Գործք առաքելոց 8, 21.7-10:

Հիշելու համարը.

«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8):

Հենց համաշխարհային ավետարանչական առաքելությունն էր առաջին հերթին հուզում հարություն առած Քրիստոսին: Նոր Կտակարանը բովանդակում է Նրա մեծ հանձնարարություններից առնվազն հինգը. Մատթեոս 28.18-20, Մարկոս 16.15, Ղուկաս 24.47-49, Հովհաննես 20.20, Գործք առաքելոց 1.5-8: Դրանք միասին կազմում են ամենակարևոր հրահանգը, որ երբևէ տրվել է քրիստոնյաներին: Այս հանձնարարություններում աշխարհագրական ռազմավարություն է դիտվում առաքելության տարածման սահմանները նշանակելու համար. սկզբնակետ Երուսաղեմից մինչև Հրեաստան և Սամարիա, որից հետո՝ մինչև աշխարհի ծայրը: Տվյալ հրամանն ընկալվեց լրջորեն, և այն անհրաժեշտ էր կատարել:

Այս աշխարհագրական ռազմավարությունը կարելի է նկատել Փիլիպոսի աշխատանքում՝ որպես ավետարանիչ: Համաձայն Գործք առաքելոց 8-ի՝ նրա ծառայությունն սկսեց տարածվել Երուսաղեմից դեպի շրջակայքը: Այլ խոսքերով, ժամանակի ընթացքում այն անընդհատ ընդլայնվում էր:

Ո՞վ էր Փիլիպոս-ավետարանիչը: Աստծո Խոսքն ի՞նչ է ասում նրա և նրա աշխատանքի մասին՝ եկեղեցու գոյության առաջին օրերին: Վերջապես, ի՞նչ դասեր կարող ենք քաղել մեզ համար այն ոգեշունչ տեքստերից, որոնք հիշատակում են այս միսիոների մասին:

Փիլիպոս-ավետարանիչը

«Որ այս երևող բաներին չենք մտիկ անում, այլ աներևույթներին. որովհետև երևողները ժամանակավոր են, իսկ չերևողները՝ հավիտենական» (Բ Կորնթացիս 4.18): Խորհեցե՛ք, թե այստեղ ինչի մասին է խոսում Պողոսը (հատկապես՝ Փիլիպոս-ավետարանչի մասին թեմայի ուսումնասիրության լույսի ներքո, որի մասին մենք հիշատակում ենք գտնում միայն մի քանի աստվածաշնչյան տեքստերում): Ինչպես կարելի է տեսնել, Փիլիպոսը հսկայական աշխատանք է կատարել՝ չնայած այն բանին, ինչ մեզ հայտնի է նրա գործողությունների մեծ մասի մասին: Դուք գիտե՞ք նրանց, ովքեր մեծամեծ գործեր են գործել Աստծո համար, սակայն խոշոր ճանաչման չեն արժանացել մյուսների կողմից: Ինչո՞ւ է կարևոր միշտ հիշել Պողոսի խոսքերը, հատկապես երբ մենք կատարում ենք մի աշխատանք, որն առանձնակի ուշադրության և ճանաչման չի արժանանում: Տե՛ս նաև Ա Կորնթացիս 4.13:

Այն ժամանակներում Փիլիպոսի անունը հայտնի էր: Հունարենում այն նշանակում էր «ձիերի սիրահար»: Նոր Կտակարանում այս անունով չորս մարդու ենք հանդիպում: Նրանցից երկուսի երկրորդ անունը Հերովդես էր: Նրանք պատկանում էին Հերովդեսի տոհմին, ով դաժանաբար կառավարում էր Իսրայելը Նոր Կտակարանի ժամանակներում: Մյուս երկու Փիլիպոսները նկատելի դեր խաղացին Ավետարանի առաքելության կատարման մեջ:

Առաջինը՝ Փիլիպոսը Բեթսայիդայից, այն աշակերտն էր, ում շնորհիվ Նաթանայելը եկավ Հիսուսի մոտ (Հովհաննես 1.43-46): Ավելի ուշ նա Հիսուսի մոտ բերեց հույներին (Հովհաննես 12.20-21):

Երկրորդ Փիլիպոսին Գործք առաքելոց 21.8-ը անվանում է «ավետարանիչ»՝ այն բանի համար, որ տարբերություն անցկացնի նրա և աշակերտ Փիլիպոսի միջև: Առաջին անգամ նա Երուսաղեմի եկեղեցում հայտնվում է որպես մեկը, ով պետք է «սեղանին ծառայեր» (Գործք առաքելոց 6.2-5): Հետո նա դարձավ ավետարանիչ (Գործք առաքելոց 8.12): Նրա միսիոներական ծառայությանը, որ շարունակվում էր ավելի քան քսան տարի, աջակցում էին նրա չորս

մարգարեուհի դուստրերը, ինչի մասին հիշատակվում է Գործք առաքելոց գրքում: Ահա՛ էլի ինչ-որ բան նրա կենսագրությունից:

«Հենց Փիլիպոսն էր Ավետարանը քարոզում սամարացիներին, հենց Փիլիպոսն ունեցավ արիություն, որպեսզի մկրտի եթովպացի ներքինուն: Այդ երկու աշխատողների (Փիլիպոսի ու Պողոսի) ուղիները ժամանակավորապես միահյուսվել էին: Փարիսեցի Սավուղի իրականացրած կատաղի հալածանքները ցրեցին Երուսաղեմի եկեղեցին և քայքայեցին յոթ սարկավագների կառուցվածքի արդյունավետությունը: Երուսաղեմից փախուստը դրդեց Փիլիպոսին՝ փոխելու իր աշխատանքի մեթոդը, ինչի արդյունքում նա հետևեց այն նույն կոչին, որին Պողոսը նվիրեց իր կյանքը: Պողոսն ու Փիլիպոսը թանկարժեք ժամեր անցկացրեցին միմյանց հետ. հուզիչ էին նրանց հիշողություններն այն օրերի մասին, երբ այն լույսը, որ պայծառացրել էր Ստեփանոսի նահատակման տառապանքների ժամանակ դեպի երկինք ուղղված նրա դեմքը, իր ողջ փառքով շողաց Պողոս հալածչի վրա՝ նրան բերելով Հիսուսի մոտ, երբ աղոթում էր անօգնական կերպով» (Է. Ուայթ, «Ակնարկներ Պողոսի կյանքից», 204):

Երկուշաբթի **Օգոստոսի 31**

Սպասարկելով սեղանները

Կարդացե՛ք Գործք առաքելոց 2.44-47, 4.34-37-ը: Այստեղ ինչպե՞ս է պատկերված վաղ եկեղեցին: _____

_____

_____

Անշուշտ, առաջին քրիստոնյաների գործերը որոշ ժամանակ հիանալի էին ընթանում: Բայց շուտով, քանի որ բոլոր մարդիկ մեղավորներ են, սկսեց լարվածություն ծագել նրանց հարաբերությունների մեջ:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 6.1-7-ը: Ինչպե՞ս ծագեցին խնդիրները, և եկեղեցին ինչպե՞ս հաղթահարեց դրանք:

_____

_____

Երուսաղեմի եկեղեցու արագ աճն իր հետ բերեց սոցիալական լարվածություն: Փիլիպոսը նշանակվեց այն թիմի անդամներից մեկը, որ զբաղվում էր այս խնդրով: Դարձի եկածների թվում կային նաև աղքատ ու անաշխատունակ մարդիկ, և նրանց մասնակցությունը ամենօրյա հացկերույթներին լրացուցիչ պահանջներ էր դնում եկե-

ղեցու առաջնորդների վրա: Դժգոհություն առաջացավ՝ հունարեն խոսող այրիներին սնունդը սխալ բաժանելու արդյունքում: Հատկապես խոցելի էր հրեա մարգարեների խոսքերի հիշատակումը՝ չանտեսել այրիներին ու որբերին:

Այս լուրջ հարցը լուծելու համար տասներկու առաքյալները հավաքեցին հավատացյալներին և նրանց առաջարկեցին նշանակել յոթ տղամարդու՝ լցված Սուրբ Հոգով և իմաստությամբ, ովքեր բառցիորեն «կհոգան սեղանների մասին» (այլ խոսքերով՝ «սեղանները գցել»): Իսկ առաքյալները պետք է հետևեին «աղոթքին և խոսքի պաշտամունքին» (Գործք առաքելոց 6.3,4): Բոլոր յոթը ունեին հունական անուններ, հնարավոր է, մատնացույց անելով հավասարակշռված սոցիալական ծառայությունը՝ հունարեն լեզվով խոսող անտեսված այրիների համար: Նրանց թվում էր նաև Փիլիպոսը: Այդ մարդու մասին սա առաջին հիշատակումն էր Աստվածաշնչում:

Առաքյալները պնդում էին, որ անհրաժեշտ է լրացուցիչ ծառայողներ նշանակել, որպեսզի իրենք չգերծանրաբեռնվեն ռեսուրսների բաշխմամբ, որոնք անհրաժեշտ էին հասարակական կյանքի համար: Նրանք շեշտը դրեցին այն բանի վրա, որ կանչվել էին՝ իրենց Աստծո խոսքին և աղոթքին նվիրելու համար:

Ի՞նչ հակասական հարցեր գոյություն ունեն ձեր տեղական եկեղեցում: Դուք ինչպե՞ս կարող եք թույլ տալ Աստծուն՝ ձեզ օգտագործելու որպես օգնական՝ դրանք լուծելու ճանապարհին:

Երեքշաբթի **Սեպտեմբերի 1**

Փիլիպոսը Սամարիայում

Սողոսը՝ ապագա առաքյալն ու միսիոները, Աստվածաշնչի էջերում առաջին անգամ հայտնվում է Ստեփանոս սարկավագի՝ առաջին քրիստոնյա նահատակի քարկոծման ժամանակ: Հալածանքների այդ ալիքը, սակայն, միայն նպաստեց Ավետարանի հետագա տարածմանը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 8.1-6-ը: Ո՞րն էր Երուսաղեմի եկեղեցու հալածման արդյունքը: _____

_____

_____

_____

Սամարիան առաջին աշխարհագրական կանգառն էր քրիստոնեության տարածման ճանապարհին: Սամարացիներն իրենց համարում էին հրեաների սերունդները, ովքեր մնացել էին տեղում այն ժամանակ, երբ Ասորեստանը իսրայելացիների մեծ մասին վտարել էր ՔԱ 722 թվականին: Սակայն հրեաները համարում էին, որ սամարացիները այլ ազգերի սերունդներ են, ում ասորեստանցիները վերաբնակեցրել էին Իսրայելում: Հրեա-սամարական հարաբերությունները նորկտակարանյան ժամանակներում աչքի էին ընկնում լարվածությամբ և դաժանության դրսևորմամբ: Սակայն, ինչպես մենք տեսանք նախկինում, Հիսուսը ճանապարհ հարթեց միսիոներական աշխատանքի համար այն վայրում, երբ ջրհորի մոտ հանդիպեց կնոջը, ով, իր հերթին, «ավետարանեց» իր ժողովրդին:

Սեղանները սպասարկելու կոչը, որ ստացավ Փիլիպոսը, նման էր սամարացիների հետ միսիոներական ավետարանչական աշխատանքին: Խուսափելով Երուսաղեմում կրոնական հալածանքներից՝ նա ժամանակը զուր չէր վատնում: Փիլիպոսը հռչակեց, որ Մեսիան, Ում սպասում էին հրեաներն ու սամարացիները, եկել է (Գործք առաքելոց 8.5,12):

Կարդացե՛ք Գործք առաքելոց 8.6-15-ը: Որքանո՞վ էր հաջող Փիլիպոսի ծառայությունը Սամարիայում: _____

_____

_____

Այս օտարերկրյա միսիոներական դաշտում Տերը հաճախ գործում էր Փիլիպոսի միջոցով: Կնոջ պնդումը ջրհորի մոտ, թե «հրեաները չեն խառնվում սամարացիների հետ» (Հովհաննես 4.9), այժմ մնացել էր անցյալում:

Գոյություն ունե՞ն ձեր հոգին թունավորող թշնամանք, ատելություն և նախապաշարմունքներ, որոնք պետք է «մնան անցյալում»: Չի՞ հասել արդյոք դրանք բաց թողնելու ժամանակը:

Չորեքշաբթի **Սեպտեմբերի 2**

Եթովպացու հետ

Համաձայն Գործք առաքելոց 8.26-39-ի՝ Փիլիպոսի հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ եթովպացի գանձապահի հետ: Այսպիսով, միսիոներական աշխատանքը առաջ շարժվեց դեպի հաջորդ աստի-

ճանը՝ «մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8): Փիլիպոսը կապող օղակ էր Սամարիայի և Գազայի առաքելությունների միջև: Սամարիայից, որը գտնվում էր Երուսաղեմից դեպի հյուսիս, Փիլիպոսը կանչվեց ուղևորվելու դեպի Գազա՝ հարավային քաղաք տանող ճանապարհը: Նա հյուսիսում ծառայություն էր կատարում մի խումբ մարդկանց հետ, իսկ հարավում այն կենտրոնացված էր մեկ մարդու վրա: Սամարիայում Փիլիպոսը կարող էր Քրիստոսի մասին քարոզել միայն Մովսեսի հինգ գրքերի օգնությամբ, որովհետև սամարացիները ընդունում էին միայն դրանք: Իսկ այստեղ նա կարող էր օգտագործել Եսայիայի գիրքը, հավանաբար՝ հունարեն թարգմանությամբ:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 8.26-39-ը: Ընթերցելու ժամանակ փորձե՛ք պատասխանել հետևյալ հարցերին.

Եսայիա մարգարեի գրքից (Եսայիա 53) ո՞ր տեքստերն էր կարդում եթովպացին: Ինչո՞ւ էին դրանք եթովպացուն ավետարանելու լավ հնարավորություն Փիլիպոսի համար:

_____

_____

Ի հակադրություն Սամարիայում Փիլիպոսի աշխատանքի, որտեղ նա հրաշքներ էր գործում (Գործք առաքելոց 8.6), այն ամենը, ինչով Փիլիպոսն զբաղվեց եթովպացու հետ, Աստվածաշնչի ուսումնասիրությունն էր: Մենք ի՞նչ դաս կարող ենք յուրացնել սրանից, որը կօգնի մեզ՝ այլ մարդկանց ծառայելու գործում: _____

_____

_____

_____

Տիրոջ Հոգին տարավ Փիլիպոսին անմիջապես այն բանից հետո, երբ նա ավարտեց «Հիսուսն ավետարանելը նրան» և մկրտեց եթովպացուն: Փիլիպոսը հնարավորություն չուներ իր դավանանքի մասին պատմելու նորադարձ հեթանոսին: Եթովպացին մնաց քրիստոնեական հավատի ըմբռնմամբ՝ աֆրիկյան մշակույթի համատեքստում՝ առաջնորդվելով Հին Կտակարանով և Աստծո Հոգով, Որն արդեն աշխատել էր նրա մեջ, քանի որ նա արդեն հավատում էր Տիրոջը և Նրա Խոսքին:

Փիլիպոսը եթովպացուն կարևոր տեքստեր բացատրեց Հիսուսի մահվան մասին: Ինչո՞ւ Հիսուսի, Նրա մահվան և հարության թեման պետք է կենտրոնականը լինի այն լուրի

մեջ, որ մենք փոխանցում ենք աշխարհին: Ինչպիսի՞ն կլինի մեր լուրն առանց Նրա:

Հինգշաբթի **Սեպտեմբերի 3**

Փիլիպոսը՝ որպես ավետարանիչ, հայր և հյուրընկալ

Անկասկած, Փիլիպոսը նշանակված էր՝ կատարելու Աստծո աշխատանքը: Մեկնիչների կարծիքները բաժանվում են այն հարցում, թե ինչ են նշանակում «Տիրոջ Հոգին Փիլիպոսին հափշտակեց» բառերը (Գործք առաքելոց 8.39): Նրան պարզապես ասվե՞ց գնալ Ազովտոս, թե՞ նա փոխադրվեց այնտեղ: Բոլոր դեպքերում կարևոր է այն, որ Փիլիպոսը այն մարդն էր, ով առաջնորդվում էր Սուրբ Հոգով: Այսպիսով, Աստված կարող էր նրան օգտագործել՝ Իր համար մեծ աշխատանք կատարելու գործում:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 8.40-ը: Ի՞նչ ենք իմանում մենք Փիլիպոսի մասին, և ինչո՞ւ կարող ենք խիզախորեն նրան անվանել «ավետարանիչ»: _____

_____

_____

Կարդացե՛ք Գործք առաքելոց 21.7-10-ը: Այս տեքստերից մենք ի՞նչ կարող ենք իմանալ Փիլիպոսի մասին: _____

_____

_____

Պատմության այս փուլում մեզ պարզ է դառնում, որ Փիլիպոսը չորս չամուսնացած դուստրեր ուներ: Փիլիպոսի ստացած կոչը՝ սարկավագի աշխատանքը թողնելու և ավետարանչական ծառայությամբ զբաղվելու մասին, նրան ներքաշում էր երկարատև ճանապարհորդությունների մեջ: Մենք գիտենք նրա ճանապարհորդության մասին՝ Երուսաղեմից դեպի Սամարիա, հետո Գազա, ինչից հետո՝ ծովափով 80 կիլոմետր հեռավորության վրա գտնվող բոլոր քաղաքները՝ Ազովտոսի և Կեսարիայի միջև: Հավանաբար, գոյություն ունեն այնպիսի ճանապարհորդություններ, որոնց մասին հիշատակումներ չկան: Ինչպես և բոլոր առաջամարտիկ միսիոներները, նա անհանգստանում էր, հոգնում, թռիչքներ և անկումներ ապրում, որոնք ուղեկցում են նման ծառայությանը: Սակայն նա իր ընտանիքը կառավարում է այնպես, որ Սուրբ Հոգին նրա դուստրերին արժանի համարեց՝ ստա-

նալու մարգարեության պարգևը: Սա վկայում է այն մասին, որ նա լավ հայր էր, և որ նրա քրիստոնեական ընտանիքում իշխում էր բարեպաշտությունը:

Տեքստն ասում է, որ Պողոս առաքյալը Փիլիպոսի տանն էր «շատ օրեր» (համար 10): Քսանհինգ տարի առաջ Պողոսը, ում այն ժամանակ Սողոս էին անվանում, ագրեսիվ էր և քրիստոնյաների կատաղի հալածիչ (Գործք առաքելոց 9.1-2): Երուսաղեմի հավատացյալների դեմ նրա հալածանքները Փիլիպոսին ստիպեցին փախչել Սամարիա (Գործք առաքելոց 8.1): Եվ այժմ, տարիներ անց, հալածիչն ու հալածյալը հանդիպեցին Փիլիպոսի տանը, ով Պողոսին ընդունեց որպես եղբայր: Եղբայրների ու Քրիստոսի ծառայողների ի՜նչ հետաքրքիր հանդիպում՝ Ավետարանը տարածելու նպատակով այն մարդկանց շրջանում, ովքեր չէին պատկանում հրեա ժողովրդին:

Այլ մարդկանց նկատմամբ ծառայություն իրականացնելով՝ ինչո՞ւ է այդքան կարևոր, որ չմոռանանք մեր գլխավոր պարտականությունը՝ մեր ընտանիքների համար պատասխանատվությունը:

Ուրբաթ Սեպտեմբերի 4

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Գործք առաքելոց» գրքից կարդացե՛ք 11-րդ՝ «Ավետարանը Սամարիայում» գլուխը, 103-110:

«Երբ սկսվեցին հալածանքները, նրանք ցրվեցին՝ միսիոներական վճռականությամբ լեցուն՝ իմանալով, որ իրենց ձեռքերում է կյանքի հացը՝ քաղցած աշխարհի համար, և հասկանալով, թե ինչ պատասխանատվություն է ընկած իրենց վրա: Քրիստոսի սերը դրդում էր նրանց՝ կտրելու այդ հացը և բաժանելու բոլոր դրա կարիքն ունեցողներին» (Է. Ուայթ, Գործք առաքելոց 106):

«Եվ երբ Նրա աշակերտները վտարվեցին Երուսաղեմից, նրանցից ոմանք ապաստան գտան Սամարիայում: Սամարացիներն ուրախությամբ ընդունեցին Ավետարանի այս լրաբերներին, և դարձի եկած հրեաները թանկարժեք բերք էին հավաքում նրանց մեջ, ովքեր ժամանակին իրենց կատաղի թշնամիներն էին» (նույն տեղում, 106,107):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպես մենք տեսանք, Ավետարանը խորտակում է մարդկանց միջև եղած պատնեշները: Ծայրահեղ դեպքում, այդպես պետք է լիներ իդեալական դեպքում: Իրականությունը երբեմն միանգամայն այլ է լինում: Քրիստոնյաները, ովքեր հասկանում են, որ մենք ամենքս հավասար ենք Աստծո առջև, ու որ խաչը հավասարեցնում է բոլորին, արդյոք մշակութային, սոցիալական և այլ խոչընդոտների թույլ չե՞ն տալիս բաժանել մեզ: Ինչպե՞ս կարող է Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին, լինելով համաշխարհային եկեղեցի, խորտակել այդ պատնեշները:
2. Մենք տեսնում ենք, որ վաղ եկեղեցուն հետապնդելը հանգեցրեց հավատացյալների ցրվելուն, և արդյունքում Ավետարանն սկսեց է՛լ ավելի լայնորեն տարածվել: Հնարավոր է՝ դա տեղի չէր ունենա, եթե չլինեին հալածանքները: Թեև Աստված կարողացավ լավ բան դուրս բերել դրանից, մենք պետք է հիշենք, որ կրոնական հալածանքները սխալ և անարդար գործողություններ են: Մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք այն մարդկանց, ովքեր ենթարկվում են կրոնական հալածանքների, անգամ եթե մենք համաձայն չենք նրանց դավանանքի հետ (Տե՛ս Ղուկաս 6.31-ը):

Դաս 11
Սեպտեմբերի 5-11

ՊՈՂՈՍ. ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԿԱՆՉՎԵԼԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Գործք առաքելոց 9.1, Փիլիպեցիս 3.6, Ա Կորնթացիս 15.10, Գործք առաքելոց 9.1-22, 26.18, Գաղատացիս 2.1-17:

Հիշելու համարը.
«Տերն էլ ասաց նրան. Գնա՛, որովհետև նա ինձ համար ընտրված անոթ է, որ իմ անունը տանի հեթանոսների, թագավորների և Իսրայելի որդիների առաջ: Որովհետև ես ցույց կտամ նրան, թե որչափ պիտի չարչարվի իմ անունի համար» (Գործք առաքելոց 9.15,16):

Նոր Կտակարանի կենտրոնական կերպարներից մեկը Պողոսն էր, ծագումով՝ տարսոնցի Սողոսը: Վաղ եկեղեցու համար Պողոսը այնպիսի անձնավորություն էր, ինչպես Մովսեսը՝ հրեա ժողովրդի համար: Տարբերությունը միայն այն էր, որ Մովսեսն Աստծո ժողովրդին դուրս բերեց հեթանոսների միջավայրից, որպեսզի հրեաները կարողանան վարվել Աստծո կամքին համապատասխան, իսկ Պողոսը հրեաների ունեցած Աստծո Խոսքը փոխանցեց հեթանոսներին, որպեսզի նրանք նույնպես կարողանան վարվել Աստծո կամքին համապատասխան:

Պողոսի մասին մենք ավելին գիտենք, քան առաջին դարի ցանկացած այլ քրիստոնյայի մասին: Նա նշանավոր է՝ վերջին երկու հազարամյակների ընթացքում քրիստոնեության տարածման մեջ իր ունեցած առանձնահատուկ ներդրման շնորհիվ: Նրա միսիոներական ծառայությունն ու Միջերկրական ծովի շրջակայքում բնակվող ժողովուրդների շրջանում կատարած ծառայությունը ոգևորիչ օրինակ են եղել հետագա սերունդների քրիստոնեական առաքելությունների համար:

Պողոսը տարբերում էր աստվածաշնչյան ճշմարտությունը հրեական մշակույթից, որտեղ քաղաքացիական, ծիսական ու բարոյական օրենքներն այնքան ուժեղ էին միախառնվել կյանքի հետ, որ դժվար էր հրեական սովորույթները տարբերել այն բանից, ինչն անհրաժեշտ է Աստծո լուր համարել բոլոր ժողովուրդների համար:

Այս շաբաթ մենք կմտորենք այն մարդու մասին, ով, եթե չհաշվենք Հիսուսին, Նոր Կտակարանի ամենագլխավոր հերոսն է:

Միաշաբթի **Սեպտեմբերի 6**

Տարսոնցի Սողոսը

Սողոսը ծնվել էր Տարսոնում՝ կարևոր առևտրային մի քաղաքում, որը գտնվում էր Սիրիայի և Արևմտյան Ասիայի միջև ընկած ճանապարհի վրա (Գործք առաքելոց 22.3): Տարսոնը արդյունաբերության և կրթության բազմամշակույթ կենտրոն էր, ինչպես նաև, կարճ ժամանակով, Հռոմում ամենահայտնի հռետոր և սենատոր Ցիցերոնի տունը:

Սողոսի ծնողները պատկանում էին հրեական սփյուռքին (նրանք, ովքեր չէին բնակվում Իսրայելում)՝ Բենիամինի ցեղից: Նրան ծնված ժամանակ տվել էին Սողոս անունը (եբր.՝ *sha'ul*, որ նշանակում է «խնդրված»): Սակայն հեթանոսների մեջ միսիոներական գործունության սկզբում (Հռոմեացիս 13.9) նա վերցրեց Պողոս անունը (լատիներեն *Paulus*՝ մի հայտնի հռոմեական ընտանիքի անունը): Երբ Պողոսը փարիսեցի էր, նա կին ուներ, բայց մենք ոչինչ չգիտենք դրա մասին: Իրականում մենք շատ բան չգիտենք նրա ընտանիքի մասին, թեև Աստվածաշնչում հանդիպում է հիշատակում Պողոսի քրոջ և քրոջորդու մասին (Գործք առաքելոց 23.16): Նաև Պողոսը հռոմեական քաղաքացի էր (Գործք առաքելոց 22.25-28):

Հավանական է, որ Պողոսը մինչև տասներկու տարեկանը սովորել էր Տարսոնի ժողովարանում, հետագայում ռաբբիական ուսուցում էր անցել Երուսաղեմում՝ հռչակավոր ռաբբին (պատվավոր կոչում, որ նշանակում է «մեր ուսուցիչ») Գամաղիելի մոտ: Ինչպես և հրեա տղամարդկանց մեծ մասը, նա արհեստ էր սովորել, տվյալ դեպքում՝ վրանագործություն:

Ինչպես նախկինում արդեն ասվել է, Պողոսը փարիսեցի էր (Փիլիպեցիս 3.5): Փարիսեցիները (այդ բառը նշանակում է «առանձնացած») պնդում էին, որ Մովսեսի գրքերում գրի առնված Աստծո օրենքները և նրանք, որ փոխանցվում էին բանավոր կերպով, պարտադիր են հրեաների համար: Նրանց բացարձակ հայրենասիրությունը և հրեական օրենքներին մանրակրկիտ ենթարկվելը մյուս հրեաների կողմից ընկալվում էին որպես կեղծավորություն և դատապարտվում էին նրանց կողմից: Սակայն Պողոսը չէր թաքցնում

այն փաստը, որ ինքն ու իր հայրը փարիսեցիներ էին (Գործք առաքելոց 23.6):

Պողոսի փարիսեցիական կրթությունը կարևոր տարր դարձավ հաջող միսիոներական աշխատանքի մեջ՝ ինչպես հրեաների, այնպես էլ հեթանոսների շրջանում: Այն նրա համար ապահովեց Հին Կտակարանի՝ Սուրբ Գրքի՝ վաղ քրիստոնյաներին մատչելի միակ գրքի, մանրամասն գիտելիքներով: Նա նաև ծանոթացավ հինկտակարանյան օրենքների գրավոր լրացումներին և շարադրանքներին: Այդպիսով, Պողոսն ամենաուսյալ առաքյալն էր՝ ընդունակ տարբերելու հավերժական, Սուրբ Գրքի վրա հիմնված ճշմարտությունը և հրեական մշակութային սովորությունները, որոնք ծագել էին հետագայում, պարտադիր չէին և կարող էին չկատարվել հեթանոս ազգերից՝ Հիսուսի հետևորդների կողմից: Ինչպես մենք տեսանք, այս հարցը վաղ եկեղեցում ամենակարևորներից էր: Եվ այսօր էլ մշակութաբանական հարցերը ոչ սակավ կարևոր դեր են խաղում եկեղեցում:

Ձեր քրիստոնեական հավատալիքներից որո՞նք են առավել սուր կերպով հակադրվում ձեզ շրջապատող մշակութային միջավայրին: Դուք ինչպե՞ս եք հաղթահարում հակադրությունները՝ փոխզիջման չգնալով այն բանի հետ, ինչին անհնար է համաձայնել:

Երկուշաբթի **Սեպտեմբերի 7**

Պողոսը՝ որպես անձնավորություն

Անձնական հատկանիշները անհատապես որոշվող արձագանքներ են շրջակա միջավայրին՝ տանը, աշխատանքի վայրում, հարևանների կամ բարեկամների մեջ: Բնավորությունը բնութագրերի, հատկանիշների և ընդունակությունների համադրություն է, որոնք կազմում են մարդու անձը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 9.1, Փիլիպեցիս 3.6,8, Ա Կորնթացիս 15.9,10, Ա Տիմոթեոս 1.16, Գաղատացիս 1.14 և Բ Կորնթացիս 11.23-33-ը: Այս տեքստերն ի՞նչ են ասում Պողոսի բնավորության և անձի մասին:

_____

_____

_____

_____

Պողոսը նախանձախնդիր և լուսավորյալ մարդ էր: Իր երկրորդ ծնունդից առաջ նա այդ նախանձախնդրությունն օգտագործում էր վաղ եկեղեցուն հալածելու համար: Նա հավանություն էր տալիս Ստեփանոսի քարկոծմանը (Գործք առաքելոց 7.58), նախաձեռնություն դրսևորեց՝ բանտեր ուղարկելով և՛ տղամարդկանց, և՛ կանանց (Գործք առաքելոց 8.3), մահվան սպառնալիքներ էր արձակում աշակերտների հասցեին (Գործք առաքելոց 9.1) և կազմակերպում էր հարձակումներ այլ երկրների քրիստոնյաների վրա (Գործք առաքելոց 9.2, Գաղատացիս 1.13):

Միևնույն ժամանակ մենք կարող ենք տեսնել, որ նա իր նախանձախնդրությունն ու խանդավառությունն օգտագործում էր բարի գործի համար՝ իր կյանքը նվիրելով Ավետարանի քարոզին՝ չնայած անհավատալի դժվարություններին ու խնդիրներին: Այն, ինչ արեց Պողոսը, կարող էր անել միայն այն մարդը, ով լիովին նվիրված է այն բանին, ինչին հավատում է: Ու թեև հանուն Քրիստոսի նա կորցրեց իր կշիռը, նա այդ ամենը «աղբ» էր համարում: Այս բառը հունարենում բառացիորեն նշանակում է «անօգուտ»: Պողոսը հասկանում էր, թե ինչն է կյանքում կարևոր, ինչը՝ ոչ:

Պողոսը նաև համեստ մարդ էր: Անկասկած, նա մեղավորության զգացում ուներ քրիստոնյաներին հալածելու համար, և այդ պատճառով իրեն անարժան էր համարում իր բարձր կոչմանը: Հնարավոր է՝ Քրիստոսի արդարության՝ որպես փրկության միակ հույսի քարոզիչ լինելով, նա գիտեր, որ մեղավոր է՝ ի հակադրություն սուրբ Աստծո: Այդ իմացությունը բավարար էր, որպեսզի իրեն համարեր Աստծո կողմից փրկված և Նրան երախտապարտ համեստ մարդ:

«Եվ պարզվում է, որ բավարար է Աստծո փառքի լոկ մի շողը, հոգու խորքը ներթափանցած Քրիստոսի մաքրության մեկ լուսարձակումը, որպեսզի բնավորության մեջ եղած ցանկացած բիծ դարձնի տառապալիորեն նկատելի, որպեսզի ի հայտ բերի թերություններն ու արատները: Մեղավորի առջև բացվում է նրա ցանկությունների արատավոր բնույթը, սրտի անհավատարմությունը, շուրթերի անմաքրությունը» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 29):

Մեզանից ոչ ոք պաշտպանված չէ հպարտությունից: Խաչի հանդեպ վերաբերմունքն ու նրա նշանակությունն ինչպե՞ս կարող են մարդուն բժշկել այդ մեղքից:

Սողոսից դեպի Պողոս

Պողոսի դարձի գալու պատմությունը կարդացե՛ք Գործք առաքելոց 9.1-22-ում: Այդ փորձառությունն ինչպե՞ս է կապված նրա միսիոներական կանչվածության հետ: Տե՛ս նաև Գործք առաքելոց 26.16-18-ը: _____

_____

_____

Սկզբից ևեթ պարզ էր, որ Տերը ցանկանում էր Պողոսին օգտագործել ինչպես հրեաներին, այնպես էլ հեթանոսներին քարոզելու համար: Պողոսի՝ որպես միսիոներ և աստվածաբան նախապատրաստության շրջանի ոչ մի իրադարձություն իր կարևորությամբ չի կարող համեմատվել նրա դարձի գալու հետ: Եվ իսկապես, հաճախ իր վկայության ժամանակ նա խոսում էր այդ իրադարձության մասին:

«Բայց վե՛ր կաց և ոտքերիդ վրա կանգնի՛ր, որովհետև նրա համար երևաց քեզ, որ քեզ ձեռքս առնեմ պաշտոնյա և վկա լինելու այն բաներին, որ դու տեսար, և այն բաներին, որոնցով պիտի երևամ քեզ» (Գործք առաքելոց 26.16): Պողոսը չէր կարող քարոզել կամ սովորեցնել մի բան, ինչ չգիտեր: Ընդհակառակը, նա կիսվում էր սեփական փորձառություններով, խոսում էր Տիրոջը ճանաչելու մասին՝ միշտ Աստծո Խոսքին համահունչ (տե՛ս Հռոմեացիս 1.1,2):

Կարդացե՛ք Գործք առաքելոց 26.18-ը: Ինչպիսի՞ն պետք է լիներ Պողոսի աշխատանքի արդյունքը: ____

_____

_____

_____

Ահա՛ իսկական միսիոներական աշխատանքի հինգ արդյունք.

1. Բացել մարդկանց աչքերը: Հայր Աստծուն և Հիսուսին ներկայացնել որպես իրական, գոյություն ունեցող, գործող և մեղավորներին դիմող:
2. Մեղավոր մարդկանց հետ դարձնել խավարից դեպի լույսը, անտարբերությունից դեպի գիտելիքներ, ինչը հանդիսանում է Ավետարանի կենտրոնական թեման (տե՛ս Ղուկաս 1.78,79):
3. Նրանց սատանայի իշխանությունից դարձնել դեպի Աստված:
4. Ստանալ մեղքերի թողություն: Մեղքի հիմնախնդիրը լուծում ունի՝ անկախ ռասայից, սեռից կամ ազգությունից:

Եթե ձեզ խնդրեն Հիսուսի հետ կիսվել ձեր անձնական փորձառությամբ, պատմել Նրա մասին, դուք ի՞նչ կպատմեք:

Չորեքշաբթի **Սեպտեմբերի 9**

Պողոսը միսիոներական դաշտում

«Երուսաղեմից սկսած պտույտ տալով մինչև Լյուրիկացիների կողմերը Քրիստոսի ավետարանով լցրել եմ» (Հռոմեացիս 15.19): Ցանկացած տեսակի միսիոներական աշխատանքի ո՞ր հիմնարար պարագան կարելի է գտնել այս համարում (տե՛ս նաև Ա Կորնթացիս 1.23, 2.2, Գաղատացիս 6.14, Փիլիպեցիս 1.15-18: _____

_____

_____

Կարելի է խիզախորեն պնդել, որ միսիոներական աշխատանքում Պողոսի բոլոր ջանքերը հանգում էին մեկ բանի՝ որտեղ էլ նա գտնվեր, նրա լուրի կենտրոնական թեման Քրիստոսն էր և Նրա խաչը: Այսպիսով, նա հավատարիմ էր այն բանին, ինչին նրան կանչել էր Տերն ամենասկզբում՝ քարոզելու Հիսուսի մասին: Առաքելության համար լուրն այսօր ակնհայտ է. ինչ էլ մենք քարոզենք և ինչ էլ սովորեցնենք (որպես ադվենտիստներ՝ մենք շատ լույս ենք ստացել, որն անհրաժեշտ է փոխանցել այս աշխարհին), Քրիստոսի և Նրա խաչելության լուրը պետք է լինեն մեր ողջ միսիոներական աշխատանքի կենտրոնական թեման:

Պողոսը, սակայն, Քրիստոսի մասին լուրը ներկայացնում էր ոչ որպես ինչ-որ վերացական ճշմարտություն, որը ոչ մի կերպ կապված չէր տեղական համայնքի կյանքի հետ: Նրա աշխատանքի կարևոր մասը եկեղեցիների վերածնունդն էր, քրիստոնեական համայնքների հիմնադրումն ամենուրեք, ուր նա միայն կարող էր հասնել: Իրականում նրա աշխատանքը կարելի է անվանել «եկեղեցիներ ցանել»:

Պողոսի միսիոներական աշխատանքի ևս մեկ տարր գոյություն ունի:

Կարդացե՛ք Կողոսացիս 1.28-ը: Այստեղ ինչի՞ մասին է խոսում Պողոսը, ավետարանչությա՞ն, թե՞ աշակերտության:_____

_____

Եթե մենք կարդանք Պողոսի ուղերձները, կհայտնաբերենք, որ դրանք միշտ չէ, որ զուտ ավետարանչական են, գոնե այն իմաստով, որով մենք սովորել ենք օգտագործել այդ եզրույթը, այսինքն՝ դրանք գրված չեն նրանց համար, ովքեր եկեղեցու անդամ չեն: Ընդհակառակը, նրա շատ ուղերձներ հասցեագրված են եկեղեցական համայնքներին: Այլ խոսքերով՝ Պողոսի միսիոներական աշխատանքը ներառում էր նաև հովվական խնամակալությունը, եկեղեցու անդամների հրահանգավորումն ու ուսուցումը:

Այսպիսով, մենք կարող ենք առնվազն երեք կենտրոնական տարր տեսնել Պողոսի միսիոներական ծառայության մեջ. Քրիստոսի մասին հռչակելը, եկեղեցիների ստեղծումն ու գոյություն ունեցող համայնքների ուսուցումը:

Մտաբերե՛ք ձեր վերջին վկայությունը որևէ մարդու: Քրիստոսը եղե՞լ է ձեր լուրի կենտրոնում: Դուք ինչպե՞ս կարող եք վստահ լինել, որ նա միշտ կենտրոնական տեղ կզբաղեցնի ձեր վկայության մեջ:

Հինգշաբթի **Սեպտեմբերի 10**

Առաքելությունն ու բազմամշակութայնությունը

«Բազմամշակութայնությունը» համեմատաբար նոր եզրույթ է, որն առաջին անգամ ի հայտ է եկել 1960 թվականի անգլիական Օքսֆորդյան բառարանի տպագիր հրատարակություններում: Անցյալ դարերում ապրած մարդկանց համար գոյություն ունեին մարդկության միայն երկու տարատեսակ՝ մենք և նրանք, մեր ազգն ու այլ ազգերը: Հույները մնացած բոլոր ժողովուրդներին «բարբարոսներ» էին անվանում: Իսկ հրեաները բոլոր մյուսներին անվանում էին հեթանոսներ:

Ինչպես մենք արդեն տեսանք, հեթանոսների շրջանում առաքելության հաջողությունը վաղ եկեղեցուն բերեց հրեաների և հեթանոսների բաժանման: Հարցն այն էր, թե հեթանոսը կարո՞ղ է քրիստոնյա դառնալ, եթե նա չի դարձել հրեա:

Կարդացե՛ք Գաղատացիս 2.1-17-ը: Ի՞նչ տեղի ունեցավ, և ինչպե՞ս է այդ հատվածը պատկերում «բազմամշակութայնության» խնդիրը միսիոներական աշխատանքում: _

_____

_____

«Երբ Պետրոսը հետագայում այցելեց Անտիոք, նա շատերի վստահությունը նվաճեց դարձի եկած հեթանոսների հանդեպ իր ողջամիտ վերաբերմունքով, քանի որ գործում էր այն լույսին համապատասխան, որ նրան ուղարկեց երկինքը: Նա այնքան էր ազատվել իր նախապաշարմունքներից, որ անգամ ուտում էր հեթանոսների հետ մի սեղանից: Բայց երբ Երուսաղեմից եկան ոմանք, ովքեր հոգ էին տանում ծիսական օրենքի մասին, Պետրոսը անշրջահայաց կերպով փոխեց իր մոտեցումը հեթանոսներից դարձի եկածների հանդեպ: «Եվ նրա հետ ուրիշ Հրեաներն էլ կեղծավորություն արին, մինչև որ Բառնաբասն էլ ծռվեց նրանց կեղծավորությունով» (Գաղատացիս 2.13): Այս թուլությունը, որ դրսևորվեց եկեղեցու ղեկավարների կողմից, ում ամենքը հարգում և սիրում էին, թյուր տպավորություն թողեց հեթանոսներից դարձի եկածների վրա: Եկեղեցուն բաժանում էր սպառնում» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 197,198):

Պողոսը չհամաձայնեց Պետրոսի կարծիքի հետ և հստակորեն սահմանեց, թե ինչպիսին պետք է լինի բազմամշակութային եկեղեցին: Քրիստոնեությունն ընդունելու համար հեթանոսներից դարձի եկածները չպետք է հրեա դառնային: Պողոսի բարդ անցյալը՝ որպես նվիրյալ փարիսեցի, ռաբբի Գամաղիելի աշակերտ, հռոմեական քաղաքացի, կրոնական մոլեռանդ - ֆունդամենտալիստ և, վերջապես, Հիսուս Քրիստոսի դարձի եկած աշակերտ, նրան թույլ տվեց տարբերել Աստծո հավիտենական, անփոփոխ ճշմարտությունները դրանց ժամանակավոր մշակութային և կրոնական դրսևորումներից:

Դուք ինչպե՞ս եք որոշում, թե ինչն է կարևոր ձեր հավատում, ինչն է մշակութային, սոցիալական կամ անգամ անձնական նախապատվություն:

Ուրբաթ Սեպտեմբերի 11

Հետագա ուսումնասիրության համար.

«Ամենքին ամեն բան եղա, որ ինչևիցե մի քանիսին ապրեցնեմ: Այս անում եմ ավետարանի համար, որ նրան կցորդ լինեմ» (Ա Կորնթացիս 9.22,23):

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 9.19-23: Ժամանակակից միսիոլոգիայի մեջ այս հատվածում օգտագործվող մեթոդների վերաբերյալ կիրառվում է «կոնտեքստուալացում» եզրույթը: Այն բնորոշվում է որպես «Ավետարանը խոսքով ու գործով միավորելու և եկեղեցի հիմ-

նելու փորձ՝ մարդկանց տեսական մշակութային համատեքստի շրջանակներում ընդունված մեթոդների օգնությամբ՝ քրիստոնեությունը ներկայացնելով որպես պատասխան ամենաէական կարիքների համար՝ հաշվի առնելով նրանց աշխարհայացքը և այդպիսով մարդկանց թույլ տալով հետևել Քրիստոսին՝ առանց սեփական մշակույթի սահմաններից դուրս գալու» (Դարել Լ. Ուայթման, «Կոնտեքստուալացում. տեսություն, տարաձայնություններ և խնդիրներ», միսիոներական հետազոտության միջազգային տեղեկագիր, հատոր 21, (1997 թ. հունվար, 2):

«Հրեա քրիստոնյաները, ովքեր ապրում էին տաճարի անմիջական հարևանությամբ, բնականաբար, թանկ էին գնահատում այն արտոնությունները, որ ունեին իրենք՝ որպես ժողովուրդ: Տեսնելով, որ քրիստոնեական եկեղեցին հեռանում է հուդայականության ծեսերից և ավանդույթներից, իսկ հրեական սովորույթներին պարուրող սրբությունը շուտով կարող է վերանալ նոր հավատի լույսի ներքո, շատերը դժգոհեցին Պողոսից, որովհետև հենց նա էր այդ փոփոխությունների գլխավոր մեղավորը: Ոմանք պնդում էին, որ պարտադիր է ծիսական օրենքների կատարումը և անբարյացակամորեն էին Պողոսին վերաբերվում՝ համարելով, որ նա անտեսում է իրենց» (Է. Ուայթ, Գործք առաքելոց 197):

Հարցեր քննարկման համար

1. Կարդացե՛ք Ա Կորնթացիս 9.20-ը: Մենք ինչպե՞ս պետք է վերանայենք մեր անձնական ծառայությունը, որպեսզի լավագույնս օգտագործվեն վկայության հնարավորությունները:
2. Չնայած Պողոսի մեղավոր և անգամ ամոթալի անցյալին՝ Աստված ներեց նրան և օգտագործեց որպես Իր ընտրյալ ծառայող: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ներել ինքներս մեզ՝ անցյալի սխալների համար և ընդունելով Քրիստոսի արդարությունը՝ որպես մեր սեփականը՝ առավել ակտիվորեն մասնակցել Նրան ծառայելուն:

Դաս 12
Սեպտեմբերի 12-18

ՊՈՂՈՍ. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼՈՒՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Ա Կորնթացիս 1.22-24, Ա Տիմոթեոս 6.12, Բ Տիմոթեոս 4.7, Ա Կորնթացիս 15.12-22, Գործք առաքելոց 15.38-41:

Հիշելու համարը.
«Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մի բան կա, հետևի բաները մոռանալով՝ դեպի առաջին լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպոս 3.13,14):

Ներկայացնելով հինկտակարանյան մարգարեական լուրերը, հրեական պատմությունը, Հիսուսի կյանքն ու ուսմունքը՝ Պողոսը շարադրում է փրկության պատմության քրիստոնեական հայեցակարգը, որի կենտրոնում գտնվում է Քրիստոսի կյանքը, մահն ու հարությունը: Լինելով ինչպես հրեական, այնպես էլ հունահռոմեական հասարակության սան՝ Պողոսը բավականաչափ խորաթափանցություն ուներ, որը նրան թույլ էր տալիս Ավետարանը տարբերել հրեաների՝ բարդ քաղաքացիական, կրոնական և բարոյական սովորություններից և այն առավել մատչելի դարձնել բազմամշակույթ աշխարհի համար:

Հավատացյալներին հղված Պողոսի բոլոր տասներեք ուղերձները խոսում են այն մասին, թե ինչպես կարելի է հավատը կիրառել առօրյա կյանքում: Առաքյալը շոշափում է ինչպես դավանաբական, այնպես էլ գործնական հարցեր: Պողոսը խորհուրդ էր տալիս, ոգևորում և հանձնարարականներ տալիս՝ կապված անձնական քրիստոնեական հավատի, փոխհարաբերությունների և եկեղեցական կյանքին վերաբերող հարցերի հետ: Սակայն նրա ուղերձների գլխավոր թեման *Հիսուս Քրիստոսն էր, և այն էլ՝ խաչված* (Ա Կորնթացիս 2.2):

Պողոսը ոչ միայն ուղերձների հեղինակ էր: Նա նաև հայտնի է՝ որպես առաքյալ-միսիոներ, ով Ավետարանը հռչակում էր Սիրիայից մինչև Իտալիա, հնարավոր է՝ անգամ մինչև Իսպանիա: Տասը տար-

վա ընթացքում Պողոսը եկեղեցիներ է հիմնադրել Հռոմեական կայսրության չորս նահանգներում:

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք Պողոսի առաքելությունն ու լուրը:

Միաշաբթի **Սեպտեմբերի 13**

Հույներն ու հրեաները

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 1.22-24-ը: Այս տեքստերն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ, որ տարբեր մարդիկ տարբեր կերպ են վերաբերվում ճշմարտությանը: Մենք ի՞նչ կարող ենք սովորել այդ հատվածից, ինչը կօգնի մեզ՝ մարդկանց տարբեր խմբերի վկայության մեջ: _____

_____

_____

Եգիպտոսի հրեաների ելքի ժամանակ Աստված հայտնեց Իր հոգատարությունը ժողովրդի վերաբերյալ՝ հրաշքներ և նշաններ գործելով: Դրանից հետո հրեաների յուրաքանչյուր սերունդ սպասում էր, որ Աստծո ցանկացած նոր լրաբեր պետք է իրեն դրսևորի հատկապես հրաշքների միջոցով:

Ինչ վերաբերում է հույներին, ապա նրանք, ընդհակառակը, իրենց հավատը կառուցում էին ռացիոնալ հիմքի վրա՝ սեփական փիլիսոփայական ու գիտական ժառանգությանը համապատասխան: Այս հիմքը պետք է բավարարեր մարդկային «իմաստության» պահանջներին:

Պողոսը չեր հերքում իր նպատակային լսարանի մշակութային և հոգևոր ժառանգությունը, այլ այն օգտագործում էր որպես խաչված Քրիստոսի մասին քարոզի նախաբան: Նրանք, ովքեր հրաշքներ և նշաններ էին որոնում, դրանք գտնում էին Հիսուսի կյանքի ու ծառայության և վաղ եկեղեցու մեջ: Տրամաբանական ճշգրտության և ռացիոնալության կարիք ունեցողները դրանք տեսնում էին Ավետարանի լուրի օգտին Պողոսի ներկայացրած փաստարկներում: Երկու տեսակի մարդիկ էլ միևնույն բանի կարիքն ունեին. ճանաչել հարություն առած Քրիստոսին և «նրա հարության զորությունը» (Փիլիպեցիս 3.10): Թե Պողոսն ինչ կերպ էր փոխանցում այդ գիտելիքները՝ կախված էր այն մարդկանցից, ում նա վկայում էր:

Երբ Պողոսը քարոզում էր հրեա ունկնդիրների համար, նա իր քարոզը հիմնում էր Իսրայելի պատմության վրա՝ ցույց տալով Քրիստոսի

կապը Դավթի հետ և ուշադրություն դարձնելով հինկտակարանյան մարգարեություններին, որոնք մատնացույց էին անում Քրիստոսին և կանխասում էին Նրա խաչելությունն ու հարությունը (Գործք առաքելոց 13.16-41): Այդպիսով, նա իր խոսքն սկսում էր այն բանից, ինչը ծանոթ էր իր ունկնդիրներին, ինչ նրանք պատվում էին և ինչին հավատում էին: Հետագայում Պողոսը նրանց ուշադրությունը հրավիրում էր Քրիստոսի վրա:

Հեթանոսներին քարոզելիս Պողոսը խոսում էր Աստծո մասին՝ որպես Արարիչ և Դատավոր, այն մասին, թե ինչպես մեղքը մտավ աշխարհ, Հիսուս Քրիստոսի միջոցով փրկության մասին (Գործք առաքելոց 14.15-17, 17.22-31): Այս մարդկանց հետ շփման մեջ Պողոսն ստիպված էր իր քարոզն սկսել միանգամայն այլ թեմաներից, քան հրեաների (կամ հուդայականությանը ծանոթ հեթանոսների) դեպքում: Սակայն և՛ մեկ, և՛ մյուս դեպքերում նպատակը մեկն էր՝ նրանց բերել Քրիստոսի մոտ:

Խորհեցե՛ք ձեր հավատի մասին: Ինչի՞ վրա է հիմնված այն: Դուք ի՞նչ փաստարկներ ունեք ձեր հավատի օգտին: Ձեր փաստարկներն ի՞նչ կերպ կարող են տարբերվել այլ մարդկանց փաստարկներից և ինչո՞ւ է այդքան կարևոր այդ փաստարկները ճանաչելը:

Երկուշաբթի Սեպտեմբերի 14

Զինվորներն ու մարզիկները

Տիրապետելով հաղորդակցության հնարքներին՝ Պողոսն իր միսիոներական աշխատանքի մեջ՝ անհասկանալի բաները բացատրելու համար օգտագործում էր ծանոթ կերպարներ: Որպես այլաբանություններ՝ Պողոսն ամենից հաճախ օգտագործում էր իր ունկնդիրների կյանքից երկու ծանոթ պատկեր՝ աթլետներին՝ խաղերի ժամանակ և ամենուր ներկա հռոմեական զինվորներին:

Սպորտային խաղերի հանդեպ հետաքրքրությունը Պողոսի ժամանակներում նույնքան մեծ էր, որքան և այսօր: Հին հույները դարեր շարունակ օլիմպիական մրցումներ էին անցկացնում Հունաստանի տարբեր մասերում: Հռոմեացիները ժառանգել էին աթլետիկ խաղերի անցկացման պրակտիկան և հետագայում կատարելագործեցին դրանք: Մրցումների ամենաժողովրդական տեսակը վազքն էր, իսկ վազքի տեսակներից մեկը տղամարդկանց երկար տարա-

ծության վազքն էր՝ լիակատար զինվորական սպառազինությամբ: Սպորտի ևս մեկ հանրահայտ տեսակ էր ըմբշամարտը: Աթլետները ջանադրաբար մարզվում էին, իսկ հաղթողներին լավ պարգևատրում էին: Ընդ որում, էթնիկ պատկանելությունը, ազգությունը կամ սոցիալական կարգավիճակը մեծ նշանակություն չունեին, քանի որ նախապատվությունը տրվում էր դիմացկունությանն ու ֆիզիկական տվյալներին:

Քրիստոնեական կյանքի համար ի՞նչ հիմնական դասեր կարող են գտնել ընթերցողները հետևյալ հատվածներում: Ա Կորնթացիս 9.24-27, Գաղատացիս 5.7, Ա Տիմոթեոս 6.12, Բ Տիմոթեոս 2.5: _____

_____

_____

Սկսած Օգոստոսից՝ հռոմեական կայսրերը բանակում ժամանակավոր ծառայությունը փոխարինեցին մշտական զինվորական ծառայությամբ՝ զորքեր տեղադրելով Հռոմեական կայսրության շուրջը: Տիրակալները փոխեցին զրահների և զենքերի ձևը, դրանք համապատասխանեցրին ստանդարտին: Պողոսի ժամանակներում զինվորագրում էին տարբեր էթնիկ և ազգային խմբերի պատկանող մարդկանց, ինչպես Հռոմի քաղաքացիների, այնպես էլ այլազգիների: Վարձատրություն սպասելով իրենց ծառայության ավարտին՝ զինվորները հավատարմության երդում էին տալիս կառավարող կայսերը, ով պատերազմի ժամանակ անձամբ էր նրանց առաջնորդում մարտի:

Զինվորի ծառայության և քրիստոնեական կյանքի միջև ի՞նչ համեմատություններ է բերում Պողոսը հետևյալ տեքստերում: Բ Կորնթացիս 10.4,5, Եփեսացիս 6.10-18, Ա Տիմոթեոս 6.12, Բ Տիմոթեոս 2.3,4: _____

_____

_____

Իր ուղերձում, որը, հնարավոր է, վերջինն էր, Պողոսը իր կյանքը՝ որպես քրիստոնեական առաքելություն, համեմատում է միաժամանակ և՛ զինվորի ծառայության, և՛ աթլետի կյանքի հետ. «Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի (անգլերեն թարգմանության մեջ՝ վազքը ավարտեցի – ծան. թարգմ.), հավատը պահեցի» (Բ Տիմոթեոս 4.7):

Ո՞ր դեպքերում է հավատը պատերազմ, ո՞ր դեպքերում՝ վազք: Դուք զգացե՞լ եք երկու փոխաբերությունների իրա-

կան բնույթը ձեր քրիստոնեական կյանքում: Ո՞ր փոխաբերությունն է ավելի լավ նկարագրում ձեր սեփական փորձառությունը և ինչո՞ւ:

Երեքշաբթի **Սեպտեմբերի 15**

Պողոսը և օրենքը

«Արդ մի՞թե օրենքը խափանում ենք հավատքով. քավ լիցի, այլ օրենքը հաստատում ենք» (Հռոմեացիս 3.31): Այստեղ ո՞ր օրենքի մասին է խոսում Պողոսը:

Պողոսի ուղերձներում «օրենք» բառը հանդիպում է մոտ 130 անգամ, իսկ Գործք առաքելոց գրքում՝ մոտ 20 անգամ: Պողոսը ջանում էր իր ունկնդիրներին և ընթերցողներին, անկախ նրանց մշակութային առանձնահատկություններից, բերել այն բանի ըմբռնմանը, որ «օրենք» բառը մի քանի նշանակություն ունի, սա հատկապես վերաբերում է հրեաներին: Այնպիսի օրենքները, ինչպիսին Տասը պատվիրաններն են, արդիական են մնում բոլոր ժամանակների մարդկանց համար: Բայց օրենքների այլ տեսակները, որոնք գրի են առնված Հին Կտակարանում և ընդունելի են հրեական մշակույթի համար, անհրաժեշտ չեն համարվում քրիստոնյաների համար:

Իր ուղերձներում առաքյալը մեծապես օգտագործում է «օրենք» եզրույթը՝ խոսելով կրոնական ծիսակատարությունների կանոնների, քաղաքացիական օրենքի, առողջ կենսակերպի սկզբունքների և բարոյական օրենքների մասին: Նա խոսում էր «օրենքի տակ» լինելու (Հռոմեացիս 3.19) և դրանից ազատվելու մասին (Հռոմեացիս 7.6): Նա նկարագրում էր «մեղքի օրենքը» (Հռոմեացիս 7.25), բայց նաև ասում էր, որ «օրենքը սուրբ է» (Հռեոմեացիս 7.12): Պողոսը հիշատակում է «Մովսեսի օրենքի» մասին (Ա Կորնթացիս 9.9) և «Աստծո օրենքի» մասին» (Հռոմեացիս 7.25): Հրեական մշակույթի հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող մարդու համար այս արտահայտությունները կարող են հակասական թվալ: Սակայն ցանկացած հրեայի համատեքստից հասկանալի է, թե որ օրենքի մասին է խոսվում:

Կարդացե՛ք Հռոմեացիս 13.8-10, Հռոմեացիս 2.21-24, Ա Կորնթացիս 7.19, Եփեսացիս 4.25,28, 5.3, 6.2: Այս տեքստերն ինչպե՞ս են օգնում մեզ՝ հասկանալ, որ Աստծո բարո-

յական Օրենքը՝ Տասը պատվիրանները, չեղյալ չեն համարվել խաչի վրա: _____

_____

_____

Պողոսը գիտակցում էր, որ ծիսական օրենքները, որոնք մանրամասնորեն նկարագրում էին, թե ինչպես պետք է մոտենալ Աստծուն՝ քահանաների, սրբարանի և զոհերի միջոցով, իրենց ուժը կորցրել էին Քրիստոսի խաչելությունից հետո: Դրանք կատարեցին իրենց նշանակությունը, և այլևս դրանց կարիքը չկար: (Այդ փաստը առավել ակներև դարձավ տաճարի ավերումից հետո):

Սակայն Տասը պատվիրաններում արտահայտված բարոյական Օրենքի հարցը այլ է: Իր ուղերձներում Պողոսը մեջբերում է որոշ պատվիրաններ և հիմնվում է մյուսների վրա՝ որպես համընդհանուր բարոյական պահանջներ բոլոր մարդկանց համար՝ ինչպես հրեաների, այնպես էլ հեթանոսների: Արտահայտվելով մեղքի դեմ՝ Պողոսը ոչ մի դեպքում չի նվազեցնում պատվիրանների նշանակությունը, որոնք խոսում են այն մասին, թե ինչ է մեղքը: Դա նույն բանն է, թե մարդուն ասել արագության սափմանափակումների մասին և միևնույն ժամանակ պնդել, որ արագության սահմանափակման օրենքները հարկավոր չեն:

Չորեքշաբթի **Սեպտեմբերի 16**

Խաչը և հարությունը

«Որովհետև միտքս չէի դրած՝ մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին, և այն էլ խաչվածին» (Ա Կորնթացիս 2.2):

Անկասկած, Քրիստոսի խաչը գտնվում էր Պողոսի ուսմունքի և կյանքի կենտրոնում: Բայց առաքյալը խաչի մասին քարոզում էր ոչ թե առանձին, այլ ուրիշ թեմաների համատեքստում: Այդ թեմաներից մեկը հարությունն էր, առանց որի խաչի մասին ուսմունքը իմաստ չունի:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 15.12-22-ը: Այս տեքստերն ի՞նչ են ասում Ավետարանի համար Քրիստոսի մահվան և հարության կարևորության մասին: Ինչո՞ւ այդ տեքստերը ճիշտ հասկանալ կարելի է միայն այն դեպքում, եթե գիտես, որ մահը քուն է: Չէ՞ որ եթե Քրիստոսում մահացած-

ներն արդեն երկնքում են, ապա այն, ինչի մասին այստեղ խոսում է Պողոսը, կորցնում է իր իմաստը: _____

_____

_____

Ցավոք, քրիստոնյաների մեծամասնությունը, ինչպես նաև ոչ քրիստոնյաները հավատում են մարդկային հոգու անմահությանը: Սակայն Պողոսը առարկում է այդ ուսմունքի դեմ և բազմիցս կրկնում է.

1. Միայն Աստված է անմահ (Ա Տիմոթեոս 6.16):
2. Անմահությունն Աստծո պարգևն է փրկվածներին (Ա Թեսաղոնիկեցիս 4.16):
3. Մահը քուն է, որը շարունակվում է մինչև Քրիստոսի վերադարձը (Ա Թեսաղոնիկեցիս 4.13-15, Ա Կորնթացիս 15.6,18,20):

Հոգու անմահության հավատը հիմք է տվել բազում այնպիսի կեղծ ուսմունքների համար, ինչպիսիք են՝ վերամարմնավորումը, սրբերին աղոթելը, նախնիների պաշտամունքը, դժոխքում հավիտենական տանջանքների ուսմունքը և Նոր դարի շատ պրակտիկաներ, հոգի կանչելը և աստղաբանական պրոյեկցիան: Մահվան մասին աստվածաշնչյան ուսմունքի ճշմարիտ ըմբռնումը այդ խաբեություններից պաշտպանվելու միակ միջոցն է: Ցավալի է, որ այս ճշմարտությունը ընդունելուն դեմ են հանդես գալիս բազմաթիվ քրիստոնեական հարանվանություններ:

Մահը փակում է հավատացյալ մարդու աչքերը, և որոշ ժամանակ անց, որը թվում է խավար ու լռություն, նա Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ արթնանում է հավիտենական կյանքի համար: Մեռածների վիճակի մասին ճշմարտությունն ի՞նչ է ասում Աստծո բնավորության մասին:

Հինգշաբթի **Սեպտեմբերի 17**

Աշխատանքը թիմում

Պողոսը ջանադիր ծառայող էր, ուժեղ անձնավորություն և նպատակասլաց մարդ: Այդպիսի մարդիկ կարող են լինել միայնակ, ունենալ սակավաթիվ ընկերներ, բայց շատ երկրպագուներ: Սակայն հաճախ ճանապարհորդությունների ժամանակ Պողոսին երկու կամ երեք գործընկեր էր ուղեկցում: Առնվազն ութ այդպիսի մտերիմ ընկերներ թվարկված են ըստ անունների (Գործք առաքելոց 13.2, 15.22,37,

16.1-3, 19.22, Կողոսացիս 4.7,10,11, Փիլիմոն 24): Դրան կարելի է ավելացնել նաև Պողոսի ողջույնները 24 մարդու, որ մենք գտնում ենք Հռոմեացիս 16-ում, ինչպես նաև ընդհանուր ողջույնները տնեցիներին:

Առաքյալը հավատում էր թիմային աշխատանքին, հատկապես նոր գաղափարների մարմնավորման ժամանակ: Միևնույն ժամանակ նա նաև ընդհարումներ էր ունենում գործընկերների հետ:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 15.38-41-ը: Այստեղ ի՞նչ իրավիճակ է նկարագրված: Մենք ի՞նչ կարող ենք ասել անգամ Տիրոջ համար այդպիսի խոշոր աշխատողների մարդկային հատկանիշների մասին: _____

_____

_____

«Հենց այստեղ Մարկոսը, ընկճված վախից ու հիասթափությունից, ինչ-որ ժամանակ տատանվում էր՝ Աստծո գործին ամբողջությամբ նվիրվելու իր մտադրության մեջ: Սովոր չլինելով զրկանքների՝ նա վախեցավ խոչընդոտներից, երբ դրանց հանդիպեց իր ճանապարհին... Այդ դասալքության պատճառով Պողոսը որոշ ժամանակ անբարեհաճ և անգամ խստորեն էր վերաբերվում Մարկոսին: Իսկ Բառնաբասը, ընդհակառակը, արդարացնում էր նրան՝ հիշատակելով նրա անփորձությունը: Նա բոլորովին չէր ցանկանում, որ Մարկոսը թողնի ծառայությունը, որովհետև նրա մեջ տեսնում էր հատկանիշներ, որոնց շնորհիվ նա կարող էր օգտակար աշխատող դառնալ Տիրոջ դաշտում» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 169, 170):

«Գործք Առաքելոց» գրքում գրի առնված այս հատվածից մենք տեսնում ենք, որ Պողոսն իր գործընկերներից առաքելության ջանադիր կատարում էր ակնկալում անգամ դժվարությունների և վտանգների ժամանակ: Համախոհների թիմում Պողոսը տեսնում էր փոքրացված եկեղեցին: Իր ծառայությամբ նա ցանկանում էր բարի օրինակ ցույց տալ՝ նմանվելու համար: Թիմի անդամների միջև կատարողական հատկանիշները՝ միևնույն ժամանակ սիրո հիման վրա կառուցված, օրինակ դարձան եկեղեցիների համար, որոնք, որպես կանոն, բաղկացած էին ընտանիքներից: Թիմային աշխատանքը նաև բարենպաստ իրավիճակ էր ստեղծում նոր ավետարանիչների և միսիոներների ուսուցանելու համար: Իհարկե, ժամանակի ընթացքում ծագում էին խնդիրներ, ինչպես Հովհաննես Մարկոսի դեպքում:

Կարդացե՛ք Բ Տիմոթեոս 4.11-ը: Ի՞նչ է ասում այս տեքստը հոգևոր աճի և ներման մասին:

Մենք ամենքս սխալվում ենք: Ինչպե՞ս սովորել ներել նրանց, ովքեր ցավ են պատճառել մեզ: Խորհեցե՛ք նաև նրանց մասին, ում ցավ են պատճառել ձեր սխալները: Դուք ինչպե՞ս եք վերականգնել ձեր փոխհարաբերությունները: Իսկ եթե դա դեռ տեղի չի ունեցել, ապա արդյո՞ք այժմ չի հասել այդ անելու ժամանակը:

Ուրբաթ Սեպտեմբերի 18

Հետագա ուսումնասիրության համար

Պողոս առաքյալին կարելի է համեմատել «Թիթեռնիկի էֆեկտի» հետ քաոսի տեսության մեջ, որը հնչում է այսպես. «Կալիֆոռնիայում թիթեռնիկի թևերի թափահարումը փոթորիկ է առաջ բերում Ասիայում»: Պողոսի գործունեությունը՝ որպես գրող և քարոզիչ, օգնեց, որպեսզի հրեական աղանդը, որը տարածված էր Հռոմեական կայսրության սակավ հայտնի մասում, վերածվի համաշխարհային կրոնի: Առաքյալի տասներեք ուղերձներում շարադրված գաղափարները ավելի մեծ ազդեցություն են թողել, քան Հին Հունաստանի ցանկացած այլ գրական ստեղծագործություն:

Հարցեր քննարկման համար

1. Պողոսը նահատակությունից խուսափեց այն բանի շնորհիվ, որ հեռացավ Աթենք՝ հունահռոմեական աշխարհի մտավոր կենտրոն: Քաղաքներն ընդունում էին փախստականներին, այդ թվում նաև քրիստոնյաներին: Բայց առաքյալն այնտեղ էլ ժամանակ չէր կորցնում: Քաղաքային կրոնական հուշարձանները դիտելուց հետո նա խոսեց հրեաների հետ և սկսեց նրանց քարոզել հրապարակում: Կարդացե՛ք Գործք առաքելոց 17.16-31-ը: Ի՞նչ մոտեցում կիրառեց Պողոսն այդ մարդկանց նկատմամբ, և դա ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու, որ անհրաժեշտ է լուրը հարմարեցնել մարդկանց տարբեր խմբերի համար: Միևնույն ժամանակ նկատե՛ք, որ Պողոսը չէր նոսրացնում ճշմարտությունը և փոխզիջման չէր գնում՝ այդ մարդկանց նվաճելու համար: Մյուս մարդկանց

հասնելու մեր փորձերի ժամանակ մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ չենք նսեմացնում գլխավոր ճշմարտությունների նշանակությունը:

2. Ինչո՞ւ է մեռածների վիճակի մասին ուսմունքն այդքան կարևոր: Այս ճշմարտության ըմբռնումն ինչպե՞ս է մեզ պաշտպանում սխալներից ու խաբեությունից: Ի՞նչ կարելի է ասել ձեր մշակույթի մասին: Այդ ճշմարտությունն ի՞նչ կեղծ ուսմունքներից կարող է պաշտպանել ձեզ:
3. Խորհեցե՛ք հրաշքների դերի մասին մեր կյանքում, ինչպես նաև՝ տրամաբանության և առողջ բանականության: Դասարանում քննարկե՛ք, թե դուք ինչպես եք եկել Աստծո մոտ, և այդ գործոններից որը՝ հրաշքնե՞րը, թե՞ տրամաբանությունն է ավելի մեծ դեր խաղացել ձեր փորձառության մեջ (հնարավոր է՝ երկուսն էլ): Խորհեցե՛ք, թե այդ գործոններն ինչ դեր են խաղում ոչ միայն Աստծուն ընդունելու, այլ նաև ձեր հավատի աճի մեջ:
4. Խորհեցե՛ք ձեր հասարակության մասին: Ի՞նչ դաստիարակություն է ստացել մարդկանց մեծամասնությունը: Ինչի՞ն են նրանք հավատում: Այդ տեղեկատվության վրա հիմնվելով՝ մտորեցե՛ք, թե որ մեթոդն արժե ընտրել՝ նրանց վկայելու համար: Ինչպե՞ս շփվել այդ մարդկանց հետ՝ նրանց կրոնական զգացմունքները չվիրավորելու համար:

Դաս 13
Սեպտեմբերի 19-25

ՊԵ՞ՏՔ Է ԼՍԻ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 4.12, Սաղմոս 87.4-6, Հովհաննես 10.16, Հռոմեացիս 2.12-16, Հովհաննես 14.6, Հռոմեացիս 1.18:

Հիշելու համարը.

«Բայց նրան, որ կարող է ձեզ հաստատ պահել իմ ավետարանի և Հիսուս Քրիստոսի քարոզության համեմատ, այն խորհրդի հայտնության համեմատ, որ հավիտենական ժամանակներից լուռ պահված էր, բայց հիմա մարգարեական գրքերով հայտնվեց՝ հավիտենական Աստծո հրամանի պես, և հավատքին հնազանդվելու համար բոլոր հեթանոսների մեջ ճանաչվեց. Միմիայն մի իմաստուն Աստծուն, Հիսուս Քրիստոսի ձեռքով, նրան փառք հավիտյանս: Ամե՛ն» (Հռոմեացիս 16.24-26):

Ինչպես տեսնում ենք, Տերը օգտագործում է մարդկանց, որպեսզի Ավետարանի լուրը փոխանցի այլ մարդկանց: Սակայն միլիոնավոր մարդիկ մահացել են՝ այդպես էլ չիմանալով փրկության ծրագրի մասին: Իրականում երբևէ ապրած մարդկանց մեծ մասը չեն լսել փրկության պատմությունը և չեն իմացել բարի լուրն Աստծո շնորհի մասին, որ բացված է Հիսուս Քրիստոսում: Արդյունքում հարցեր են ծագում: Նախ՝ ինչպե՞ս կվարվի Աստված դատաստանի օրը այն միլիարդավոր մարդկանց հետ, ովքեր չեն ճանաչել Նրան: Երկրորդ՝ հույս կա՞ նրանց համար, ովքեր չեն իմացել փրկության ծրագրի համար:

Ոմանք պնդում են, որ փրկությունը գոյություն ունի միայն որոշակի քրիստոնեական հարանվանության շրջանակներում: Մյուսները, ընդհակառակը, համարում են, որ բոլոր կրոնները հավասար չափով բերում են դեպի Աստծուն և հավիտենական կյանքին:

Վերջապես ամենակարևորը, ինչի մասին հարկավոր է հիշել, այն է, որ Հիսուսը բացահայտել է Աստծո բնավորությունը: Սա ասում է

մեզ ողջ մարդկության հանդեպ Նրա սիրո և հնարավորինս շատ մարդկանց փրկելու՝ Նրա ցանկության մասին: Աստված արդարության Աստված է, և ամենուրք լսելի կլինի աղաղակը. «Արդար և ճշմարիտ են քո ճանապարհները, ով սուրբերի Թագավոր» (Հայտնություն 15.3):

Միաշաբթի **Սեպտեմբերի 20**

Մեկ ուրիշ անուն չկա երկնքի տակ

Որոշ քրիստոնյաներ համոզված են, որ կարող են փրկվել միայն նրանք, ովքեր լսել և ընդունել են Ավետարանը: Այդ մարդիկ, նրանց երբեմն անվանում են «բացառիկապաշտներ», համարում են, որ բոլոր ոչ քրիստոնեական կրոնները հորինված են մեղավոր մարդկանց կողմից, և դա ոչ այլ ինչ է, եթե ոչ բացահայտ ապստամբություն Աստծո դեմ: Այդ պատճառով նրանք համարում են, որ ոչ քրիստոնյաները չեն ստանա Հիսուս Քրիստոսի փրկարար շնորհը:

Այլ քրիստոնյաներ ավելի հեռուն են գնում իրենց ըմբռնման մեջ՝ պնդելով, որ գոյություն չունի փրկություն՝ իրենց հարանվանությունից և դավանաբանական ուսմունքից դուրս, անգամ մյուս քրիստոնեական կրոնների համար: Ըստ նրանց կարծիքի՝ այլ հարանվանությունները, իրենց տարբերիչ ուսմունքներով հանդերձ, դուրս են եկել Աստծո հոգածությունից, և նրանք հնարավորություն չունեն մուտք գործելու երկնային արքայություն: Օրինակ՝ 1302 թվականին *Unam Sanctam* կոնդակում Հռոմի Բոնիֆացիոս VIII պապը հռչակեց. «Փրկության համար միանգամայն անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր մարդ ենթարկվի Հռոմի Պապին»: Որոշ բողոքականներ նման մտքեր են արտահայտում իրենց հարանվանությունների վերաբերյալ:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 4.12-ը: Ինչի՞ մասին է խոսվում այստեղ, և մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ տեքստերը: _____

_____

_____

_____

Սուրբ Գիրքն այստեղ հստակ կերպով ասում է. փրկություն կա միայն Հիսուս Քրիստոսում, և երկնքի տակի ուրիշ ոչ մի անվան մեջ: Կարևոր է, սակայն, այս բառերում տեսնել ոչ ավելին, քան դրանք ասում են:

Պատկերացրե՛ք մի մարդու, ով գտնվում է հրո ճարակ դարձած շինության մեջ: Նա ծխից կորցրել է գիտակցությունը: Հրշեջները գտնում են նրան, փողոց են դուրս բերում և փոխանցում են բժիշկներին, ովքեր օգնություն են ցուցաբերում նրան: Տղամարդուն բերում են հիվանդանոց, և մի քանի ժամ անց նա գիտակցության է գալիս:

Մարդուն փրկել են, բայց նա չգիտի, թե ով է փրկել իրեն: Նույն կերպ բոլորը, ովքեր կստանան փրկությունը, կարևոր չէ՝ նրանք փրկվել են նախքան Քրիստոսի մարմնացումը, թե դրանից հետո, այդ պարգևը կստանան միայն Հիսուսի միջոցով, կարևոր չէ, թե նրանց լսե՞լ են Նրա անվան և փրկության ծրագրի մասին, թե՞ ոչ:

«Հեթանոսներից ոմանք, չիմանալով դա, երկրպագում են Աստծուն: Թեև կյանքի լույսը չի դիպել նրանց, թեև նրանք չգիտեին էլ Աստծո գրված Օրենքի մասին, սակայն նրանք լսել են Նրա ձայնը, որ նրանց կանչում էր բնության միջոցով, և արել են այն, ինչ պահանջում է Օրենքը: Բարի գործերը ցույց են տալիս, որ Սուրբ Հոգին դիպել է նրանց սրտերին, և նրանք ընդունվում են որպես Աստծո զավակներ» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 638):

Երկուշաբթի **Սեպտեմբերի 21**

Որքա՞ն բան է հարկավոր իմանալ

Վերադառնալով միաշաբթի օրվա մեր մտորումներին՝ մենք կարող ենք տեսնել, որ թեև Քրիստոսը միակն է, ով փրկություն է պարգևում, ոմանք համարում են, որ Քրիստոսի մասին խորը գիտելիքներ ունենալու անհրաժեշտություն չկա՝ այդ պարգևն ստանալու համար:

Դա չի նշանակում, որ փրկությունը հասանելի է առանց Քրիստոսի, բայց Աստված կարող է և ցանկանում է յուրաքանչյուրին օժտել պարգևներով՝ Քրիստոսի արժանիքների միջոցով: Գոյություն ունի կարծիք, որ նրանք, ովքեր երբեք չեն իմացել Քրիստոսի ու Ավետարանի մասին, բայց Սուրբ Հոգու ազդեցության ներքո զգացել են ազատագրման կարիքը և աշխատել են այդ ուղղությամբ, կփրկվեն: Անցյալ օրվա դասում Էլեն Ուայթի գրքից մեջբերումը հաստատում է այս միտքը: (Խորհեցե՛ք Հոբի և Մելքիսեդեկի մասին):

Հետևյալ տեքստերն ինչպե՞ս են հաստատում այդ միտքը:

Սաղմոս 87.4-6 _____

_____

Հովհաննես 10.16 _____

_____

Գործք առաքելոց 14.17 _____

_____

Գործք առաքելոց 17.26-28 _____

_____

Հռոմեացիս 2.12,13 _____

_____

«Որ նա ամեն մեկին իր գործերի պես հատուցումը կտա. նրանց, որ բարի գործերի մեջ են հարատևում, և փառք և պատիվ և անապականություն են որոնում՝ հավիտենական կյանք» (Հռոմեացիս 2.6,7):

Պողոսն այստեղ խոսում է այն մասին, որ ոմանք հավիտենական կյանքը կստանան քրիստոնեությունից դուրս՝ «խղճի համաձայն» ապրելու շնորհիվ: Խղճի օրենքներին հնազանդությունը, որ ներդաշնակ է Աստծո Օրենքի հետ և բարու և չարի տարբերության իմացությունը դատաստանի օրը կօգնի նրանց, ովքեր երբեք չեն լսել փրկության ծրագրի մասին: Այդ մարդիկ Սուրբ Հոգուն թույլ են տվել աշխատել իրենց սրտերի վրա:

Ինչո՞ւ մենք պետք է զգույշ լինենք ինչպես քրիստոնյաների, այնպես էլ ոչ քրիստոնյաների փրկության մասին դատողություններում:

Երեքշաբթի **Սեպտեմբերի 22**

Ունիվերսալիզմն ու պլյուրալիզմը

Որոշ մարդիկ հավատում են այն բանին, որ Աստված վերջում կփրկի բոլոր մարդկանց՝ անկախ այն բանից, թե ինչի էին նրանք հավատում և ինչպես էին ապրում: «Ունիվերսալիզմը» համոզմունք է այն մասին, որ բոլոր մարդիկ այնքան կապված են Աստծո հետ, որ նրանք կփրկվեն, անգամ եթե երբեք չեն լսել Նրա մասին և չեն հավատացել Ավետարանին: Հովհաննես 3.16-ում ասվում է. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը», իսկ ունիվերսալիստները համոզված են, որ եթե Աստված սիրում է բոլորին, Նա չի կարող թույլ տալ, որ թեկուզ մեկը կորչի: Հատկապես՝ եթե «կորչել» բառի տակ հասկանանք հավիտենական տանջանքները դժոխքում: Աստված ինչպե՞ս կարող է թույլ տալ, որ այն մարդը, ում Ինքը սիրում է, հավերժ այրվի: Այստեղ

մենք տեսնում ենք, թե ինչպես է մի կեղծ ուսմունքը (հավիտենական տանջանքներ) ծնում մեկ ուրիշը (ունիվերսալիզմ):

Ունիվերսալիզմին համանման ուսմունքը պլյուրալիզմի մասին խոսում է այն մասին, որ բոլոր կրոնները հավասար են և հավասար չափով բերում են Աստծո մոտ և դեպի փրկություն: Համաձայն այս տեսության՝ չկա այնպիսի կրոն, որն ավելի կատարյալ կլինի, քան մյուսները: Կալիֆոռնիայում մի եկեղեցու հովիվ գրել էր եկեղեցու կայքէջում, որ իր համայնքը «չի հավատում այն բանին, որ քրիստոնեությունը գերազանց է բոլոր մյուս կրոնական ուսմունքներից»:

Պլյուրալիստների համար հսկայական քանակությամբ կրոնական ծեսերն ու հավատալիքները, խորհրդանիշներն ու փոխաբերություններն իրենց հետևից բերում են լոկ մակերեսային տարբերություններ, որոնք թաքցնում են բոլոր կրոնների միասնական էությունը: Օրինակ՝ պլյուրալիստներն ընդգծում են, որ կրոնների մեծ մասը քարոզում է Աստծո և մարդկանց հանդեպ սիրո մասին, փոխհարաբերությունների ոսկի կանոնի և օրհնյալ կյանքի մասին ապագայում: Նրանք ասում են, որ բոլոր կրոնները, ըստ էության, սովորեցնում են միևնույն բանը: Նրանց կարծիքով՝ բոլոր ուսմունքները ճանապարհներ են առ Աստված, և քրիստոնեությունը մյուս ոչ քրիստոնեական կրոններից գերազանց համարելու փորձը շովինիզմ է և հպարտություն:

Աստվածաշունչն ի՞նչ է ասում ունիվերսալիզմի և պլյուրալիզմի մասին: Հովհաննես 14.6, Հայտնություն 20.14, 21.8, Դանիել 12.2, Հովհաննես 3.18, Մատեթոս 7.13, Բ Թեսաղոնիկեցիս 2.10: _____

_____

_____

_____

_____

Անկասկած, ինչպես ունիվերսալիզմը, այնպես էլ պլյուրալիզմը հակասում են Աստվածաշնչին: Ոչ բոլորը կփրկվեն, և ոչ բոլոր կրոններն են բերում փրկության:

Դուք ի՞նչ պատասխան կարող եք տալ նրանց, ովքեր պնդում են, որ քրիստոնեության մասին՝ որպես փրկության միակ ճշմարիտ ճանապարհի (տե՛ս Հովհաննես 14.6), հայտարարությունը հպարտություն է: Ձեր դասարանում կիսվե՛ք ձեր կարծիքներով:

Մեղավորները շնորհի կարիք ունեն

«Որովհետև Աստված իր Որդին չուղարկեց աշխարհ, որ աշխարհին դատի, այլ որ աշխարհը նրանով փրկվի» (Հովհաննես 3.17): Ողջ մարդկության համար ի՞նչ մեծ հույսի մասին է խոսվում այս տեքստում: Մենք ինչպե՞ս կարող ենք այս կարևոր ճշմարտությունն ընդունել մեր կյանքում: Այն ինչպե՞ս կարող է դրդել մեզ՝ քարոզելու այլ մարդկանց:

_____

_____

_____

Աստվածաշունչն ասում է, որ մենք ամենքս մեղավորներ ենք (Հռոմեացիս 3.23), և Աստված ցանկանում է, որ բոլորն ապաշխարեն (Գործք առաքելոց 17.30, 26.20, Բ Պետրոս 3.9) և փրկվեն (Ա Տիմոթեոս 2.4): Եդեմում՝ մարդու մեղանչելու ժամանակներից ի վեր և հետագայում էլ Աստծո նպատակն է մարդկությանը փրկել ոչնչացումից և հավիտենական մահից, որոնք մեղքի ու ապստամբության արդյունք են: Մեր հանդեպ Աստծո սիրո խորհրդանիշը հանդիսացող խաչից և մեզ փրկելու Նրա ցանկությունից բացի է՞լ ինչ ապացույց է հարկավոր մեզ:

Սակայն Աստվածաշունչը պարզորոշ խոսում է այն մասին, որ Աստված չի փրկի նրանց, ովքեր բացահայտորեն դեմ են ելնում Իրեն:

Կարդացե՛ք Ծննդոց 6.11-13, Հռոմեացիս 1.18, Բ Թեսաղոնիկեցիս 2.12, Հայտնություն 21.8, 22.15-ը: Ի՞նչ լուրջ նախազգուշացում ենք մենք գտնում այս տեքստերում:_____

_____

_____

_____

Աստված իսկապես սիրում է բոլոր մարդկանց, բայց հարկ չկա մոռանալու, որ բոլոր մարդիկ մեղավորներ են, ովքեր Հիսուսում հայտնված շնորհի կարիքն ունեն: Աստված կանչել է եկեղեցուն՝ քարոզելու աշխարհին շնորհի մասին բարի լուրը:

«Եկեղեցին, ըստ Աստծո մտահղացման, կանչված է՝ համագործակցելու Նրա հետ մարդկանց փրկության գործում: Այն ստեղծված է ծառայության համար, և նրա խնդիրն է՝ Ավետարանը տանել աշխար-

հին: Ի սկզբանե Աստծո ծրագիրն այն էր, որ եկեղեցին աշխարհում արտացոլեր Իր լիակատարությունն ու կատարելությունը: Հարկավոր է, որ նրա անդամները՝ այն մարդիկ, ում Նա խավարից դուրս բերեց դեպի Իր հրաշալի լույսը, դրսևորեն Նրա փառքը: Եկեղեցին Քրիստոսի շնորհի պահապանն է, և վերջին հաշվով նրա միջոցով պետք է անգամ «երկնքի իշխանություններին և զորություններին» բացվի Աստծո սիրո ողջ զորությունը (տե՛ս Եփեսացիս 3.10)» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 10):

Ինչպե՞ս կարող եք ինքներդ (ոչ թե ձեր եկեղեցու հովիվը, երեցը կամ սարկավագը) ավելի լավ սովորել «հայտնել նրա փառքը» կործանվող աշխարհին: Դա համար ի՞նչ է հարկավոր փոխել ձեր կյանքում:

Հինգշաբթի **Սեպտեմբերի 24**

Միսիոներական կոչ

«Տկարներին տկարի պես եղա, որ տկարներին շահեմ. ամենքին ամեն բան եղա, որ ինչևիցե մի քանիսին ապրեցնեմ: Այս անում եմ ավետարանի համար, որ նրան կցորդ լինեմ» (Ա Կորնթացիս 9.22,23): Ի՞նչ կարևոր սկզբունք է արտահայտում Պողոսն այս տեքստերում: Մենք ինչպե՞ս կարող ենք մեր կյանքում հետևել նման դիրքորոշման:

Տերն Իր իմաստությամբ ընտրել է մարդկանց, որպեսզի աշխարհին հասցնի ներման և փրկության լուրը: Աստված կանչել է տղամարդկանց և կանանց, չնայած իրենց թուլությանը, համագործակցելու Սուրբ Հոգու և հրեշտակների հետ: Իսրայելը Նրա մշտական «լույսն» էր Հին Կտակարանի ժամանակներում, բայց նրանք շատ հաճախ իրենց ճրագը թաքցնում էին գրվանի տակ (Մատթեոս 5.15), և իրենց ստացած օրհնությունները մնում էին Իսրայելի ներսում: Մյուսների հետ կիսվելու փոխարեն նրանք իրենց պատնեշում էին ժողովրդից՝ վախենալով «պղծվելուց»:

Համաշխարհային առաքելության համար Աստծո հաջորդ ծրագիրը կարելի է անվանել «աղի մեթոդ»՝ գնացեք և «բոլոր ազգերին աշակերտեցեք» (Մատթեոս 28.19, Մարկոս 16.15,20, Գործք առաքելոց 1.8): Քրիստոնեական առաքելության պատմությունը բավականին պատմություններ գիտի անձնուրաց միսիոներների մասին, ովքեր

աղ են եղել աշխարհի համար և Ավետարանն են քարոզել առանձին մարդկանց, եկեղեցիների և անգամ ողջ ազգերի:

Սակայն, ինչպես և հին Իսրայելում, շատ հաճախ այդ հաջողություններն աննկատ էին մնում իրենց՝ միսիոներների և ողջ առաքելության թերությունների պատճառով: Այդ թերությունները կարող են լինել. 1) առաքելության վատ ծրագրումը և խնդրի անբավարար ըմբռնումը, 2) առաքելության նեղ ուղղվածությունը, օրինակ՝ շեշտադրումը միայն կրթության, առողջ կենսակերպի, աղետների ժամանակ աջակցություն ցուցաբերելու կամ էլ զարգացման վրա, որը կարող է ստվերել հիմնական խնդիրը՝ Ավետարանի քարոզը, 3) անբավարար ֆինանսավորումը կամ էլ աշխատողների անբավարար թվակազմը, 4) միսիոներների հարմար չլինելը խնդրի կատարման համար, 5) Ավետարանի քարոզի արգելքը որոշ երկրներում:

Իհարկե, ոչ ոք չի ասել, որ հեշտ է լինելու: Մենք գտնվում ենք մեծ պայքարի առաջին գծում, և թշնամին անելու է ամեն հնարավորը, որպեսզի քայքայի մեր միսիոներական ծրագրերը՝ ինչպես մեր հարևաններին, այնպես էլ մոլորակի ամենահեռավոր անկյուններում քարոզելու համար: Բայց մենք չպետք է հիասթափվենք, քանի որ զորության մի քանի հրաշալի խոստում ունենք: Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված երկրի վրա կհասնի Իր նպատակին: «Այնպես էլ պիտի լինի իմ բերանից դուրս եկած խոսքը, նա պիտի պարապ հետ չդառնա ինձ մոտ, այլ կատարի իմ ուզածը և հաջողվի նրանում, ինչի համար որ ես նրան ուղարկեցի» (Եսայիա 55.11):

Ուրբաթ Սեպտեմբերի 25

Հետագա ուսումնասիրության համար.

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Ձիթենյաց սարի վրա» գլուխը, 633, «Քրիստոնեական կրթության հիմունքները» գրքից՝ «Արագ նախապատրաստում» գլուխը, 335, «Վկայություններ Եկեղեցու համար» գրքից, հատոր 6՝ «Աշխատանքը տարածվում է արտասահմանյան դաշտերում» գլուխը, 23:

Նոր Կտակարանում երկու հունարեն բայ է օգտագործվում, որոնցից առաջ գտնվում են «ամբողջ», «ողջ» բառերը, և որոնք նշանակում են քրիստոնեական առաքելության համաշխարհային տարածում. «բոլոր աշխարհում (kosmos)»՝ Մատթեոս 26.13, Մարկոս 14.9, 16.15-ում և «բոլոր տիեզերքում (oikomene)»՝ Մատթեոս

24.14-ում: Այն դեպքում, երբ «kosmos» բառը՝ ընդհանուր եզրույթ կարգավորված տիեզերքի սահմանման համար, կարելի է թարգմանել «մոլորակ» բառով (Նոր Կտակարանում հանդիպում է մոտավորապես 150 անգամ), «oikomene» բառը առավելապես վերաբերում է այս աշխարհի բնակիչներին:

«Բոլոր աշխարհն» ինչպե՞ս էին պատկերացնում առաջին քրիստոնյաները: Քրիստոսի խաչելությունից մի քանի տարի անց նրանք արդեն եղել էին ժամանակակից Կիպրոսի, Լիբանանի, Սիրիայի, Թուրքայի, Մակեդոնիայի, Հունաստանի և Իտալիայի տարածքներում: Գոյություն ունեն ապացույցներ, որ նրանք քարոզել են Ռուսաստանի հարավային մասում (հին Սկյութական պետություն) հյուսիսում, Եթովպիայում՝ հարավում, Հնդկաստանում՝ արևելքում և Իսպանիայում՝ արևմուտքում:

Հավատո՞ւմ էին առաջին քրիստոնյա միսիոներները, որ պետք է Ավետարանը քարոզեն ողջ աշխարհին: Համաձայն Գործք Առաքելոց գրքի՝ Սուրբ Հոգին Պենտեկոստեի օրը՝ քրիստոնեական եկեղեցու «ծննդյան օրը», սկսեց հռչակել «Աստծո մեծամեծ բաները» տարբեր ազգերի, աշխարհագրական տեղանքների և էթնիկական խմբերի ներկայացուցիչներին (Գործք առաքելոց 2.5-11): Եկեղեցու գոյության առաջին իսկ օրերից քրիստոնյաները համոզված էին, որ իրենց առաքելությունը պետք է ընդգրկի ողջ աշխարհը: Եթե այն ժամանակ կար այդպիսի հասկացություն, ապա որքա՞ն ավելի լուրջ պետք է լինի այն այսօր:

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցը բացառիկության և հպարտության քրիստոնեական ուսմունքի մասին: Պարտադի՞ր է, որ «բացառիկություն» բառը նշանակի «հպարտություն»: Եթե՝ ոչ, ապա՝ ինչո՞ւ:
2. Պենտեկոստեի ժամանակներից ի վեր «բոլոր աշխարհ» հասկացությունը լցվել է նոր իմաստով: Քրիստոսի հրամանը՝ «գնացե՛ք և աշակերտեցե՛ք բոլոր ազգերին (Մատթեոս 28.19), անփոփոխ է մնացել Նրա եկեղեցու համար՝ ընդհուպ մինչև Նրա երկրորդ գալուստը: Հայտնություն 14.6-12-ում գրի առնված երեք

հրեշտակների պատգամն ինչքանո՞վ է վերաբերում Մեծ հանձնարարությանը:

3. Դուք ինչպե՞ս կպատասխանեք հետևյալ հարցին. եթե մարդիկ կարող են փրկություն ստանալ՝ անգամ լսած չլինելով Ավետարանի մասին, ինչո՞ւ վտանգի ենթարկել կյանքը և ժամանակ ծախսել՝ նրանց քարոզելու համար:

Առողջության բանաձևեր, որոնք կարող են փոխել ձեր կյանքը

Այս գիրքը գործնական խորհուրդներ է տալիս առողջության հարցերի շուրջ՝ դրա ամբողջական ըմբռնմամբ: Դրանում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է այն բանի վրա, թե ինչպես պետք է ապրել՝ խուսափելու համար սրտի հիվանդություններից, քաղցկեղից, շաքարային դիաբետից և այլ ահեղ հիվանդություններից: Ելնելով ժամա-նակակից գիտության տվյալներից և բժշկական փորձարկումներից՝ հեղինակներն ընթերցողին կյանքի և սեփական անձի հանդեպ հավասարակշռված համընդգրկուն մոտեցում են առաջարկում:

Ընտանեկան կյանքի ձեռնարկ

Իմաստությամբ և սիրով ամրապնդված ընտանիքը կարող է դիմագրավել մեր օրերի կենսական փոթորիկներին: Հասարակության մեջ շատ կարծրատիպեր են ձևավորվել, որոնք թույլ չեն տալիս ընտանիքին զարգանալու և աճելու: Դա կարող է լինել փոխադարձ բռնությունը, թյուրըմբռնողությունը և պարզապես հիմնարար սկզբունքների չիմացությունը:
Իսկ ահա ընտանեկան երջանկությանը նպաստող ճիշտ սկզբունքների իմացությունը և կյանքում դրանք կիրառելը շատ ու շատ խնդիրներից կազատագրի ընտանիքը:

Երևակայության սահմաններից անդին

Այս գրքում մենք կհետազոտենք Տիեզերքի և մեր մոլորակի վրա կյանքի որոշ հիրաշքներ: Բայց, որ ավելի կարևոր է. մենք կհետազոտենք մեր սեփական գոյության հիրաշքը: Մարդկության պատմության առաջին իսկ օրերից մարդիկ փորձել են գտնել կյանքի ամենագլխավոր հարցերի պատասխանները: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք մենք գնում: Մեզ հետ ի՞նչ է լինելու մահից հետո:
Սկսե՛ք այս ճանապարհորդությունը՝ ձեռք բերելու համար ոչ միայն կյանքի հիրաշքները, այլ նաև ինչ-որ առավել զարմանահրաշ մի բան՝ սեր՝ երևակայության սահմաններից դուրս:

Առողջության բանալիները

Հիպերտոնիա, շաքարախտ, կաթված, քաղցկեղ, սթրես... Մարդիկ պատրաստ են իրենց ողջ միջոցները տալ, որպեսզի վերադարձնեն կորցրած առողջությունը: Բնությունն առաջարկում է լավ ինքնազգացողություն ունենալու համար ավելի պարզ և անվճար ուղիներ: Օգտագործեք դրանք, և դուք կբացահայտեք ձեզ համար գեղեցկության, ներդաշնակության և երկարակեցության աշխարհը:

Սեր և օրենք

Այս աշխատությունն իր մեջ ներառում է Աստվածաշնչի գրեթե բոլոր այն տեքստերի վերլուծությունը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Արարչի հանդեպ սիրո և Նրա պատվիրանները պահելու հետ:
Ընդհանուր գծերով լուսաբանվում են նաև մեր երկրի կրոնական կյանքում տեղի ունեցող վերջին զարգացումներն ու հեռանկարները բիբլիական մարգարեությունների լույսի ներքո:
Նախատեսված է Սուրբ Գրքի հետազոտողների, եկեղեցական սպասավորների և շարքային ուսումնասեր քրիստոնյաների համար:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2015 թվականի երրորդ եռամսյակ

ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ

Բյորգե Շանտց

Գլխավոր խմբագիր՝	Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝	Մերինե Աթոյան
Վերստուգող՝	Ալվարդ Մադոյան
Գրական խմբագիր՝	Գեղեցիկ Մարտիրոսյան
Համակարգչային ձևավորող՝	Կորյուն Կակոյան